



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5 1895

Մ Ա Յ Ի Ս

1895 № 5

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երևս

1 ՄԱՆՈՒԷԼԵԱՅ, ԼԵՒՈՆ	579 Սասուն (բանաստ.)
2 ԼԵՐՄՈՆՏ՝ Յ. ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆ,	581 Սցիրի (պոէմա):
3 ՋԱՏՈՂԱՐԱՍՍԿԻ	596 Գիւղի վարժուհին (պատմած.բ):
4 ԵՍՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷՔՍԱՆԳՐ	602 Իմ օրագրից (բանաստ.):
5 ՋՈՒԳԵՐՄԱՆ, Հ.	603 Բարեկամի խոստովան.քր (պատմ.):
6 ԼԵՌՆԵՑ	612 Խորունկ երկն.քից (բանաստ.):
7 ՆԵՄԻՐՈՎՅՉ ԳԱՆՁԵՆԿՈ	613 Չաղոկաւէթի երգիչները: (պատմ.):
8 ՇԱՆԹ	620 Երգ (բանաստ.):
9 ՆՈՑՆԸ	621 Սիմֆոնի (բանաստ.):
10 ՋԱՔԱՐԵԱՆՅ, ԹԱԳԷՈՍ ԲԺ	622 Ժառանգականութիւն:
11 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ	632 Փոթորիկներ (բանաստ.):
12 ՆՈՑՆԸ	633 Լացող ուռնի (բանաստ.):
13 ՍԷՅԼԱՆ	634 Սասուն (վերջ):
14 Գ. ՎԱՐԳԱՆԵԱՆՅ.	663 «Հողալին և անձն. իրաւ. Հին-Հա- չաստանում»:
15 Ա. Ա.	667 «Պատմութ. հաղ լրագրութեան» և «Հարց պարբերական մամուլը»:
16 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻՔ.	681 Ժամանակակից Տեսութիւն (Հակա- կան խնդիրը):
17 ՍԱՐԳՍԵԱՆ, ԳԱՐԵԳԻՆ.	710 Մոսկւայի հաղ ուսանողութիւնը:
18 ՓԱՓԱՋԵԱՆ, Վ.	715 Նամակներ Անդրխալից III:
19 ԽՍՐ.	726 Լուրեր:

ՏԵՂԵԿԱՏՈՒ և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротиняна, Гол. пр., д. № 41.

1895

Handwritten text in the left margin, possibly bleed-through from the reverse side of the page. The text is difficult to decipher but appears to be a list or series of entries.

Main body of the page containing very faint, illegible handwritten text. The text is spread across the page and is mostly unreadable due to fading and bleed-through.

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5 1895

Մ Ա Յ Ի Ս

1895 № 5

ԵՐՔԵՐԱԳԴ ՏԱՐԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊՈՐԱՆ Ա. Գ. ՌՕՏԻՆԻԱՆՆԻ

Типографія М. Д. Ротиніанна, Гол. пр. д. № 41.

1895

89400

LIBRARY OF THE UNIVERSITY OF TORONTO

1895

Дозволено цензурою. Тифлясь, 28 Апрелья, 1895 г.

1895

Handwritten notes in the left margin, including the word "Книжка" and other illegible text.

Մ Ա Ս Ո Ւ Ն

Լ Ե Ւ Ո Ն Մ Ա Ն Ո Ւ Է Լ Ե Ա Ն Յ Ի

Սե սե ամպեր կուտակ կուտակ
Սասնոյ լիւներ բըռնեցին.
Որոտացին փայլակ-կաջճակ,—
Սասուն, օ վնձ քո գըլխին!

Սասուն ընկաւ իրարանցում,
Հուր ու գընդակ տեղացին,
Արեան գետեր են չորգանում,—
Սասուն, օ վնձ քո գըլխին!

Սասուն բարնկեց կըրակ ու բոց,
Խաղաղ գիւղեր վառեցին,
Ամենուրեք շիւան՝ ու կոծ,—
Սասուն, օ վնձ քո գըլխին!

Առեանգում, ալան-թալան,
Ծեր ու մանուկ—սրի տակին.
Քիւրդ ու տաճիկ դարձան գաղան,—
Սասուն, օ վնձ քո գըլխին!

Արտրիճ Սասուն պըրէժ գոռաց,
Նըշան գըրեց ոտխին.

Բայց թընդանոթ սարից թընդաց,—
Սասուն, օ վնչ քո գըլխին!

Թըշտա Սասուն ցարձաւ աւեր,
Շատ քիչերը մընացին,
Ընկան հազար ու մէկ քաջեր,—
Սասուն, օ վնչ քո գըլխին!

Լըսեց Եւրոպ — և զարհուրեց,
Գառի կանչեց տաճիկին.
Բայց սուտ, կաշառք — ուինչ չօգնեց,—
Տաճիկ, օ վնչ քո օրին!

Թիֆլիս, 1895 թ., 27 ապրիլի:

Մ Յ Ի Ր Ի

Մ Ի Խ Ա Ի Լ Լ Ե Ր Մ ՈՆ Տ Ո Վ Ի

Թարգմ. ՅԱԿՈԲ ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆՅԻ

I

Քանի մի տարի սորանից առաջ,
Այնտեղ, ուր, գրկւած քոյրերի նման,
Քուրն ու Արագւան, հանելով շառաչ,
Խառնուում են իրար—կար մի մենաստանն:
Անցորդը գեռ աչժամ սարի յետևից
Կը տեսնէ քանդուած վարդասի սիւներ
Եւ աշտարակներ—մնացած պարսպից—
Եւ եկեղեցու բարձր կամարներ:
Բայց էլ չէ ծխում աչժամ նոցա տակ
Բուրւառի միջից խունկ անուշահոտ.
Արեղաները—քաղցր, ներդաշնակ,
Այլ ևս չեն երգում խորին գիշերով:
Աչժամ ալևոր միայն ծերունին—
Կիսամեռ պահնակն աւերակների—
Մռուացւած մահից և թէ մարդկանցից,
Սրբում է փոշին շիրմի քարերից,
Որոնց գրբերը, գեռ ևս չը մաշւած,
Պատմում են անցեալ մեզ փառքի մասին.
Եւ նաև ինչպէս, իւր թաղից ճնշւած,

Այս ինչ թագաւորը այս ինչ տարին
Իւր ժողովուրդը յանձնեց ռուսներին:

*
* *

Եւ ասուածային օրհնութիւնն եղաւ
Վրաստանի վըր: յ:
Նա ճոխանում էր այն ժամանակից
Իւր այգիների հով սուերներում.
Սւինների յետև բարեկամական՝
Թշնամիներից
Նա ահ չէր կրում:

II

Մի անգամ մի ռուս զօրապետ
Սարերից զէպի Թիֆլիս էր գնում,
Մի գերի մանուկ տանում էր իւր հետ.
Նա տկարացաւ,
Նա չը զիմացաւ
Երկար ուղիի նեղութիւններին.
Հազիւ կը լինէր հինգ-վեց տարեկան,
Թոյլ էր և ձկուն եղեգի նման
Եւ, ինչպէս այժեամ, երկչոտ ու վայրի:
Բայց տանջող ցաւը նրա հոգում նորից
Չարթեցրեց նախնեաց անվեհեր ոգին,
Առանց տրտունջի, անխօս տառապում.
Նոյն իսկ թոյլ հատաչ մանկան բերանից
Երբէք չէր լսում,
Մնունդը նշանով նա միշտ մերժում էր,
Եւ հանդարտ, հպարտ նա մեռանում էր:
Մի ծեր վարդապետ, խղճալով նորան,
Մենաստանի մէջ տըւեց ապաստան.
Եւ այնուհետև նա այնտեղ մնաց,
Բարեկամական միջոցով փրկւած:
Օտար մանկական զւարճութիւններին՝

III

Դու եկար այստեղ, որպէս զի լսես
 Խոստովանանքս.— շնորհակալ եմ ես.
 Աւելի լաւ է, որ մէկին պատմեմ
 Եւ այդպէս կուրծքս թեթևացնեմ:
 Բայց մարդկանց չարիք ես չեմ պատճառել,
 Ուստի և մեծ շահ չպէտք է ստանաք,
 Թէ իմ գործերին դուք տեղեկանաք.
 Իսկ հոգին արդեօք կը լինի պատմել:
 Ես քիչ եմ ապրել— այն էլ իբր գերի.
 Այդպէս երկու կեանք ես կը փոխէի
 Միայն մէկի հետ— բայց արկածալի,
 Եթէ որ միայն կարողանայի:
 Կեանքումս գիտէի մի խորհուրդ միայն,
 Միայն մի բուն կիրք.
 Ապրում էր իմ մէջ նա որդնի նման,
 Նա կրծեց հոգիս,
 Նա այրեց հոգիս.

Հեղձիկ խուցերից և աղօթքներից
 Նա իմ ցնորքները տանում էր հեռի...
 Դէպի աշխարհը այն հըրաշալի
 Պատերազմների և տազնապների,
 Որտեղ ամպերում թաղնւում են ժայռերն,
 Ուր մարդիկ ազատ են իբր արծիւների:
 Եւ ես այդ կիրքը սնեցի վշտով
 Եւ արտասուքով— խաւար զիշերը.
 Այժմ երկրի սուաջ և երկնքի տակ
 Խոստովանում եմ նորան բացարձակ,
 Եւ ներողութիւն ես չեմ ազերսում:

IV

Ծերուկ, շատ անգամ լսել եմ, որ ինձ:
 Փրկել ես մահից, և ինչո՞ւ համար:
 Ես մեծացել եմ, որպէս փոթորկից

Խլած մի տերև, միայնակ ու մնայլ
Այս մենաստանի մուժ պատերի մէջ—
Հոգով երեխայ,
Բախտով արեղայ:

Ես և ոչ որին չեմ կարողացել
«Հայր», «մայր» սրբազան խօսքերն ասել:
Ի հարկէ, ծերուկ, դու ուզում էիր
Այդ քաղցր բառերից ես օտարանում.
Զուր. նոցա հնչիւնն ինձ հետ է ծնել:
Տեսնում էի ես, ամենքը ունին
Հայրենիք. և տուն, ծնող, բարեկամ,
Իսկ ես զուրկ էի ոչ միայն նորանից,
Այլ և հարազատ մի գերեզմանից:
Եւ այն ժամանակ—առանց մի կաթիլ
Անգամ արցունքի—ես երգումն արի,
Որ երբ և իցէ, գոնէ մի վայրկեան,
Թէև անծանօթ—բայց լմէ հարազատ—
Ուրիշի կրճքին սեղմեմ վշտահար

Կուրծքս բոցավառ:

Աւանդ, այն ցնորքներն քացսն անհետ
Իրանց կատարեալ գեղեցկութեան հետ.
Եւ ինչպէս օտար երկրում ապրել եմ,
Իբրև որբ և սարուկ՝ կը մեռնեմ նրանց հետ:

V

Գերեզմանը ինձ չէ սարսափեցնում.
Այնտեղ, ասում են, տանջանքը չաւերժ
Քրնում է սառն, խոր լրոուժեան մէջ.
Սակայն ցաւ է ինձ կեանքից բաժանել.
Ես դեռ ջահիլ եմ... զգացել ես արդեօք

Ուրախ և անհոգ

Պատանեկութեան վառվռուն ցնորքներ,
Թէ չես զգացել և կամ չես յիշում,
Թէ ինչպէս սիրում և ատում էիր,

Եւ ինչպէս արագ էր սիրտդ բազխում,
 Երբ աշարակից դու նայում էիր
 Կանաչ դաշտերին և արեգակին.
 Աւր թարմ է օդը և որտեղ երբեմն
 Պատի ճեղքւածում—խորը տարածւած—
 Անյայտ աշխարհի սիրասուն յրդին,
 Խիստ փոթորիկից ահաբեկ եղած,
 Կուչ եկած նստում է փոքր ազաւնին.
 Թող թէ աշխարհի գեղեցկութիւնը
 Բնաւ մարել է այժմ քեզ հաւար:
 Թոյլ և ալեւոր, դու վաղուց արդէն
 Յանկութիւններից էլ օտարացար:
 Ի՞նչ կայ որ, ծերունկ, բայց ապրել ես դու.
 Մոռանալու բան ունիս աշխարհում;
 Բայց—ապրել ես, ծերունկ, ես էլ
 Կարող էի նոցնպէս ապրել:

VI

Ուզում ես պատմեմ, թէ ի՞նչ տեսայ ես,
 Երբ ազատ էի. ճոխ, շքեղ դաշտեր,
 Բլուրներ—ծառերի պսակով ծածկւած,
 Որոնք տեղ աւ տեղ շուրջն էին բուսել
 Եւ, իբր եղբայրներ, շրջապատ բռնած,
 Կանաչազգեստ, թարմ սօսափում էին.
 Տեսայ կուտակւած ես մնայլ ժայռեր
 Եւ նոցա միջին մանչող վտակներ.
 Երկնայինիցը պարզեատրւած՝
 Թափանցեց նոցա միաքը իմ հոգին:
 Վաղուց է, որ այդ ժայռերը, արդէն
 Քարէ դրկերը օդի մէջ պարզած,
 Սպասում են միշտ իրար հանդիպին.
 Անցնում են արագ օրեր, տարիներ—
 Չեն միանալու նոքա չաւիտեան:
 Տեսայ ես բարձր լեռնաշղթաներ,

Հրաշալի, գիւթիչ, ինչպէս ցնորքներ,
 Երբ արշալոյսին, վաղ առաւօտեան,
 Լուս ծխում էին ինչպէս սեղաններ
 Նոցա գագաթներն կապոյտ երկնքում:
 Եւ փոքրիկ ամպեր իրար յետեից,
 Թողնելով գաղանի՝ գիշերասեղին,
 Գէպի արևելքն էին դիմում,
 Ինչպէս հեռաւոր նրկիրներից
 Գաղթող երամբ թեւաւորների:
 Տեսայ ես և հետն, մէզի միջից
 Ձիւնի մէջ վառւող ալմաստ նման՝
 Ալեհր, անշարժ կովկասու շղթան:
 Եւ թեթեւ էր սիրտս. ինչից, — չգիտեմ.
 Ինձ մի գաղտնի ձայն ասում էր ներսից,
 Որ այնտեղ ես էլ ապրել եմ երբեմն,
 Եւ անցեալը իմ յիշողութիւնից
 Նորից պարզ, պայծառ ներկայացաւ ինձ:

VII

Եւ յիշեցի ես տունս հայրական,
 Մեր կիրճը, նաև հովում շրջակայ
 Յրեած առւելներ.
 Ես լսում էի և երեկոցեան
 Տուն վերադարձող երամակների
 Խուլ հնչիւններ
 Եւ հեռու հաջոց ծանօթ շների:
 Ես յիշում էի և թուխ ծերերին՝
 Իմ հայրական տան շինութեան դիմաց՝
 Պայծառ, լուսնկայ գիշերւայ ժամին՝
 Լուրջ հայեացքներով իրար մօտ նստած:
 Յիշում էի և պատեանների փայլն
 Կողքիցը կասրած ձիգ խէնչալների.
 Եւ ողջն առաջիցս երազի նման
 Խաւար շարքերով անցան, վազեցին:

Հապա իմ հանցրս. նա ինձ երևաց
 Կուլի զգեստով՝ ինչպէս կենդանի.
 Եւ յիշում էի հնչիւն զրահների,
 Հրացանի փայլը թիկնից կախ արած,
 Եւ նորա հպարտ, հայեացքն անվահեր.
 Ջահիլ քոյրերիս անոյշ երգերի,
 Օրորիս վերայ, հնչիւնի ձայներ
 Եւ ճառագայթներ քաղցր աչերի:
 Այնտեղ կրճի մէջ վազում էր վտակ՝
 Այն անքան էլ խոր,
 Բաց խիստ ազմկող.

Գնում էի այնտեղ կէս օր ժամանակ,
 Եւ զիտում էի ծիծեռնակներին
 Ոսկէ աւազի վերայ խաղալով,
 Երբ որ, մօտալուս անձրևից առաջ,
 Եփում էին ջրին քնքոյշ թևերով:
 Եւ յիշեցի ես մեր տունը խաղաղ,
 Հայրական օջախ,
 Ուր պատմում էին երեկոները,
 Թէ ինչպէս էին մարդիկ կեանք վարում,
 Անցած, գնացած ժամանակներում,
 Երբ որ աւելի ճօխ էր աշխարհը:

VIII

Ուզում ես պատմեմ թէ ի՞նչ եմ արել,
 Երբ ազատ էի.— Ես ապրում էի.
 Եւ կեանքս առանց իմ այդ խնդալից
 Երեք օրերի՝—քո ծերութիւնից
 Աւելի տխուր ու մռայլ կը լինէր:
 Վաղուց ես արդէն մտադիր էի
 Մի նայել հեռու ընկած դաշտերին,
 Իմանալ արդեօք սիրուն է աշխարհն,
 Իմանալ արդեօք ինչո՞ւ ենք ծնւում՝
 Ազատութեան թէ մութ բանտի համար.

Փայլելով օձը իւր թեփերով հարթ՝
 Քարերի միջին սողում էր հանդարտ
 Բայց վախը երբէք հոգիս չէր ճմլում.
 Ինքս մարդկանցից օտար—իբր գազան՝
 Սողում էի, թագչում ես օձի նման:

X

Ինձնից շատ ներքև մի հեղեղ, ձորում
 Սաստիկ չորդացած, աղմուկ էր հանում,
 Եւ հարիւրաւոր չուզած ձայներին
 Նոյա գոռոցներն նմանում էին:
 Հասկանալի էր առանց խօսքերի
 Նոցա զրոյցը վազուց ինձ համար,
 Եւ նոցա գանգատը անլռելի
 Եւ քարերի հետ կռիւը յամառ:
 Երբեմն յանկարծ նա հանդարտում էր
 Եւ գիշերային լուսթեան միջին,
 Երբեմն աւելի ուժգին հոտում էր:
 Եւ ահա վերև, միգապատ երկնում
 Թռչունների քաղցր լսեցին երգեր.
 Ներկեց արշալոյսը արևելքում,
 Եւ զեփուռն էլ թաց շարժեց տերևներ:
 Մաքուր ու թարմ օդ նորից շնչեցին.
 Քնած, ծաղիկներն, և նոցա նման
 Քլուխս բարձրացրի օրաց յանդիման.
 Նայեցի շուրջս և, ուղիղն ասած,
 Ես սարասփեցի—սպառնող անդնդի
 Մօտն էի պառկած,

Որտեղ ալիքը պտոյտ անելով
 Ունում էր սաստիկ կատաղի ձայնով.
 Այնտեղ ցած էին իջնում ժայռերի
 Աստիճանները: Բայց միայն չար ոգին
 էր այնտեղ քայլում,

Երբ թոթափելով երկնքից—կորաւ
 Երկրի խորքերում:

XI

Եւրջս ծաղկում էր Աստուծոյ այգին.
 Միաժամագոյն բոյսերի զարդերն
 Դեռ պահում էին արտասուենքների
 Պարզ, բիւրեղակերպ երկնային հեռքերն:
 Խաղողի որթի խիտ զանգուրները
 Ոլորում էին ծառերի միջին.
 Գեղեցկանալով, ինչպէս հարսները,
 Պայծառ կանաչով լայն տերևների,
 Նոցա վրայ, անգին օղերի նման,
 Կախւած էին լի և շքեղ ճիթեր,
 Եւ մերթ նստոտում էին նրանց վրայ
 Թռչնիկների վախկոտ երամներ:
 Ես գեանի վըրայ նորից պառկեցի
 Եւ աջն կախարդիչ, օտար ձայներին
 Ես նորից սկանջ դնել սկսեցի.
 Նոքա, կարծես թէ, թփերի միջին
 Շըշընջում էին երկնի և երկրի
 Անհասանելի զաղտնիքի մասին.
 Եւ ձոխ բնութեան ողջ ձայնը նրա հետ
 Չուլում էր անհետ:

Միայն չէր լսում փառարանութեան
 Հանդիսի ժամին մարդու հպարտ ձայնն:
 Ամեն բան ինչ որ զգում էի այնժամ՝
 Այն մտքերի այժմ չկայ հեռքն անգամ.
 Բայց կը ցանկայի քեզ նորից պատմեմ,
 Որպէս զի դարձեալ դէթ մտքով ապրեմ:
 Երկնակամարը այն առաւօտեան
 Այնպէս պարզ էր և հարթ ու կապուտակ,
 Որ, եթէ յանկարծ ծախրէր մի հրեշտակ,
 Կարող էր տեսնել սուր աչքը նորան:

Հոգով, աչքերով եւ նորա միջին
 Խորասուզեցի. և մինչև կէսօր
 Տօթը ցնորքներս խալաւ չցրեց,
 Մինչև ծարաւը տանջել չսկսեց:

XII

Դէպի առակը եւ այնժամ բարձրից—
 Զգոյշ բռնելով ձկուն թփերից,
 Սալից սալ, ինչպէս որ կարողացայ,
 Սկսեցի իջնել, և օտիս տակից
 Երբեմն փոքրիկ քարերը պոկելով՝
 Յաճ էին գլորում: Նորա յետեից
 Փոշին պըտըտում էր սիննի ձևով.
 Եւ խուլ շառաչով ցատկելով վերան
 Գետի ալիքը կլանում էր նորան:
 Անդունդի ծայրից կախածէի ես,—
 Զօրեղ է ազատ ջահիլութիւնը,
 Եւ մահն սոսկալի էր թւում այնպէս:
 Թեք բարձրութիւնից հէնց որ ցած իջայ՝
 Փչեց երեսիս զովը ջրերի.
 Եւ ազահ ընկայ ալիքի վերայ:
 Յանկարծ լսում եմ մեղմ ձայն քայլերի.
 Եւ, վայրկենապէս թփում ծածկելով,
 Ակամայ, անյայտ մի դողից բռնած,
 Երկչոտ հայեացքս բարձրացրի կամաց
 Եւ սկսայ լսել եւ ազահ կերպով.
 Այնպէս անարւեստ, մօտի՛ ու մօտիկ
 Հնչում էր ձայնը ջահիլ վրացուհու,
 Այնպէս կենդանի, ազատ ու քաղցրիկ,
 Կարծես սովոր էր նա արտասանել
 Բարեկամական միայն անուններ:
 Խոր տպաւորւեց իմ մտքի միջին
 Եղանակը այն հասարակ երգի,
 Եւ հէնց հասնում է գիշերը մթին՝
 Երգում է ինձ այն մի անյայտ ոգի:

XIII

Բռնած իւր գլխին ջրի ամանը,
 Նեղլիկ շաւիղով ջահիլ վրացուհին
 Իջնում էր դէպի այն ջրի ափը.
 Երբեմն սահում էր քարերի միջին,
 Անճարպիկութեան վրայ ժպտալով.
 Եւ աղքատ էին նորա շորերը,
 Թեթև գնում էր նա, յետ զցելով
 Չաղրայի երկար ծալածքները:
 Նորա դէմքը և կուրծքը — ամուռայ
 Տօթը ծածկել էր ոսկեգօծ սոււերով.
 Եւ ասպ էր շնչում թէ իւր շրթունքից
 Եւ թէ այտերից:

Այնքան թափանցող նորա աչքերը
 Սիրոյ գաղանիքով այնպէս լի էին,
 Որ իմ վառվռուն բոլոր մտքերը
 Իմ մէջ շփոթեցին:

Յիշում եմ միայն ձայնը ամանի,
 Երբ ջուրը նրա մէջ լցւում էր դանդաղ.
 Մի շշուկ ևս — ոչինչ աւելի:
 Երբ ես զարթնեցի իմ քնից խաղաղ
 Եւ երբ արիւնը անցաւ իմ սրտից՝
 Նա հեռացել էր արդէն այնտեղից.
 Եւ թէև հանդարտ, բայց շնորհալի
 Իւր բեռան տակին՝

Գնում էր թեթև իւր Կաշտավայրի
 Հպարտ թագաւոր սօսիի նման
 Չով մէգի միջին:

Ո՛չ շատ հեռաւոր մի ժայռի կողքին
 Իրարից մօտիկ երկու խրճիթներ
 Իրրև բարեկամ Կուրս էին եկել.
 Նոցանից մինի հարթ կտուրի վրայ
 Գարձրանում էր վեր ծուխը կապուտակ.

Ես այժմ, կարծես,
Տեսնում եմ ինչպէս

Կամացուկ բացւեց մի փոքրիկ դռնակ,
Եւ մի քիչ յետոյ նա փակւեց դարձեալ:
Գիտեմ, չես կարող, ճերմակ, հասկանալ
Դու իմ այս վիշտը, իմ այս թախիծը.
Թէ հասկանալիր—ափսոսս կը գար.
Այն բոպէների յիշողութիւններն
Իմ մէջ թող ինձ հետ մեռնեն յաւիտեան:

XIV

Ճնշած գիշերւայ նեղութիւններից՝
Պառկեցի հովում, և ականացից
Աչքերս փակեց բերկրալի քունը.
Եւ երազի մէջ տեսայ ես նորից
Ջահիլ վրացուհու չքնաղ պատկերը.
Մի զարմանալի ու քաղցր վշտով
Վերստին տանջւեց կուրծքս լցւելով:
Երկար ջանք էի անում հառաչել—
Եւ ես զարթնեցի: Լուսինը արդէն
Փայլում էր երկնում զարդ լուսաւորած,
Եւ միայն մի ամպ, ինչպէս իւր որսին,
Հետևում էր նրան ազան, գրկաբաց:
Լուռ էր երկիրը: Տիրում էր խաւար:
Հեռու շղթացի ձիւնոտ զազաթներն
Փայլփլում էին իմ առաջ պայծառ,
Կարծես արծաթեաց գեղեցիկ ծոպեր:
Եւ զարնըում էր վաակն ափերին,
Թոյլ վատւող կրակը ծանօթ խրճիթում
Երբեմն զոզում էր, երբեմն հանգչում,
Ինչպէս փայլուն աստղ կէս գիշերային
Հանգչում է յանկարծ կապոյտ երկնքում:
Այնտեղ բարձրանալ ցանկանում էի,
Բաց, սակայն, ինչպէս կը ջանդգնէի:

Հողուս միտումն էր միմիայն մի հատ—
 Գնալ հայրենիք երկիր հարազատ:
 Եւ ես յաղթեցի քաղց ու ամնջանքին
 Եւ, հեռակելով ուղիղ իմ շաւղին,
 Երկուս ու անձայն սկըսայ վազել.
 Բայց շուտով, մթին անտառի խորքում,
 Ես ըսկըսեցի արդէն մոլորել,
 Կորցնելով լեռներն նրա յեռեւում:

XV

Իզուր յուսահատ ձեռքով կատաղած
 Պոկում էի ես բաղեղով խճճւած
 Փոքրիկ փըշենին.

Շուրջս ամեն տեղ անտառ ու անտառ,
 Որ հեռզհեռէ դառնում էր խաւար
 Եւ սարսափելի:

Իւր միլիօնաւոր սև-սև աչքերով
 Ամեն մի թփի ճիւղերի միջից
 Գիշերւայ ահեղ խաւարն էր նայում:
 Գլուխս սաստիկ պտոյտ էր գալիս,
 Սկըսայ ծառի վըրայ բարձրանալ.
 Բայց մինչև անգամ երկնքի ծայրում
 Նոյն անտառն էր անվերջ տարածւում.
 Եւ այն ժամանակ, գետին ընկնելով,
 Ես կատաղաբար շատ հեկեկացի
 Եւ, խոնաւ սողի կուրծքը կրծելով,
 Տաք արտասուքներ այնտեղ թափեցի:
 Բայց, հաւատա ինձ, մարդոց օգնութեան
 Ես կարօտ չէի: Ես նոցա համար
 Յաւիտեան, ինչպէս վայրենի գազան,
 Դարձել էի օտար:
 Եւ բուպէական ճիշը կամ աղմուկ
 Թէ դաւաճանէր՝

Ձեռքս թոյլ լեզուս, երգւում եմ ձերուկ,
 Իսկոյն կը պոկէր:

(Վերջը չաջորդ անգամ)

ԳԻՒՂԻ ՎԱՐԺՈՒՅԻՆ

(Մանթիս պատմածը)

ՉԼԱՏՈՎՐԱՏՈՒԿԻ

Թարգմ. Յովհաննէս Մէդնիկեանի

Դա մի բոլորովին պատահական դէպքի բերմունք էր: Ես ճանապարհորդում էի Ա. նահանգի մի խուլ գաւառում. գիւղերից մէկում դործով ստիպւած էի իջեանել տեղական քահանայի տանը: Ցէր-տէրը ինձ ընդունեց զանջիւճը, ուր պատրաստւած նախաճաշի շուրջը նստած էին մի քանի մարդիկ (Ցէր հօր տօնն էր), այն ինչ կանացի սեռը նստած էր հարևան սենեակում ինքնատեղի շուրջը և կիսաբաց դռնով մէկ մէկ աչք էր գցում մեր կողմը. մենք էլ փոխադարձաբար նոյնն էինք անում: Յանկարծ աչքիս երևաց մի ծանօթ դէմք... Ասուած իմ... որքան վաղուց էր այդ... ես նրան ճանաչում էի մայրաքաղաքում... դա մի գզւելի, մտառը արարած էր այնպէս քնքոյշ, այնքան նուրբ, որ մենք բոլորս էլ վախենում էինք չլինի թէ նա յանկարծ խորտակւի կեանքի հէնց առաջին հարւածից... Այն ժամանակ հազիւ լրացած էր նրա 16-րորդ տարին: Յետոյ նա մի ինչ որ յանկարծակի կերպով անյայտացաւ և ոչոք այլևս չէր կասկածում, որ նա ընկել է... այդ կարծիքին էին բոլորը, նոյն իսկ նրա մօտ ծանօթները, անի քաշեցին, լաց եղան ու հեռո՛հեռո՛ւ մոռացան:

Մոռացայ նրան և ես. մինչդեռ նրա հրաշալի, խոշոր ու սև աչերը իրքան յաճախ նայում էին ինձ քնքուշ, անմեղ գզւանքով: Իսկ փոքրիկ ձեռքը իրքան երկար հանգչում էր երբեմն իմիս մէջ մերթ սառելով, մերթ զողալով ու կրակւելով կուսական սրտի

զգացմունքի զեղումից: Այո, դա մեր իրար տաճած անսահման ու կատարեալ հաւատի զգացմունքն էր, որով երբեմն երկուսս էլ լցւած էինք լինում: Սակայն մինչդեռ նա կանացի բուն սիրոյ բոլոր կրակով այտպէս ջերմ ու քաղցր հաւատ էր տաճում ինձ, ես նրա վրա դարձեալ նայում էի, ինչպէս մի զգւելի, նազելի մանուկի, շարունակ վախենալով, որ չլինի թէ յանկարծ ընկնի ու խորտակւի հէնց իմ աչքիս առաջ...

Նախ քան նրա մեր աչքից անդարձ չքանալը, ես սեղանիս վրա գտայ մի փոքրիկ տոմսակ, որ միայն հետեւեալ հինգ տողն էր պարունակում «ես գնում եմ. ցմօտայուտ տեսութիւն...»

Շատ լաւ էի հասկանում ես այդ խօսքերի միտքը. նա սպասում էր ինձ. բայց ես... ես չգնացի նորա մօտ, ինձ համար ցաւալի և տխրալի էր միայն, որ այդպէս շուտով իրագործւեց այն, ինչ ես ենթադրում էի. զգւելի, նուրբ, նազելի արարածը խորտակեց, և այն էլ ինքը, ինչպէս մի մանուկ, որ դիմում է գլխապատառ դէպի մի անորոշ նպատակ... Ես դեռ սպասում էի որ նա կը վերադառնայ, սակայն չվերադարձաւ, մինչև անգամ այլևս ոչ մի տող էլ չգրեց ինձ: Սկզբից երբեմնակի յիշելուց նրան, մենք տխրութեամբ ուսներս էինք շարժում, իսկ յետոյ բոլորովին մոռացանք:

Այժմ հազիւ կարողացայ ճանաչել նրան. թուխ արևակէզ դէմքը, փոքր ինչ կոշտացած ձեռքերը, կոշտացած, բայց ոչ այնքան նիհար, որքան ջղոտ. նա յիշեցնում էր պառաւ ազջիկներին. դէմքը մի քիչ կոպտացած՝ ոչ շատ սառն էր և ոչ էլ այնքան խիստ, իսկ աչերում նկատում էր մի ինչ որ նախկին, կուսական-մանկական կրակ: Այժմ երեւի կը լինէր 25—27 տարեկան, բայց աւելի մեծ էր թուում: Նա ուրախ էր և Տէր-աէրի տանը իւր տան պէս էր զգում իրեն:

Երեւի նա նկատեց ինձ, որ սկսեց աւելի ու աւելի ջաճախ դիտել ինքնաւուրի մօտ նստած երիցակնոջ լայն կազմւածքի ետեւից: Երբ մեզ ծանօթացրին, նա մի թեթեւ գունատեց, բայց ցոյց չուեց թէ ճանաչում է ինձ, ես էլ նոյնպէս հարկաւոր չըհամարեցի յայտնել... յետոյ նա շուտով գնաց:

Երկու օրից ես նրա մօտն էի՝ դպրոցում. դա մի հին, ցուրտ

ու խոնաւ եկեղեցական տնակ էր: Մենք իրար հետ վարւում էինք ինչպէս վաղեմի ծանօթներ: Ես նստած էի նրա փոքր, շատ փոքր սենեակում, ուր դարակների վրա շարւած էին կիսամաշ գրքեր, մի փոքրիկ բորբոսնած պատուհան, մի փայտէ սեղան, մի քանի հիւսովի աթոռներ, անկողին, որ փուլած էր տախտակներից չարմարեցրած մահճակալի վրա—ահա բոլորը: Պա նրա խուցն էր, կուսական առաջատուր նրա, որի քնքուշ ոտքերը մի ժամանակ սահում էին ջահազարդ դահլիճների ու հիւրասենեակների շատակի վրա, որը մի ժամանակ թաղւած էր հայրական տունը զարդարող ճոխութեան ու փարթամութեան մէջ:

Նա ամբողջ ժամանակը փոքր ինչ շփոթւած դրութեան մէջ էր, և այդ ծածկելու համար աշխատում էր ջղային արագութեամբ ինչ հասնի խօսել՝ մի առարկայից միւսը թռչելով:

Այդպէս մենք երկար խօսում էինք խուսափելով անցեալի չիշողութիւններից. մի անգամ միայն ես նկատեցի.

—Ես շատ ուրախ եմ, որ պատահեցի ձեզ. ՚ի հարկէ այդ բոլորը... ծանր է ձեզ համար... բայց էլի լաւ է որ կենդանի էք, մինչ զեռ մենք բոլորս ձեզ չքացած էինք համարում...:

Նա լուռ էր:

—Եւ դուք չէք ախտոտւմ անցեալը. հարցրի ես:

—Ո՛չ, պատասխանեց նա կարմրելով և աչքերը ցած գցելով, երբեմն միայն. ասենք այդ առաջ էր... երբեմն այն, ես տխրում էի, բայց ինչի համար, ինքս էլ չէի կարող որոշակի ասել:

Նա արագութեամբ աչքերը դարձրեց ինձ և էլի նորից վայր խոնարհեց, իսկոյն բռնելով կուրծքը, կարծես մի ինչ որ բան ծըշում էր այնտեղ...

—Իսկ այժմ. այժմ լաւ է ինձ համար—ասաց նա մի բոպէ լռելուց յետոյ—ես ընտելացել եմ. այնքան արդէն մօտ բարեկամներ ունիմ շուրջս. չէք հաւատում—հարցրեց նա մի ինչ որ փորձական եղանակով:

—Չգիտեմ, ինչպէս ասեմ ձեզ—պատասխանեցի ես—գուցէ... բայց այդ բոլորը այնքան անսովոր է մեր ժամանակում, այնքան... և այն էլ զիւղ տեղ, յետ ընկած, խաւար և այդ... այդ աղքատութիւնը:

—Օ՛ այդ բոլորը... բոլորը այնպէս չէ, ինչպէս կարծում էք—
 իսկոյն վրաբերեց նա—այդ բոլորը նոյնքան սիրելի է, նոյն-
 քան լաւ, որքան և սարսափելի: Ասենք գուցէ այդ միայն ինձ
 հասկանալի լինի, ես սովորել եմ... այն այդ հասկանալու համար
 պէտք է այստեղ լինել ու այստեղ ապրել, այստեղ գործել... սա-
 կայն երբեմն ես շատ էի տխրում... ինչի՞— չգիտեմ... և չէի էլ աշ-
 խատում գտնել դրա պատճառը. իսկոյն յամառութեամբ աշխա-
 տում էի փոխել այդ տրամադրութիւնս... այնուհետև աւելի ու
 աւելի սակաւ սկսեց պատահել... ես էլ հօ պառաւել եմ. արդէն
 ծերացած աղջիկ եմ դարձել... սառել եմ. այն, ես միանձնուհի եմ...
 ինձ համար այլևս չկայ այստեղ...

Նա բոլորովին գունատեց ու լռեց:

—Է՛հ, բաւական է այդ մասին. ոչինչ բան է.—ես վաղուց
 արդէն ուրիշ կեանքով եմ ապրում այստեղ—շարունակեց նա—իմ
 ուրախութիւնս—իմ «ջահեղներիս» ուրախութիւնն է, երջանկու-
 թիւնս—նրանց երջանկութիւնը:

Մենք բաժանուեցինք:

Մի օրից ես կրկին նրա մօտն էի:

Ըստ երևոյթին այժմ նա աւելի զսպում էր իրեն և աշխա-
 տում էր խաղաղ ու սառնասիրտ երևալ. ինչպէս ինձ թւում էր,
 նա աշխատում էր երևալ ճշմարիտ որ իբրև «միանձնուհի», բայց
 երբ ես վերկացայ գնալու, նա ասաց ինձ սաստիկ շփոթւած ու
 կարմրած:

—Դուք ինձ փչացնում էք... իմ մէջ վերականգնում է... այն
 նախկին տրամադրութիւնը... ես վախում եմ:

—Այդ ի՞նչ տրամադրութիւն է, ինչիցն էք վախենում:

—Չգիտեմ... այնպէս ցանկանում եմ տեսնել ձեզ, խօսել ձեզ
 հետ... լսել ձեր ձայնը, ձեր հայեացքները, երբ խօսում էք այն հին
 անցեալի, այն բոլոր անցած գնացածի մասին...

Նա բոլորովին շփոթեց և չվերջացրեց խօսքը: Գուցէ այն-
 պէս թւեց նրան, որ ես իրեն սխալ կարող էի հասկանալ:

Շուտով պէտք է ճանապարհ դուրս գալի. գնացի մօտը հրա-
 ժեշտ տալու. այնտեղ հիւր էին գիւղի երիտասարդները՝ պատա-
 նիներ և օրիորդներ, նրանք բոլորը հէսց դպրոցի սենեակումն էին

նստած. նա հիւրասիրում էր դրանց կազմինով, քաղցրաւենիներով, թէյով և ուրախ-ուրախ խօսում, ծիծաղում էր հետները: Ակըն-յայտ էր, որ նա սիրում էր դրանց բոլորին, «իրեններին» ինչպէս ինքն էր անւանում, որոնց ուրախութիւնը և վիշտը այնքան մօտ էր նրա սրտին և թանգ նրա համար: Երևի նրան զիւր եկաւ, որ ես այդ հասարակութեան մէջ գտայ իրեն, որ իրենց մօտ այդպէս լաւ է, ուրախ, սիրալիր. և ուրախ էլ դիմաւորեց նա ինձ:

Մենք շարունակում էինք միասին կատակներ անել, ծիծաղել: Հիւրերը շուտով գնացին և երկուսս մենակ մնացինք: Ես յայտնեցի, որ վաղը պէտք է ճանապարհ դուրս գամ. յանկաբժ նա բոլորովին շփոթւեց:

—Այդպէս շուտով... արդէն... և երկամբ ժամանակով—հարցրեց նա ցրւած:

—Այո, հաւանական է. դժբաղդաբար մայրաքաղաք եմ գնում: Նա կարմրեց, շրթունքները դողացին, յանկաբժ արագ վեր կացաւ և ուզում էր դուրս գնալ, բայց հասաւ. արցունքները դուրս հոսեցին աչքերից և նա ծածկելով դէմքը հեկեկաց:

—Ինչի եկաք դուք այստեղ. ինչի պատահեցիք ինձ—չնշում էր նա—դուք ինձ թունաւորեցիք. դուք բերեցիք ձեզ հետ այն բոլոր թոյնը, վաղուցւայ... նա աննկատելի կերպով վարակեց իմ արիւնս, իմ սիրտս. ես ամեն միջոց ձեռք առայ, որպէս զի ոչնչացնեմ նրան. ո՛չ, անկարող եմ. ես մենակ եմ, նորից մենակ. դուք բոլորդ թողեցիք ինձ... մոռացւած եմ. մոռացւած... ձեր ինչ հոգսն եմ ես, ես հօ ձեզ համար մեռած եմ... այդպէս... ինչի ուրեմն, ինչի կենդանացրիք իմ մէջ այն բոլոր անցեալը:

Այդպէս երկար խօսում էր նա հեկեկալով, ես տարակուսել էի, չգիտէի ինչ ասեմ:

Յետոյ փոքր ինչ հանգստացաւ:

—Դուք ՚ի հարկէ, Ասաւած գիտէ, թէ ինչեր կը մտածէք իմ մասին—ասաց նա:

—Ո՛չ, ո՛չ, ես հասկանում եմ ձեզ, շապկեցի հանգստացնել:

—Հասկանում էք—հարցրեց նա կրկին կասկածելով—դէհ, ինձ համար այժմ բոլորը մէկ է. վաղը դուք չէք լինի, և ես նորից կը լինեմ այնպէս, ինչպէս ձեր զալուց ատաջ էի. այդ բոլորը

բոլորը կը չքանայ ինչպէս մի տխուր անցեալի տխուր յիշողութիւն...
Նա երկար նստած էր գլուխը կախած, ձեռքերը ծնկներին թողած,
մտախոհ ու անշարժ, առանց նայելու ինձ:

Ես վերկացայ դնալու և պարզեցի նրան ձեռքս—ներեցէք—
սկսեցի ես,—որ ինձ վիճակեց ակամայից յիշեցնել ձեզ...

Նա յանկարծ բռնեց իմ ձեռքս, իւր սառը ձեռքերով սեղմեց
և ուղղելով ինձ իւր փայլուն, աղերսալից և համարեա չուսահատ
աչերը մեղմ ու լարւած շնչաց.

—Մնացէք այստեղ... մեզ մօտ... դուք հօ ազատ էք... իսկ մենք,
հրքան կը սիրէինք մենք ձեզ...

Ես ապշած լուռ էի:

—Մնացէք, մնացէք—կրկնում էր նա ընդհատ-ընդհատ և հա-
մարեա մեքենայաբար:

Ձգում էի, ինչպէս հեազհեաէ թուլանում էին նրա՝ իմ ձեռքս
սեղմած մատները, ես կամաց քաշեցի ձեռքս և կմկմացի,—ներե-
ցէք, չեմ կարող... գործեր ունիմ... այդ բոլորը այնքան զարմանալի է...

Այանչիս հասաւ կառքիս զանգակի ձայնը:

—Ներեցէք կրկին—ասացի ես:

Նա դեռ էլի լուռ ու անշարժ նստած էր գլուխը կրծքին
խոնարհած:

—Գուցէ դուք ինքներդ կարողանաք գալ այնտեղ... մեզ մօտ.
դուք այնտեղ նորից կը թարմանաք... թեթև կը լինի. ճշմարիտ,
մտածէցէք... դուք նորից կը ջահելանաք. ասում էի ես կմկմալով և
ինքս էլ չհասկանալով ասածիս միտքը:

Նա բարձրացաւ տեղից, ուղղեց—զունաթափ, բացց այտերով
և հպարտ հայեացքով նայելով դէմքիս՝ պարզեց իւր ձեռքը և սառ-
նութեամբ արտասանեց.

—Ե՛հնաք բարև:

Այո՛, դա կրկին նոյն «միանձնուհին» էր:

Ես դուրս եկայ: Անցաւ նրանից չետոյ երկու տարի, ես նորից
մոռացայ նրան... և անձ դուք ակամայ յիշեցնել աւելք... այն տար-
օրինակ բաներ են պատահում մեր երկրում և կարծես այդ բոլորը
միայն և միայն մեզ մօտ էլ հէնց հնարաւոր են:

ԻՄ ՕՐԱԳՐԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴԻՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

Քո վարդ շրթունքից ջերմ համբույր քաշած,
Կուրծքըս ալեկոծ ոսկի յոչսերով,
Ահա, իմ հոգեակ, ուրախ, սրբոտաբանց
Նորից նետում եմ ես ինձ կեանքի ծով...

Թող գոռ ալիքներ իմ շուրջըս եռան.
Միշտ անյաղթ կը մնայ իմ սիրող հոգին!
Միայն այդ ծովում, փարոսի նման,
Դու լուսաւորիք իմ մռայլ ուղին...

1894 թ. Մոսկւա.

ԲԱՐԵՎԱՄԻ ԽՈՍՏՈՎԱՆՔԸ

Հ. ԶՈՒԳԵՐՄԱՆԻ

Գերման. թարգմ. Մկրտ. Նալատարդեան

Փառք Աստծուն, սիրելի տիկին, որ կարող եմ վերստին ձեզ մօտ նստել զրուցաթոռի վրա: Տօների դժոխքը անդորրուած է և դուք կարող էք ունեն զնեյ ինձ քանի մի վայրկեան:

Ախ, ծննդեան այս տօները: Կարծում եմ թէ մի չար ոգի դիտմամբ է հնարել այս ամենը ամուրիներին տանջելու նպատակով, մեզ մեր ընտանեգուրկ գոյութեան ամայի և չուսահատ կացութիւնը ապացուցելու համար: Որովհետեւ այն, ինչ որ ուրիշների համար երանութեան աղբիւր է, մեզ համար տանջանք է:

Ի հարկէ, անկասկած, մենք ամենքս միայնակեցութեան չենք դատապարտուած, մեզ համար էլ է ծաղկում բերկրանքը երբ մարդս ձգնում է ուրիշներին բաղդաւորելու և սրանով է իսկ մարդու հոգին հրճում, — սակայն՝ բաշխուած երջանկութեան իսկական վայելումն թիւնաւորուած է մեզ համար մի տեսակ հեզնական անդարարձով դէպի մեզ, քան թէ այն ցանկութեան, այն դառնակրկիծ ափսոսանքի պատճառով, որը ես կ'անւանեմ կամովին ամուսնութեան վիշտ իբրև հակդիր ծննդավայրի ի դձ կոչուած խօսքին:

Ինչո՞ւ չեկայ ես սիրտս բանալու ձեր առաջ, ո՞վ կարեկից հոգի, դուք որ այնպիսի վեհութեամբ առատապէս մտիթարութիւն էք բաշխում, այն ինչ ձեր սեռին պատկանող միւս մասը քաղցրակը-

ծու (douceureux) ակնարկութիւններով է խայթում. այն միակ պատճառով, որ դրանում մի բայց կայ: Գիտէք թէ ինչ է ասում Շպայդելը իր «Միայնակեաց ճնճղուկներ» կոչւած զեղապատում զրոյցի մէջ, որը, գուշակելով դուք հոգեկան կացութիւնս, զրկել էիք ինձ համար տօնի երրորդ օրը: «Ըսկական ամուրի», ասում է նա, չի ցանկանում մխիթարւած լինել, նա կամենում է, երբ նա տարաբաղտ է, վայելիլ գոնէ իր չար ճակատագիրը:

Շպայդելի նկարագրած «Միայնակեաց ճնճղուկից» զատ, կայ ամուրիների մի այլ տիպար ևս—ընտանիքի բարեկամը: Ես այս ասելով չեմ պատկերացնում երբէք առաջս մի այնպիսի անձնաւորութիւն, որը տարածանութիւններ է գցում ընտանիքներում, որը իր նենգամիտ հայեացքում դաւաճանութիւն է թաքցնում և առաքիառք տեղաւորում է ասպնջական շարկի տակ. ևս խօսում եմ այն «բարի քեռու», հայրիկի վաղեմի դասընկերի մասին, որը իր ծնկների վրա խաղացնում է երեխային և մայրիկի համար թերթոններ է կարդում ամօթխածաբար բաց թողնելով նրա միջից թեթեամիտ նկարագիրները:

Ես ճանաչում եմ անձնաւորութիւններ, որոնք նւիրում են իրանց ամբողջ կեանքը այն ընտանիքի օգտին, որի բարեկամութիւնն են վայելում. ես ճանաչում եմ անձնաւորութիւններ, որոնք շրջում են կողքէ-կողք, առանց ցանկութեան, զաղոնաբար պաշտած մի սիրուն կնոջ հետ:

Դուք կասկածում էք այս մասին: Ախ, այո՛, այս ասանց ցանկութեան խօսքն է, որ վիրաւորում է ձեր լսելիքը: Շատ կարելի է, որ չէք սխալւում: Բոլոր սրտերի խորքում, նոյն իսկ ամենաանդորներինը, գոյութիւն ունի մոլեգին ցանկութիւն. սակայն—խնդրեմ ասածս լաւ հասկանաք—այս ցանկութիւնը շղթայակապ է Թոյլ տւէք ինձ պատմել, ի հաստատութիւն ասածիս իբրև օրինակ, մի խօսակցութիւն, որ տեղի ունեցաւ, մէկէլ օրը, Սուրբ Սեղբեստրոսի երեկոյնի երկու ծեր, շատ ծեր անձնաւորութիւնների միջև: Ի՞նչպէս լսեցի ես նրանց խօսակցութիւնը. այս մի զաղանիք է, որը կը ներէք ինձ պահել, և, խնդրում եմ ձեզ, շտաբածէք ինչ որ պատմելու եմ ձեզ այս բոպէիս: Սկսեմ ուրիմն:

Երևակայեցէք թէ անցքը պատահում է մի բարձրաուստաղ:

հինաւուրց կարասիներով կահաւորւած դահլիճում, որը լուսաւորւում է առաստաղից կախած խիստ ցոլուն մետաղեայ լամպարի մեղմ լուսով և այն լամպարը ծածկւած է կանաչադոյն լուսամփոփով—ինչպիսին գործ էին անում մեր հայրերը մինչև վառելանաւթի գտնելը. բոցից զոչացած կոնուսը ընկնում է ճերմակ սիւռոցով ծածկւած մի կլոր սեղանի վրա, որտեղ դարւած են տարեմուտի զիշերը պատրաստուելու պունչի (punch) համեմները—այն ինչ, հէնց մէջտեղում, տարածւած են լամպարից կախած ձէթի քանի մի շիթեր:

Կանաչ լուսամփոփի շաքի տակ կիսով չափ մթին մէջ թօղւած այն ալիւորները—վաղուց ի վեր անհետացած դարւայ խղճալի աւերակները—նստած էին: Երկուսն էլ, կբւած և զողզոջուն, ջաւել էին իրենց տկար և տարիներով խամրած աչքերը իրանց առաջ: Սրանցից մէկը, տանաէրը, մի զինուորական էր,—և նրան մի անգամ տեսնելը բաւական էր հասկանալու համար իր անկող ու կիպ-կպած փողպատից, կէս սափրած և սրածայր բեղերից, խոժոռած ունքերով պատերազմականի կերպարանքից. սա երկու ձեռքով բռնել էր, իբրև անութ փայտ (béquille) զլորուն բազկաթռուի ղեկը, որի մէջ նա կծկւել էր, այս անձնաւորութեան մէջ ամեն բան անշարժ էր, բացի ծնոտները, որոնք շարունակ շարժւում էին յաւիտենապէս որոճմունքի համար:

Միւսը՝ առաջինի մօտ սոփայի վրա նստած, բարձրահասակ, մի մարդ էր լղար, փիլիսոփայի լայն ձակտով, նեղ ուսերով, որոնց վրա բազմած էր անկիւնաւոր գանգը: Նա շատ թեթև ծուխ էր արձակում հազիւ աւկայծող ծխամորձից: Սրա քաղաքակիրթ և ցամքած դէմքի հաղարաւոր խորշոմները, ձիւնափայլ մօրուքով կրկալած, թաքցնում էին իրենց յետևում մի մեղմ և քնքոջ ժպիտ, որը յատուկ է միայն աշխարհային վայելքներից հրաժարուող ծերունիներին:

Երկուսն էլ լուռ էին: Այսպիսի խորին անդորրութեան միջոցում լսելի էր միմիայն այրուող ձէթի թեթևակի ճարձատումն և ծխամորձի մէջ ծխուող նիկոտինի թուլիկ մրմուռը: Անա դահլիճի մթին խորքում պատի ժամացոյցը հնչեցրեց խրպոտ ձայնով տասնումէկերորդ ժամը:

«Հէնց այս ժամին նա սովորութիւն ունէր պունշ պատրաստել, ասեց մտածող ձակատ ունեցող մարդը: Քնքոյշ էր նրա ձայնը և մի փոքր զեղզեղուն:

«Այն, հէնց այս ժամին էր», կրկնեց միւսը: Սրա ձայնը անգիւր էր, որի մէջ, կարծես թէ լսելի լինէր վաղեմի հրամանատուի բարձրագոյ պատուէրների արձագանդը:

«Ձէի կարող երևակայել թէ կեանքն առանց նրան այսպէս տխուր կը լինէր», շարունակեց առաջին խօսակցողը:

Տանտէրը գլխով նշանացի արեց և նրա ծնոտները վերսկսեցին իրենց որոճումն:

«Նա մեզ համար քառսուն չորս անգամ է պունշ պատրաստել Ս. Սեղբեստրոսի տօնին», պատասխանեց միւսը:

«Այն, ուղիղ քառսուն և չորս տարի է, որ ես Բերլինում եմ բնակում, յաճախում եմ այս տունը», ասեց ծեր զինւորը:

— Անցեալ տարին, այս միջոցներում, շարունակեց առաջինը, մենք բաւականին բաղրաւոր էինք միասին: Նա, այնտեղ, բազմութուի վրա էր նստած և Պօլի անդրանիկ զաւակի համար զուլպա էր գործում: Նա շտապում էր, որովհետև, ասում էր նա, պէտք է մէջ գիշերից առաջ աւարտել և նա աջողեց վերջացնել իսկապէս Յետոյ մենք խմեցինք և բոլորովին հանգիստ հոգով խօսակցեցինք մահւան մասին—և երկու ամսից չետոյ նա մեզնից բաժնեց:— Դու զխոթես հօ, որ ես մի մեծ հեղինակութիւն եմ շարադրել «Պաշտօնի անմահութեան»—Unsterblichkeit der Idee—մասին: Դու երբէք չտիրեցիր այն հեղինակութիւնը: Տես, ինձ համար էլ անհանդուրժելի է նա այն օրից ի վեր, երբ նշանաճդ մեռաւ: Աշխարհս չունի այլ ևս մի գրոշի արժողութիւն ինձ համար:

—Այն, հրաշալի կրնամարդ էր նա, ասեց ամուսինը: Նա միշտ լաւ է հոգացել ինձ, և երբ զինւորական պաշտօնս հարկադրում էր ինձ առաւօտեան ժամը հինգին զարթնել, նա միշտ ինձնից առաջ էր լինում զարթնած հսկելու համար, որպէս զի սուրճը համեղ պատրաստէր: Սակայն նա ևս ունէր իր պակասութիւնները, երբ, օրինակի համար, սկսում էր քեզ հետ փիլիսոփայութիւններ անել—օօ:

—«Դու իսկի չես հասկացել նրան», քրթմնջեց միւսը, և սրտ

չբժուկներին մի ծամածուծիւնը արտայայտեց իսկոյն և եթ զսպած բարկութիւնս:

Սակայն իր բարեկամի վրա յառած երկարատե նայածքը մեղմ ու տխուր էր, կարծես թէ իր խիղճը մի գաղտնի սխալմունքի պատճառով քամահարելիս լինէր սրան:

*
* *

Ասիր, Ֆրանց, ստիպւած եմ պատմել քեզ մի բան, որը վաղուց ի վեր չարչարում է ինձ և որը չեմ կարող գերեզմանիս մէջ հետս իջեցնել:

Վեհ, ինչ ես այդչափ քաշուում, ասեց տանտէրը վերցնելով երկար չիբուխը, որը յենած էր գլորուն բազկաթուռի դէմ:

—Մի անգամ մի դէպք պատահեց չկնոջդ և իմ միջև... մի բան...:

Մեր զինուորը վար զցեց երկար ծխամորճն և անթարթ ու լայն բացած աչքերը շառեց իր բարեկամի վրա:

«Հանաք մի՛ անիր, դոկտոր, արտասանեց նա վերջապէս:

—Դժբաղտաբար ես վերին ստիճանի լուրջ եմ խօսում, Ֆրանց, պատասխանեց սա: Քառսուն տարուց ասելի է, որ այս գաղտնիքը պահում եմ և ժամանակ է արդէն, որ սրա մասին քեզ յայտնեմ:

—Կը կամենայիր, շատ կարելի է, ասել, որ կինս ինձ խաբէր է. գոչեց միւսը զայրագին ձայնով:

Ձեռն ամաչուում, Ֆրանց, ասեց բարեկամը անուշ և զգածուած ձայնով:

Ալևոր զինորը քանի մի անորոշ խօսքեր մումուաց և ծխամորճը կրակեց:

«Այ, նա անարատ էր ինչպէս երկնաբնակ հրեշտակը, շարունակեց միւսը: Յանցաւորը դուն ես, ես եմ: Ասիր, այժմ քառսուն երեք տարին լրացած է, դուն Բերլին կանչեցիր սպարապետի պաշտօնով և ես համալսարանում պրոֆեսոր էի: Այն ժամանակ մի կատաղի լոթի էիր, դու լաւ գիտես այդ:

—Հ'ըմ, արտասանեց տան տէրը բարձրացնելով դողդոջուն ձեռքը իր բեղերի ձայրերը ոլորելու համար:

—Այն ժամանակներում կար մեծ-մեծ սևորակ աչքերով և ճերմակ ու մանրաշար ատամներով մի գեղեցիկ դերասանուհի... չիշնում ես դա նրան:

—Յիշում եմ ու այդպէս. նա կոչում էր Յիանկա և ծերունու ցոփակեաց դէմքի վրա ցոլաց թեթև ժպիտը:

«Նրա մանրաշար սպիտակափայլ ակուքները լաւ խածնել զիտէին սակայն, հաւատացնում եմ քեզ:

—Դու կնոջդ խաբեցիր և նա կասկածեց այն մասին: Սակայն նա չբողոքեց և կսկիծը իր մէջ գաղտնիք պահեց: Դու բան չըհասկացար, այն ինչ ես նկատեցի: Մօրս մահւանից յետոյ նա առաջին կինմարդն էր, որին ծանաչել եմ: Նա իբրև մի շողշողուն ասող մուտք գործեց կեանքիս մէջ և հէնց այդ շողուն ասողը տեսնելու նպատակով աչքերս դէպի նրան էի ուղղում: Ես համարձակեցի նրան իր արտմութեան պատճառը հարցնել: Նա ժպտեց և պատասխանեց թէ տակաւին տկար է փոքր ինչ. որովհետև, մտաբերում ես երևի, որ քո Պօլ զաւակը քանի մի օր առաջ աշխարհ էր եկել:

«Սուրբ Սեղբեսարոսի զիշերը հասաւ. ես սովորաբար գալիս էի այստեղ ժամը ութին: Նա նստած ասեղնագործում էր, իսկ ես քեզ սպասելով զիրք էի կարդում բարձրաձայն. Անցաւ մի ժամ... յետոյ երկրորդը... դու չէիր երևում: Տեսայ թէ ինչպէս նա անհանգստութիւնից սարսափեց, որից և սարսափեցի ինքս: Ես շատ լաւ զիտէի քո ինչտեղ եղածդ ու երկնչում էի չլինի թէ մտանաս, այն դերասանուհու գոգում, տանուերկուերորդ ժամը, որ հետզհետէ մօտենում էր: Նա ասեղնագործելուց դադարել էր, իսկ ես ընթերցանութիւնից. մի սարսափելի լութիւն ընկճում էր մեզ: Յանկարծ տեսայ ես թէ ինչպէս արտասուքը մարգարտանման կախուեց թերթերունքից և կաթեց նրա ասեղնագործի վրա: Ես շտապով վեր թռայ տեղիցս և ուզեցի դուրս գնալ քեզ գտնելու: Համոզւած էի թէ կը կարողանայի քեզ այն կնոջ զրկից գօռով դուրս գջլել: Սակայն հէնց միւսնոյն միջոցին նա ոտի ելաւ ու հեռացաւ այստեղից, որտեղ ես եմ նստած հիմի:

«Ուր էք կամենում գնալ, բացականչեց նա: Նրա գիմադծերը անասելի վիշտ էին արտայայտում:—«Ճրանցին գտնելու»

պատասխանեցի ես: Այն ժամանակ նա ճչաց. «Ի սէր Աստուծո, գոնէ դուք մնացէք մօտս, մի՛ք բարձի թողի անի ինձ: Եւ ճեռուելով վրաս նա իր ձեռները դրեց ուսերիս վրա, իսկ կրծքիս մէջ թաքցրեց արտասուքով ողողած դէմքը: Ամբողջ մարմնովս սառսուռից ցնցեցի, որովհետեւ երբէք կեանքումս կինմարդ այդպէս մօտիկ չէի գրկել: Սակայն ինքս ինձ յաղթեցի և գուն գործեցի նրան մխիթարելու: Ո՛րչափ կարօտ էր նա մխիթարութեան:

«Քանի մի վայրկեան անցած՝ դու ներս եկար. շփոթմունքս նկատեցիր դուն, թշնրդ կրակ էին կարել և աչքերումդ նկատելի էր այն յոգնութիւնը, որը սիրոյ արբեցութեան հետեանքն է: Սուրբ Սեղբեսորոսի այն երեկոյցից իվեր, ասում եմ քեզ, իմ մէջ մի փոփոխութիւն կատարւեց, որը վրաս սոսկումն էր ազդում: Այն օրից իվեր, երբ վիզս զգաց նրա քնքոյշ բազուկների թևապատումը, այն օրից իվեր, երբ ես հոտհոտեցի նրա մազերի անոյշ բոյրը, ասողը իջել էր երկնքից և սորա փոխարէն դիմացս կանգնել էր, բորբոքուն աչքերիս առաջ, գեղեցիկ սիրաշունչ Վինը: Ես ինձ թշուառականի մէկը համարեցի, մի դաւաճան և, խղճիս հետ գոնէ կիսով չափ հաշտուելու նպատակով, ճգնեցի քեզ անջատել այն դերասանուհուց, որին դու սիրում էիր: Բարեբախտաբար ես ունէի փոքր ինչ կարողութիւն, նա ընդունեց քեզ հետ իր կապը խզելու համար այն դումարը, որ ես առաջարկեցի և...»

— Վահ... ընդմիջեց ծերուկ բարեկամը զարմացած: Այդպէս ուրեմն, քո թելադրութեամբ էր, որ Բիանկան զրեց ինձ սիրա մորմոքող մնաս բարևի նամակը, որով նա յայտնում էր, սիրտը կտրած, թէ սախլած էր սէրս մերժել:

— Այն, իմ թելադրութեամբ էր. սակայն լսիր հետեանքը: Վարժում էի թէ կը կարողանայի տւած դրամովս հանգստութիւն գտնել. իսկի էլ չէ: Խե ու չիմար զաղափարներ էին պտուում ուղեղիս մէջ: Խորասուզեցի աշխատութիւններիս մէջ. այն միջոցներում իմ մէջ ծնեց առաջին միտքը իմ հեղինակութեան — Վաղափարի անմահութիւնը: Բայց այս ամենը անբաւարար էր անգործութիւնս վերստին ձեռք բերելու: Այսպէս սահեց ամբողջ մի տարի, Ս. Սեղբեսորոսի երեկոն կրկին եկաւ: Մի անգամ ևս նստել եմ այստեղ նրա հետ: Այն երեկոյ դու տանն էիր. բայց քնած էիր

դռկից սենեակում դիւանի վրա տարածւած: Գուն յոգնած վերադարձել էիր ակումբում մի ուրախ ճաշկերոյթ վայելելուց յետոյ: Ես նստել էի նրա մօտ աչքերս նրա գունատ դէմքին յառած, երբ յուշերս մի անդիմադրելի ուժով պաշարեցին ինձ: Մի անգամ ևս, մի անգամ միայն ուզեցի կրկին նրա գլուխը կրծքիս վրա դնել, միանգամ ևս գրկել, ապա անհետանալ: Մեր հայեացքները իրար հանդիպեցին և թւաց թէ նրա աչքերում գաղտնի համամտութիւն էր փայլում: Այն ժամանակ ես այլ ևս չդիմացայ, ընկայ նրա ոտների առաջ և հրաբորբոք դէմքս նրա ծնկների վրա թաքցրի:

«Մօտ երկու վայրկեան ես անշարժ էի, երբ, այս դրութեան մէջ, գլխիս վրա զգացի նրա ձեռքի զովութիւնը և այս անուշաձայն խօսքերը.

«Արիացիր, բարեկամ»:

«Այո, հարկաւոր է արիանալ. պէտք չէ խաբել զլիսովին հաւատացած՝ դռկից սենեակում քնող մարդուն»: Եւ ես տեղիցս ելայ մոլոր հայեացքներ գցելով չորս կողմս: Այն ինչ նա սեղանի վրայից մի գիրք վերցնելով ինձ առաջարկեց: Ես նրա միտքը հասկացայ. բաց արի հէնց առաջին պատահած երեսը ու սկսեցի կարդալ: Թէ ինչ կարդացի, ոչինչ չեմ յիշում, տաւերը աչքիս առաջ թռչկոտուի էին: Սակայն փոթորիկն սկսեց հոգուս մէջ հետզհետէ անդորուել և երբ տասներկու ժամը զարկեց, երբ դու ներս եկար, կողերդ քնից ծանրացած, մեզ սովորական բարեմաղթութիւններ անելու, ինձ թւաց թէ այն մեղսալի բոպէն շատ և շատ հեռու էր գնացել ինձնից, անհետացել էր անցեալի մէջ:

«Սկսած այն օրից ես փոքր առ փոքր վերստացայ հոգեկան հանդատութիւն. գիտէի որ սէրս անպատասխան էր մնացել և որ, բացի փոքր ինչ գթութիւնից, այլ ևս ոչինչ չէի կարող սպասել նրանից: Անցան տարիներ, զաւակներդ մեծացան ու ամուսնացան. այն ինչ մենք երեքս ծերանում էինք: Գու ձեռք վերցրիր երիտասարդական զւարճութիւններից, դու հեռացար թեթեւբարոյ կանանցից և ադրեցիր միմիայն կնոջդ համար, ինչպէս և ես: Ես չզաղարեցայ նրան սիրելուց, այս անկարելի էր ինձ համար. սակայն սէրս տարափոխեց, երկրային ցանկութիւններս անհետացան և տեսակ զ՝ զղափարակցութեանը տեղի տալու դիտաւո»

բուժեամբ: Դու բազմիցս խնդացել ես մեզ վրա, երբ մենք փրկի-
տփայլու թիւններ էինք անուամ: Եթէ դու կասկածէիր զոնէ, որ եր-
կուսիս հոգիները ի մի էին ձուլում, այն ժամանակ խիստ նա-
խանձոտ կը դառնայիր:

«Սակայն նա մեռած է այժմն. շատ կարելի է, որ մենք եր-
կուսս, նախ քան զալիք Ս. Սեղբեստրոսի տօնը, կը միանանք նրան:
Վաղուց էր հարկաւոր ուրեմն, որ այս ծանրատար շաղտնիքը
թոթափէի ինձնից և քեզ ասէի «Տրանց, մի անգամ մեղանչել եմ
քո դէմ, ներիր ինձ»:

Նա ձեռք մեկնեց իր բարեկամին թախանձելով, բաց վերջինը
անհամբոյր ձայնովն պատասխանեց նրան. «Է՛հ, անմիտ խօսքեր ես
ասում: Ի՞նչ պէտքէ ներեմ քեզ: Այդ զաղտնիքը, որը, քո կար-
ծիքով, հիմն ես խոստովանում ինձ, ես վաղուց իվեր զիտէի:
Կինս ինքը պատմեց ինձ ամենը քառսուն տարուց առաջ: Այժմ
քեզ կը բացատրեմ թէ ի՞նչի էի, մինչև ծերանալս, կանանց ետևից
քաչ գալիս. նա ինձ խոստովանել էր միևնոյն միջոցներում, որ իր
ամբողջ կեանքում նրա միակ սէրը դու էիր»:

*
* *

Ընտանիքի բարեկամը նայեց նրան անթարթ աչքերով
տռանց մի խօսք ասելու և պատի ժամացոյցը իր խւստո ձայնով
հնչեց զիշերւայ սասնուերկուերորդ ժամը:

ԽՈՐՈՒՆԿ ԵՐԿՆՔԻՑ...

Լ Ե Ռ Ե Ն Յ Ի

Խորունկ երկնքից լուսինն է նայում,
Մեկամաղձ տեսքով աստղերն են փայլում,
Եւ եզրներըն արծաթով մանւած՝
Այնտեղ կտոր ամպ է մըտախոհ կանգնած:

Երկնում ամեն բան հրաշալի, խաղաղ,
Մինչ նրա տակ անհուն ու արծաթաշաղ
Ծոփն է փոթորկում, ուռչում ու փլչում,
Ասես թէ կուրծք է դնում, հառաչում:

Նրա վրան խաղում է սպիտակ առագաստ,
Փըշրել, կլանել նրան ալիքն է պատրաստ:
Նաւավարն մենակ, մըտազբաղ, տըխուր
Հողմի կանքին է եղած անձնատուր:

Եւ աչքերն անշեղ լուսնից, աստղերից՝
Նա անյագ մտքով հարցնում է նրանցից
Ի ու ուրն փոթորկի մասին կենսական,
Նաև հանգստի չաւիտենական...

ԿՐԿՆԵՐԵՒՈՅԹՆԵՐ ԶԱԿՈՂԱԻԷՐՑԻ ԵՐԳԻՉՆԵՐԸ

Պատմաճշ ՎԱՍ. ՆԵՄ ԲՈՎԻՉ ԳԱՆՁԵՆԿՈՒ

Թարգմ. Մ. ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ

Պայծառ արև, մռայլ աներ... վերը սև տների ուրազներ,
ցածր—հեռու-շատ հեռուն ամաչի Կասախիլացի թուխ ծածկոցը...
Մուգ-կապույտ երկինքը ծածկեց զոթական քաղաքը... Մենք Զա-
կողաւերօ հրապարակումն ենք: Խնչպէս այստեղ ամեն ինչ պարզ է
և շքեղ, ճառագայթները չեն լուսաւորում, այլ վառւում են—
այրում: Հէնց որ սուեր է ձգւում, կարծես բոլորովին մութ գի-
շեր է պայծառ օրւայ մէջ... Ահա վաղուց հանգած մի ցեղի տոհ-
մադրօշմով զարդարւած կամարի տակ կոյր երգիչներ են նստած:
Խնչպէս քիչ էր կերպարանափոխւում այդ տեղը սկսած այն օրից,
երբ այդպիսիներին լսում էր Կարլոս Ն' կայսրը! Չնայելով նոյն
ցնցոտիներն են, բայց որ դոքա տիպեր են, այդ անկասկած է:
Յիշում էք դուք այն զարմանալի օրը, երբ յաղթանակողին
թուում էր, թէ ամբողջ աշխարհը լցւած է իր փառքով: Իր Ալ-
կազարում դիմելով պալատականներին, նա բացականչում էր.
«Ես կարծում եմ, որ այժմ Սպանիայում չկայ մի սիրտ, որ իմի
հետ միասին չբաբախէ»... Եւ իրաւ, Աֆրիկայի գոռոզ խալիֆա-
ներն առաջինն եղան, որ խոնարհեցան կայսեր սրի առաջ: Ծովա-
հէներն ոչնչացան և նրա սև արծիւը իր զօրեղ թևերի խիտ
սուերը տարածեց ամբողջ միջերկրական ծովի վրա: Նա պէտք է
գուրս գար հէնց նոյն Զակողաւերօ հրապարակը!... Դեռ վաղ հրա-
պարակի միջով անց ու դարձ անեղիս նա նկատեց հին աշտարակի
սուերի անկիւններից մէկում կուտակւած մի ամբօխ: Այս անգամ

Կարլոս Վ-ը հետաքրքրեց: Ի՞նչ բան կարող էր լինել այն: Այն-
տեղից լսեց զիթարների տխուր մի նախերգանք: Մերունիների
ձայներն ինչ որ երգում էին... Քաղաքը դիմեց իր շքամբին
հարցմունքով:

—Այդ արժանի չէ ձեր մեծութեան ուշադրութեանը:

—Սակայն?

Երևեցաւ, որ բոլոր պալատականներից միայն մէկը գիտէր,
յո՛ւ է բանն ինչու՞ն է:

—Փալիցիական երգիչներն են... Մաշլ մարդիկ... Ոչինչ չար-
մեցող... Դրանց չի կարելի համեմատել նոյն իսկ Անդալուզցիների հետ:

Կարլոս Վ-ը մտնեցաւ: Ամբոխը յետ քաշեց: Նա «կեցցէ»
չաղաղակեց: Նրա տրամադրութեան մէջ չկար այն, ինչ բանի որ
վարժեցրել էին կայսրին «հաւատարիմ» և ազնւաբարոյ» տուրքա-
ցիները:

—Ի՞նչ կայ այդ տեղ:

Լուութիւն. . . Անխօս և տխուր մարդիկ սկսեցին կամաց-կամաց
ցրւել:

—Ես հարցնում եմ, թէ ինչ կայ այդտեղ:

Ճիշտ պատի տակին զիթարները ձեռքներին նստած էին
երեք կոյրեր: Նրանք չկարողացան տեսնել, որ իրանց առաջ Կար-
լոս Վ-ն է կանգնած, միայն զգացին փոքր ինչ շփոթ և անհան-
գստացան: Նրանց լարերի վերջին կնդկնոցները կարծես դեռ դո-
ղում էին օդի մէջ: Կարլոս Վ-ի մէջ յանկարծ մի միտք յղացաւ:
Նա սիրում էր մեծահոգութեամբ և առատաձեռնութեամբ բեմա-
կանութիւն անել:

—Դուք սրտեղացի էք—հարցրեց նա աղքատներին:

—Օրենսէից, սենեօր-կաւալիքօ: Օրենսէից, անդորժ և աղքատ
մարդկանց քաղաքից: Քաղաքը ժպտաց: Փալիցիան այն ժամա-
նակ գաւառներից ամենահաւատարիմն էր, որի համար և Փիլիպ-
պոս II-ը հեղեղեց այդ երկիրը արտասուքով և արիւնով: Կար-
լոս Վ-ը փողով լի մի քսակ շարտեց երգիչներից մէկի զիթարի
վրա. նրա լարերը ցնցւեցին և զօղանջեցին:

—Պէտքէ, որ հարուստ լինի, այնպէս չէ,—չչնջաց նոյն երգիչը
հարեանին:

Երգեցէք ինձ համար այն երգը, որը հէնց այժմ էիք դուք երգում:
— Ձեր ողորմածութեանը նա չի դուր գալ:

— Ի՞նչու, — քաղցրութեամբ ժպտաց կայսրը:

— Սա աղքատների երգ է: Սա ծնել է Լոսնի և Աստուրիայի ծխող խրճիթներում: Հարուստ և նշանաւոր մարդկանց համար մենք երգում ենք ուրիշները — անդալուզականները, վալենսիականները... Անդալուզացում և վալենսիացում թէ լոյսն է շատ և թէ ծիծաղը:

— Երգեցէք այն, ինչ որ երգում էիք հէնց այս ժամին,

Աղքատները լաւ վարձատրեցան: Նրանք իրենց կեանքում ոչ միայն չէին ունեցել, այլ և չէին տեսել ոսկու այգուպիսի քանակութիւն:

Լաւեց տխուր նախերգանքը — այնպէս տխուր, որ աւանզութեան ասելով, կայսրը քիչ մնաց լաց լինէր: Նախերգանքի իւրաքանչիւր ձայնը չէր վերասլանում դէպի երկինք, այլ, որպէս արտասուք, երկրի վրա էր ընկնում: Մարդկային սիրտն ինչպէս հաւաչում է, ինչպէս նա անտանելի տանջանքների մէջ ցաւում է և լցում արիւնով: Երբ որ նախերգանքի վերջին ակկորդն էլ մեռաւ տապի և լոյսի մէջ, աղքատներից մէկն երգեց: Սկզբում Կարլոս V-ը չհասկացաւ, թէ ինչ բան էր այդ գանգամ թէ լաց: Բացի դրանից երգի բառերը տարբերում էին կաստիլիական ազնւալուր բառբառից: Եւ իսկապէս այդպէս էին խօսում Աստուրիայի ծխաթախախ խրճիթներում:

— Խուանա, Խուանա!... Ինչու համար ամեն առաւօտ և ամեն երեկոյ դու բարձրանում ես բարձր լեռան վրա, բարձր, շատ բարձր լեռան վրա և կանգնելով նրա քարաժայռի ծայրին հեռուն ես նայում: Եւ ապա ամբողջ ցերեկ և ամբողջ գիշեր դու լալիս ես փակած սենեակիդ խաւարում և նստած ցուրտ օջախից մօտ:

— Ան նայում եմ, թէ ինչպէս է ծագում և մայր մտնում արևը...

— Արևի յետևից չեն լալիս և գիշերն արտասուքներով չեն անցնում: Ո՛ւմն ես դու սպասում այն ճանապարհի վրա, որ ձգած է մեր երկրի լեռներում: Խուանա, Խուանա, ո՞վ է հեռացել քեզանից այդ ճանապարհով...

— Հինգ տարի սրանից առաջ թաղաւորը վերցրուց իմ Խօսէ (Յովսէփ) որդուն, նրան երկաթ հագցրեց, ձեռքը սուր տւեց և տարաւ իր հետ հէնց այս ճանապարհով հեռուն— շատ հեռուն: Այնուհետև ամաչացաւ իմ խրճիթը և օջախս հանգաւ:

«Քւմ համար պէտքէ վառեմ օջախս» նրա մէջ միայն սարդերն են ոտոացն հիւսուսմ... Հինգ տարի է, որ ես շրջում եմ բարձր լեռան վրայ, հինգ ամբողջ տարի առաւօտ և երեկոց նայում եմ, չէ երևում արդեօք հեռուում եմ Խօսէն:

— «Խուանա, Խուանա, մի՞թէ դու չես լսել, թէ ինչպէս կայսրը ջարդեց անհաւատներին հեռու Աթրիկայում: Քշնամիները կուրացած երկիր դով փախչում էին նրա առաջից անապատում, և անհաւատների արիւնը չագուրդ էր տալիս ծարաւի աւազին:

— «Ե՞նչիս են պէտք նրա յաղթութիւնները: Նրանցով ես պէտքէ ուրախանամ, մինչդեռ իմ Խօսէն գուցէ այժմ ընկած է այն աւազների մէջ ուժասպառ կերպով տարածած իւր ձեռքերը և գուցէ սև ագռանն արդէն դուրս է քաշել նրա աչքերը: Մի՞թէ այդ յաղթութիւնները նրան կեանք կը վերադարձնեն, կրակ՝ իմ օջախին, բաղդ — իմ սրտին, ժպիտ — իմ դէմքին, մշակ — իմ այգունը:

— «Խուանա, Խուանա! գուցէ դու չես լսել մեր քահանայի քարոզը. նա խօսում էր այն մասին, թէ ինչպէս ինքն երկինքն օրհնում էր Կարլոս V-ին, և Աստուած յաղթութիւն էր ուղարկում նրան, իսկ այժմ քրիստոնէական խաչը փայլում է արաբների վերջին մզկիթների վրայ:

— «Ե՞նչիս են պէտք մզկիթներն ու միւս զեղեցիկ բաները, որոնք գոյութիւն ունին միայն նրանց որևէ բանով փոխարինող մարդկանց համար: Երկինքն անվրդով նայում է իմ ամաչացած արտերին, իմ սասած խրճիթին: Քահանան և ոչ մի անդամ չմխիթարեց իմ որբացած սիրտը: Ես չկարողացայ նրան աքաղաղ տանել կիրակի օրերը և ոչ էլ հնդկահաւ մեծ տօնին: Նա ինձ անւանում է մեղաւոր նրա համար, որ ես ոչնչով չվարձատրեցի նրա աղօթքները: Խօսէ, իմ Խօսէ! ինչո՞ւ դու հեռացար ինձանից: Խօսէ, իմ Խօսէ, ինչո՞ւ անջատման ժամին չպատուեցիր իմ սիրտն այն սրով, որ Կարլոսն էր տւել քեզ: Վայ մեզ, վայ: Փառք, յաղթութիւն—

նրան. իսկ արիւն, աղքատութիւն և տանջանք—Տեղ: Ո՞վ արդեօք կը պատասխանէ մեր փոխարէն երկնքին: Իսկ կայսեր համար աղօթում են քահանաները բոլոր տաճարներումս!

Կրկին լսեց կիթառների երկար նախերգանք: Կարոս Մ-ի գէմքը մնայլ էր: Երբ որ լարերը լռեցին, եւկրորդ մուրացկանն երգեց ոչ այնպիսի վշտահար ձայնով: Նրա երգի եղանակի մէջ զայրոյթ էր արտայայտում: Նրա երգն արդէն չէր ընկնում արտասուքի պէս դեռնի վրա, այլ ոյժով բարձրանում էր դէպի կայոյտ եթերը:

«Մենք անցնում էինք աղքատ դիւղերի, չորացած դաշտերի մօտով, և որպէս գանձ, թշուառների արտասուքները մենք ժողովում էինք մեր կիթառների և գանգառները մեր սրտերի մէջ: Մենք կուրացանք տանջալից տեսարաններ տեսնելուց: Եւ այժմ երբ մենք դիպչում ենք մեր լարերին, նրանցից ուրախ երգերի փոխարէն, արտասուքներ են թափւում, իսկ երբ ուզում ենք երգել, ակաս մայից գանգառում ենք և հառաչում...»

Լարերի նոր հնչուններ... Կարլոս Մ-ի գէմքով մնայլ սուերս-դծերն էին յաջորդում միմեանց: Նքախումբը շնչառութիւնը զսպած շարել էր: Բոլորն էլ զայրոյթի կատաղի բռնկումն էին սպասում: Այնպիսի մի լուռութիւն էր տիրել չորս կողմը, որ կարծես ամեն ինչ սառել էր անհամբեր փոթորիկ սպասելով: Ահա-ահա կը խփէ կայծակը և կը գղրկաց նրա որոտը... Միայն երգիչներն էին հանգիստ: Նրանք ոչինչ չէին տեսնում իրենց իսաւար աչքերով: Յանկարծ երրորդ մուրացկանն երգեց... Քուում էր թէ գիշատիչ թռչուններ են բղաւում չարութիւնից ու տանջանքից, այնպէս սուր և սպառնալից էր հնչում նրա ձայնը:

«Խուանա, Խուանա! մօտ է ժամը... Մօտ է ժամը! Դու կը մեռնիս, բայց երբ և է կը մեռնի և Կարլոս Մ-ը: Մահը հաւասարեցնում է թաղաւորին և մուրացկանին: Թէ մէկին և թէ միւսին գերեզմանում նոյն տեղն է սպասում: Ապականութիւնը ոչնչացնում է ինչպէս իշխանութեան պսակով, նոյնպէս և բորոտութեան վերքերով ծածկւած զլուխները: Խուանա, Խուանա, մօտ է ժամը, մօտ! Դուք երկուսդ էլ Աստուծոյ գաղտնատանի հանգէպ պիտի կանգնէք: Երբ Յիսուս-Քրիստոս հարցնի քեզ. «Ի՞նչ կարող ես ասել Նրան» —

Կանչիր Տիրամօրը, հեզաբարոյ, մաքուր Տիրամօրը, որը նոյնպէս լալիս էր իր որդու վրա արիւնխառն արտասուքներով: Եւ երբ Ամենասուբբը քո հրաւերով կը գայ, — երգիր Կարլոս թագաւորի մօտ քո երգը: Երգիր թէ ինչպէս էիր երգում նոյնը մեր առաջ: Երգիր այդ երգը և դու կը տեսնես որ քահանաների աղօթքները չափազանց ծանր են: Նրանց աղօթքներն երկինք բարձրանալիս կէս ճանապարհին են կանգնել: Ասուած նրանց չէ լսում: Նրա գահին հասնում են միայն անբաղդների արտասուքները: Երկնքում նրանցն է և հաշիւը, և շարգանքը, և փառքը: Խուանա, Խուանա, երբ Տէրը քեզ հարցնի. «՛նչ ես ուզում դու, որպիսի պատիժ ես ինչպիսի Կարլոսի ամբողջ աշխարհի հօր կոչսեր համար» — ներիր նրան: Գու, թոյլդ, ողորմիր նրան, որի սուշ այժմ դողում է տիեզերքը: Ներիր նրան ամբողջ հօգով, որովհետեւ նա իր բազդաւորութեան մէջ մեղանից աւելի անբաղդ է, իր զօրութեան մէջ քո վերջին արտասուքից աւելի թոյլ և իր փայլի ու մեծութեան մէջ մեր կուրութիւնից աւելի կոյր և աւելի խաւար... Ներիր նրան Խուանա! քո անուշով մարդիկ չեն սկսիլ վախեցնել իրենց որդոց, իսկ աշխարհի փառաւոր և մեծ հրամայողը իր շարագուշակ ըսուէրը տարածում է ձիգ դարերի ու ազգերի վրա»:

Պալատականներն իսկոյն սրերի դիմեցին:

Կարլոս V-ը ձեռքի մի շարժումով կանգնեցրեց նրանց:

— Քողեցէք երգն ու արտասուքներն խեղճերին: Եթէ մենք նրանցից խլենք և այդ — նրանց տանջանքներից կը խորտակւի տիեզերքը, կ'աղօտանայ երկինքը և կը թափւին աստղերը: Մենք և նրանք ընթանում ենք զէպի միևնոյն ճշմարտութիւնը, բայց զանազան ճանապարհներով... Երբ քո Խուանան, — դիմեց նա վերջին մուրացկանին, — կ'երգի մուրացկանի գահի առաջ, բարեկամ, այն ժամանակ ես կը ժողովեմ բոլոր անբաղդ ու թշւառ քրիստոնեաներին, որոնք անհատաների մօտ տանջւել են շար գերութեան մէջ և ազատուել իմ ձեռքով: Գուցէ Ասուած ուզում է լսել և նրանց...

Կարլոս V-ը հեռացաւ, բայց մի քանի քայլ անցնելով, կրկին յետ դարձաւ:

— Ձեռք չտալ այս մուրացկաններին, թող ազատ երգեն իրենց երգերը:

Հէնց նոյն գիշերը նա յանկարծ զարթնեց և վեր կացաւ:

Նրա ննջարանի մռայլը կարծես ամբողջովին լցած էր մի տեսակ խաւար ուրականներով: Նրա գէմքի մօտ կարծես թէ շրջում էին այդ ուրականների սղաւոր հագուստների լայն թւքերը: Նրանց աչքերը արտափայլում էին տխրութիւն և տանջանք:

—Ո՞վ կայ այստեղ... հազիւ լսելի ձայնով հարցրեց հրամայողը: Եւ մեղմ-կամաց, կարծես հազիւ նրա սրտին բախւելով, լսեց երկչոտ մի գանգատ:

—Ո՞ր են մեր որդիքը... Թագաւոր, տուր մեզ մեր որդիքը!...

Թագաւորը շուտով հեռացաւ Տոլեդօից: Վերադարձաւ նա մի շաբաթից յետոյ և մտաբերելով մուրացկաններին, գնաց Չակոդավերօի հրապարակը: Օրը դարձեալ պայծառ էր, իսկ տները մռայլ արևը դարձեալ խիստ էր այրում: Բայց երդիչները ոչ մի տեղ չէին ժողովուրդը զւարձանում էր խեղկատակների շուրջը, որոնք ծամածուռում էին այնտեղ, ուր շատ վաղուց չէր, որ լալիս ու գանգատուում էին լարերը: Ամբօխն աւելի ևս բարձրաձայն աղաղակներով դիմաւորեց հզօր հրամայողին:

—Ո՞ւր են Չակոդավերօի մուրացկանները:

Բոլորը լուռ էին: Շքախումբը կամ շուգեց կամ չվճռեց ասել:

—Ո՞ւր են այն մուրացկանները, որոնք միշտ երգում էին այստեղ անկիւնում:—Հարցրեց Կարլոս V-ը մի բացբերանի, որ նրան «vive» (կեցցէ) էր կանչում:

—Մուրացկանները... Նրանց կախեցին:

—Ո՞վ էրք:

—Մի քանի օր առաջ, գլխաւոր այլգուաղիրը:

«Գլխաւոր այլգուաղիրը հէնց՝ այնտեղ էր:

—Ինչի՞ համար զու նրանց կախեցիր:

—Տէր, իրենց անզգամ երգի մէջ նրանք համարձակեցին ծաղրել ինձ... Եւ նոյն երգը սխեցին կրկնել Տոլեդօի փողոցներում:

Ահա ելաւ լուսինն արծաթ
 Մութ ամպերու սուերէն
 Ահա նաւակն ալ զեղազարդ
 Դուրս սահեցաւ ժայռերէն:
 Անուշ հովիկ,
 Փըչէ յուշիկ.
 Ու ինծի բեր
 Բիւր ժիր ալիք:

Մակոյկին մէջ ի՛մ զեղուհին
 Փըռած անփոյթ լուսնին տակ
 Կը ձայնակցի իր կիթառին
 Հրնչուն ձայնով մը յտակ.
 Անուշ հովիկ,
 Փըչէ յուշիկ.
 Ու ինծի բեր
 Երգն անուշիկ:

Չայնը կ'երգէ սէր ու գրգւանք՝
 Համակ յուզում ու սաստուռ.
 Ալ թող, աղջիկ, երգչու նըրագ՝
 Բոց աչքերդ հոս դարձուր:
 Անուշ հովիկ,
 Փըչէ յուշիկ.
 Ու ինծի բեր
 Նաւն ու աղջիկ:

Ս Ի Մ Ֆ Ո Ն Ի

(Աղջկան մը)

Շ Ա Ն Թ Ի

Արածը շտուժեան իրար ընդգրկած
Կրքոտ շեշտերու խոլ յորդումին տակ
Քեզի կը դիտեմ ես յամիշտակած,

Մինչ Կուն ուշագիր սուգւած ես Կողոզ
Ներդաշնակութեան աչք ծովն անյատակ,
Ուր կը փոթորկին յուզումներն ամբողջ:

Լսէ՛ իմ կուրծքս ալ յորդ ալիքներ կան,
Որոնք ներդաշնակ զայրոյթով մ'ուռած
Սիրոյ ծարաւս կ'երգեն մոլեկան:

Այդ խոր անգունդն ալ մէկ նայէ, հոգիս,
Եւ, եթէ խելքդ պտոյտ գայ յանկարծ,
Մի վախնար, գիրկըս պիտի սայթաքիս:

Լալբցիկ, 1893 թ. Նոյեմբ. 24:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Наслѣдственность, l'Hérédité)

ԲԺ. ԹԱԴԵՈՍ ԶԱՐԲԵԱՆՅԻ

Ա.

Ֆիզիքական յատկութիւնների ժառանգականութիւնը ամենքին յայտնի է. ամենքը գիտեն որ սև ծնողներից առաջանում են սև զաւակներ, սպիտակներից—սպիտակ, շէկերից—շէկ և այլն: Ֆիզիքական յատկութիւնների ժառանգականութիւնը դնում է իւր դրօշմը մարդկային ամբողջ ցեղերի վրայ և պատճառ է դառնում այն ցեղական տարբերութեան, որով այսօր մենք որոշում ենք մալայական ցեղը հնդկա-եւրոպական ցեղից, նեգրներին՝ մալայեցիներից, ամերիկական կարմրակաշիներին՝ բևեռային էսկիմոսներից: Միևնոյն ցեղի զանազան ազգութիւնները ունին նոյնպէս իրենց բնորոշող զծերը, Ֆիզիքական ասանձնայատկութիւնները, որ նրանք ժառանգաբար փոխանցում են սերնդից սերունդ և որոնցով մէկ ազգութիւնը տարբերում է միւս ազգութիւնից. Ֆրանսիացին—գերմանացուց, անգլիացին—իտալացուց, հայը—ուսից, վրացին—պարսկից և այլն և այլն: Այդ բաւական չէ. միևնոյն ազգութեան մէջ կարող են հանդիպել և հանդիպում են տարբեր տիպեր, որոնք նաշելով իրենց բնակութեան տեղին, երկրաբանական և կլիմայական պայմաններին՝ շատ թէ քիչ հեռանում են ազգային հիմնական տիպից: Ո՛րք յայտնի չէ դէմքի զծագրութեան և առհասարակ ամբողջ կազմածքի այն տարբերութիւնը, որով որոշում են, օրինակի համար զարաբաղցին-թիֆլիզեցուց, երևանցին-շամախեցուց,

ազուլեցի զօկը-ախալցխայի կսօից: Դժւար և համարեա անկարելի է բառերով որոշել այն տարբերութիւնը, որ գտնուում է զանազան դաւառացիների Ֆիզիքական յատկութիւնների մէջ. բայց շնայելով տրան՝ ամեն մի փորձուած և դիտող աչք հեշտութեամբ որոշում է մէկ գաւառացուն միւս գաւառացուց, առանց յժւարութեան ճանաչում է զարաբաղցուն նաև այն ժամանակ, երբ նա վերջին մողացի զգեստը հագին, ցիլինդրը գլխին և պէնսնէն քթին չափշփում է Պարիզի բուլլարները: Կարելի է ամեն ինչ փոխել, բայց ոչ ժառանգականութեան դրոշմը: Ոչ շրջանը, ոչ կրթութիւնը և ոչ նոյն իսկ ժամանակը անկարող են խախտել բնութեան այդ զօրաւոր օրէնքը, որով ամեն մի կենդանի էակ ձգտում է պահպանել իւր եսը, իւր անհատականութիւնը. աշխատում է շարունակել իւր ինքնուրոյնութիւնը, կրկնելով իւր սերնդի մէջ: Ճնորհիւ ժառանգականութեան, ասում է Ռիբօն, բնութիւնը անդադար ընդորինակում է ինքնիրեն, հետևում է իւր նախակազապարին և ճշտօրէն ու պարզ կերպով նմանից նման է ստեղծում,

Ինչպէս հին պատմական ժամանակներում՝ նոյնպէս և այսօր յայտնի են շատ ընտանիքներ, որոնք իրենց մականունը ստացել են ժառանգական առանձնաչատկութիւններից, որը յաճախ կրկնում է այդ ընտանիքի մէջ—ճաղարեան կամ Գարագաշեան մականունը ցոյց է տալիս ճաղար աչքերի կամ սև ունքերի ժառանգականութիւնը այդ մականունները կրող ընտանիքներում: Եւ այդպիսի օրինակներ յայտնի են եղել ամեն ժամանակ և ամեն ազգերի մէջ:

Ժառանգականութեան օրէնքը աւելի պարզ, աւելի անխառն կերպով արտայայտուում է կենդանիների, նոյնպէս և մարդկային այն ցեղերի մէջ, որոնք կանգնած են քաղաքակրթութեան ստորին աստիճանների վրայ, ինչպէս են էսկիմոսները, նեգրները և այլն. նրանց զաւակները թէ՛ Ֆիզիքական և թէ՛ հոգեկան առանձնատկութիւններով աւելի շատ նմանութիւն ունին իրենց ծնողներին հետ քան թէ այդ կարելի է նկատել աւելի զարգացած, աւելի քաղաքակրթուած ազգերի մօտ: Ակներև է, որ քաղաքակրթութիւնը և կեանքի պայմանների այն անվերջ բազմազանութիւնը, որը անմիջական հետևանք է քաղաքակրթութեան պահանջների, նշանաւոր կերպով ազդում են ժառանգականութեան վրայ, միշտ մի նոր

գիծ, մի նոր նշանախեց աւելացնելով ժառանգական առանձնայաւուկութիւնների վրայ: Թէև այդ ազդեցութիւնը շատ դանդաղ է, թէև այդ նոր գծերը չափազանց չնչին են, սակայն դարերի և սերունդների ընթացքում գուհարւելով և նոյնպէս ժառանգաբար փոխանցւելով մէկ սերնդից միւս սերնդին՝ վերջ ի վերջոյ նրանք առաջացնում են հիմնական տիպի մէջ մի որոշ փոփոխութիւն: Կարերի և սերունդների ընթացքում կատարւող այդ փոփոխութիւնն է, որ անւանւում է բնական էոլոլիցիա: Ժառանգականութիւնը էոլոլիցիայի հետ միացած պատճառ են պատնում մարդկային ցեղի անընդհատ կատարւելագործութեան և յառաջադիմութեան: Յաւալի կը լինէր մարդկութեան վիճակը եթէ որ ժառանգականութեան օրէնքը միացած չլինէր փոփոխականութեան (էոլոլիցիայի) օրէնքի հետ, եթէ որ ամեն մի յետագայ սերունդ ժառանգէր իւր նախնիքների միայն հիմնական տիպը առանց մի նոր գիծ աւելցնելու այդ ժառանգութեան վրայ: Այդ դէպքում մարդկութիւնը կը մնար անշարժ ինչպէս ջուրը ճահիճի մէջ. նա այսօր կը լինէր նոյնը, ինչ որ երէկ և վաղը՝ ինչ որ է այսօր. նա ինչպէս մի անիւ անդադար կը շրջէր ինքը իւր առանցքի վրայ առանց առաջ շարժւելու: Իսցց այդ չէ պատահում, որովհետև ժառանգականութիւնը փոխանցում է սերունդների ոչ միայն նախնիքների հիմնական տիպը, այլ և այն փոփոխութիւնները, որոնք ժամանակի ընթացքում մշակում են բիօլոգիական այն մեծ օրէնքի ազդեցութեան տակ, որը անւանւում է դոլութեան կռիւ: Այդպիսով մարդկութեան անիւը շարժւում է ոչ միայն ինքը իւր առանցքի վրայ այլ և դէպի առաջ, տանելով իւր հետ նաև մարդկային ցեղը և աւելի ու աւելի ընդարձակելով մարդկային կատարւելագործութեան և յառաջադիմութեան սահմանները:

Ժառանգականութիւնը աւելի հաստատու աւելի անփոփոխ կերպով արտայայտւում է հոգեկան ու ջղային շատկութիւնների մէջ: Մինչդեռ ծնողների ֆիզիքական առանձնայատկութիւնները, նրանց դէմքի գծագրութիւնը շատ անգամ ենթարկւում են փոփոխութեան և զաւակները կազմւածքի, դէմքի նմանութեամբ քի: թէ շատ հեռանում են ծնողներից. հոգեկան և ջղային կարողութիւնների նմանութիւնը ընդհակառակը սեղի է ունենում աւելի

անփոփոխ կերպով և աւելի յաճախ քան թէ սովորաբար կարծում են: Պատմութիւնը տալիս է բազմաթիւ օրինակներ, որոնք ապացուցանում են հոգեկան ընդունակութիւնների ժառանգականութիւնը. մի կողմ թողնելով հին պատմութեան օրինակները՝ բաւական է առաջ բերել մի քանի օրինակներ նորագոյն պատմութիւնից: Յայտնի են մի շարք ընտանիքներ, որոնց անդամները մի քանի սերունդ շարունակ տեղ են նշանաւոր նկարիչներ: Այդպէս է օրինակ Լանզդէէր ընտանիքը Անգլիայում, Բոնեօրները (Bonheur)—Ֆրանսիայում, Տէնիէր, Մենիս և Վան դը Վելդէ ընտանիքները Հոլլանդիայում, Բազանօն—Իտալիայում, որի միակ որդին և չորս թոռները յայտնի են գեղարւեստի պատմութեան մէջ ինչպէս առաջնակարգ նկարիչներ: Երևելի Բախի ընտանիքը երկու հարիւր տարւայ ընթացքում տեղ է մի քանի սերունդ առաջնակարգ երաժիշտներ: Բերնուլլիի ընտանիքը երեք սերունդ շարունակ տեղ է նշանաւոր մաթեմատիկոսներ: Դը Ֆիլստիէնները—չորս սերունդ յայտնի բուսաբաններ: Դարլիների ընտանիքը առաջացրել է մի քանի սերունդ աշխարհահռչակ բնագէտներ: Բիւֆֆոնի, Բէկոնի, Կոնդորսէի, Կիւլէի և մի շարք ուրիշ նշանաւոր գիտնականների յեղադրութիւնը ցոյց է տալիս որ նրանց նախնիքները յայտնի են եղել ինչպէս նշանաւոր խելքի աէր անձնաւորութիւններ: Փիլիսոփաների վերաբերութեամբ ժառանգականութեան օրէնքը չունի հաստատ ապացոյցներ, որովհետև նշանաւոր փիլիսոփաները մեծ մասամբ կամ անժառանգ են մեռել և կամ բոլորովին ամուսնացած չեն եղել. այդպէս են Ռէկարդը, Լեյբնիցը, Ապինոզան, Կանտը, Ռուսսօն, Ծոպէնհաուէրը, Օղիւտ Կոնտը և ուրիշ շատերը:

Այդ օրինակները ցոյց են տալիս որ հոգեկան կարողութիւնները իսկապէս կարող են ժառանգաբար փոխանցւել մէկ սերնդից միւս սերնդին: Բայց հարկաւոր է նկատել, որ այստեղ բացի ժառանգականութիւնից մեծ դեր են խաղում նաև դաստիարակութիւնը և շրջապատող պայմանները: Ժառանգականութիւնը միայն մի սերմ է, որը նայելով հողին կարող է զարգանալ կամ չզարգանալ և կամ բոլորովին խելզուել. իսկ այդ հողը կազմում են կըրթութիւնը և շրջապատող հանգամանքները: Մեծ քաղաքապետ կամ հանձնարար զօրապետ լինելու համար բաւական չէ միայն ունե-

նալ քաղաքազխտական կամ զինւորական ժառանգական ընդունակութիւն, այլ հարկաւոր է նաև ապրել այնպիսի շրջանում և այնպիսի պայմանների մէջ, որոնք նպաստում են այդ ընդունակութեան զարգացման կամ միջոց և առիթ են տալիս նորա արտաշայտելուն: Ռուսները ասում են война рождает генераловъ — պատերազմը ծնում է զորապետներ. այդ պէտք է հասկանալ այն մտքով որ պատերազմը առիթ է տալիս երևան գալու այն զինւորական ընդունակութիւններին, որոնք արդէն ծնւած ու պատրաստ են ժառանգականութեան հողի վրայ: Երևելի մաթեմատիկոսի որդին, եթէ նա ժառանգում է հօր ընդունակութիւնները, կարող է նոյնպէս երևելի մաթեմատիկոս դառնալ միայն այն ժամանակ, երբ որ նորա կրթութիւնը դրւում է իւր ժառանգական ընդունակութիւնը զարգացնելու: Հակառակ դէպքում այդ ընդունակութիւնները խեղդւում, մնում են իրենց սաղմային դրութեան մէջ և այդպիսի մարդուց, Պէ. Վանդոլի ասելով, «վերջ ի վերջոյ դուրս է գալիս շատ-շատ մի լաւ և ծիշա հաշւապահ և ուրիշ ոչինչ»: Ծատ հաւանական է— ասում է մի ուրիշ Ֆրանսիացի գիտնական— որ այն հանճարաւոր անձնաւորութիւններից շատերը, որոնցով այսօր պարծենում է մարդկութիւնը, հասարակ մահկանացուներ կը մնային եթէ որ շրջապատւած լինէին կրթութեան ուրիշ պայմաններով: Եւ ընդհակառակը, կ'աւելացնենք մենք, զուցէ հանճարաւորների թիւը շատ աւելի կը լինէր, եթէ որ ամեն մի հանճար սկզբից կարողանար ընկնել ուղիղ ձանապարհի վրայ, զարգացման չափող պայմանների մէջ: Այս ամենը ի հարկէ է նւազեցնում ժառանգականութեան նշանակութիւնը, այլ միայն ցոյց է տալիս թէ ինչ ահագին ազդեցութիւն են ստանում դաստիարակութիւնը և կիանքի պայմանները ժառանգական յատկութիւնների զարգացման վերաբերութեամբ:

Բ.

Չնայելով որ ժառանգականութեան նշանակութիւնը չայնի էր դեռ ևս ամենահին ժամանակներում, չնայելով որ դեռ ևս Հիպոկրատի (վախճ. 377-ին Քրիստ. առաջ) գրքերի մէջ գտնւում ենք օրինակներ այդ նշանաւոր երևույթի մասին, այսու ամենայնիւ ժառանգականութեան օրէնքների ուսումնասիրութիւնը դեռ ևս շատ անորոշ և

ճապաղ է: Դարեւիւր մասնանիչ է լինում հետեւեալ հատուկոր
օրէնքների վրայ, որոնք աւելի արդիւնք են առանձին-առանձին
նկատողութիւնների քան թէ փորձերի վրայ հաստատուած գիտնա-
կան հետազոտութեան:

1) Օրէնք ուղղակի ժառանգականութեան: (Пря-
мая или непосредственная наследственность): Այդ օրէնքի տակ մտնում
են այն դէպքերը, երբ որ զաւակները իրենց Ֆիզիքական կամ հո-
գեկան յատկութիւնները ժառանգում են անմիջապէս իրենց ծնող-
ներից: Այդ դէպքում կամ երկու ծնողների առանձնապատկութիւնն
էլ հաւասարապէս փոխանցւում է սերնդին և կամ թէ ծնողներից
մէկնումէկի ազդեցութիւնը գերակշռող է հանդիսանում և որդին
ժառանգում է միմիայն հօր կամ միմիայն մօր յատկութիւնները:
Նկատուած է, որ ինչպէս մանչ (տղա) զաւակները կարող են աւելի նման
լինել իրենց մօր առանձնապատկութիւններին, այնպէս և աղջիկ զա-
ւակները կարող են աւելի նման լինել իրենց հայրերին քան թէ
մայրերին: Այս դէպքում ժառանգականութիւնը անւանում է
խաչաձև ժառանգականութիւն (перекрестная наследствен-
ность): Սուրբաբար կարծում են, որ զաւակները հօր կողմից ժա-
ռանգում են աւելի Ֆիզիքական, իսկ մօրից աւելի հոգեկան և
ըղային առանձնապատկութիւնները: Իժւար է եղած Ֆակտերի հի-
ման վրայ ապացուցանել այդ ենթադրութեան ճշմարտութիւնը.
բայց այսքանը յայտնի է որ մօր ազդեցութիւնը ժառանգականու-
թեան խնդրում իսկապէս աւելի մեծ է քան թէ հօր ազդեցու-
թիւնը: Եւ այդ հասկանալի է եթէ աչքի առաջ ունենանք այն
դերը, որ կատարում են երկու ծնողները զաւակների ստեղծագոր-
ծութեան խնդրում: Մինչդեռ հայրը մասնակցում է միմիայն սաղմի
բեղմնաւորութեամբ, մայրը բացի այդ մասնակցութիւնից, շարու-
նակում է իւր արիւնով զարգացնել բեղմնաւորուած սաղմը, իննը
ամիս անընդհատ կրում և սնուցանում է նորան իւր արգանդի մէջ
և ծնելուց յետոյ դեռ շատ ամիսներ շարունակում է կերակրել իւր
մարմնի հիւթով: Հասկանալի է ուրեմն որ մօր ազդեցութիւնը
սերնդի թէ Ֆիզիքական և թէ հոգեկան կազմաւորելի վրայ աւելի
նշանաւոր պէտք է լինի քան թէ հօր ազդեցութիւնը: Իւնդի հա-
ւաքած վիճակագրական տեղեկութիւններից երևում է որ հոգեկան

հիւանդութիւնների ժառանգականութիւնը մօր կողմից 35% աւելի է քան թէ հօր կողմից: Նոյնը ապացուցանում են նաև Էսկիրոլի, Բիչլարժէի, Շարիօի և ուրիշ նշանաւոր գիտնականների հետազօտութիւնները:

Սօր գերակշռող ազդեցութիւնը սերնդի հոգեկան և ջղային կարողութիւնների վրայ ժողովուրդը վաղուց արդէն հասկացել է այն զարմանալի բնագլխամբ, որով մարդկութիւնը շատ անգամ առաջնորդում է բիոլոգիական խնդիրներում: Յայտնի է թէ արեւելեան ազգերի մէջ ինչքան խիստ են վերաբերում դէպի աղջկայ ընտրութիւնը. ամենափոքր արատը, մանաւանդ հոգեկան և ջղային համակարգութեան կողմից, օրհասական նշանակութիւն է ստանում աղջկայ համար: Այնտեղ, որտեղ ամուսնութիւնը ոչ թէ կարիերայի և նիւթական հաշիւների խնդիր է, այլ սերնդի պահպանութեան համար սահմանաժամ սրբազան խորհուրդ, արտաւոր աղջիկը դատաւարուած է անսպասկ մնալու և այդ դատաւարտութիւնը միանգամայն արդար և հիմնաւոր է: Հայկական այն առածը, որը ասում է «անկը տես՝ կտանն առ, մէրը տես՝ աղջիկն առ» բացի իւր բարոյական նշանակութիւնից բովանդակում է իւր մէջ նաև խորին բիոլոգիական իմաստ:

2) Օրէնք անուղղակի կամ յետադարձ ժառանգականութեան (посредственная или возвратная наследственность): Այդ օրէնքի տակ մանում են այն դէպքերը, երբ որ ժառանգաբար փոխանցում են ոչ թէ հօր ու մօր այլ պապի կամ տատի առանձնացատկութիւնները: Երբեմն ժառանգականութիւնը արտաշայտում է աւելի ևս ուշ—երրորդ, չորրորդ և մինչև իսկ վեցերորդ կամ աւելի ևս հեռաւոր սերնդի մէջ: Հեղինակներից մէկը չիշում է մի ընտանիքի մասին, որտեղ իւրաքանչիւր երեք սերնդից յետոյ չորրորդ սերունդը ծնւում էր վեց մասներով. միջանկեալ սերունդները մնում էին ազատ այդ-արատից, և այդպիսի օրինակներ բազմաթիւ են ժառանգականութեան վերաբերեալ գրականութեան մէջ:

Այդ օրէնքը, որը անւանւում է նաև ատաւիղմ, ցոյց է տալիս այն մեծ ազդեցութիւնը, որը նոյն իսկ հեռաւոր նախնիները գործում են ապագայ սերունդների վրայ: Ստաւիգմի ազդեցութեամբ Դարւիներ և նորանից յետոյ եկող գիտնականները բացառ-

րում են մի շարք երևոյթներ, որոնք մինչև այդ ժամանակ մնում էին անբացատրելի: Յայտնի է, օրինակ, որ երբեմն-երբեմն երևան են գալիս պողաւոր կամ մաղապատ մարդիկ. այդ հրէշները զիտութեան համար առաջ համարուում էին մի-մի հանելուկներ և ընդունուում էին ինչպէս «բնութեան խաղեր» (lusus naturae): Դարւինը ցոյց տւեց որ այդ հրէշները ուրիշ բան չեն բաց եթէ հարազատ ժառանգներ այն հեռաւոր մարդուն, որը իւր կազմւածքով աւելի մօտ էր մարդանման կապիկին քան թէ այժմեան Ասաւածային պատկերը կրող մարդ արարածին: Յետագարձ ժառանգականութեան օրէնքի շնորհիւ այդ կապիկանման մարդը նոյն իսկ հազարաւոր սերունդներից յետոյ կարողանում է վերաստեղծել իւր պատկերը իւր ապագայ զաւակներից մէկնումէկի վրայ: Այդ բաւական չէ, մարդկութիւնը իւր պատմական կեանքի ընթացքում երբեմն-երբեմն կատարում է այնպիսի շրջաններ, որոնք կրում են իրենց վրայ հեռաւոր նախնիքների հոգեկան առանձնաչատկութեան զրօշմը: Այդպիսի դէպքերում ազգերը կարծես յետ են դառնում մի քանի տասնեակ կամ մինչև անգամ մի քանի հարիւր սերունդ դէպի յետ և արտայայտում են այնպիսի բնազդումներ, որոնք յատուկ էին միայն այդ անցած և հեռաւոր սերունդներին: Լոմբրոզօն ժամանակակից անարխիստների շարժումը բացատրում է ստուախզմով. այդ շարժման մէջ նա նկատում է այն բնազդումների վերածնութիւնը, որոնք յատուկ էին մեր վայրենի նախահայրերին: Մաքս-նորդաուն նոյն օրէնքով է բացատրում Ֆրանսիական զրականութեան մէջ վերջին ժամանակներս հանդէս եկած դէկադէնտների և սիմուլիստների դոյութիւնը:

Սնուղղակի ժառանգականութեան են վերաբերում նաև այն դէպքերը, երբ որ զաւակները ժառանգում են ոչ թէ իրենց ծնողների, այլ կողմնակի ազգականների յատկութիւնը: Այդ դէպքում ազգում են գլխաւորապէս հօրեղբայրը կամ մօրեղբայրը, հօրաքոյրը կամ մօրաքոյրը: Այս երևոյթը այնքան սովորական և այնքան յայտնի է որ մինչև անգամ առածի կարգ է անցել: «Հարազատ որդին կամ հօրեղբորը կը զայ կամ մօրեղբորը» — ասում են թուրքերը:

Նկատւած է նաև մի ուրիշ թէև հազւագիւտ բաց վերին աստիճանի հետաքրքրական երևոյթ: Այրի կինը երկրորդ անգամ մար-

զու գնալով ծնում է զաւակներ, որոնք թէ դէմքով և թէ բնաւորութեամբ նման են լինում ոչ թէ իրենց հարազատ հօրը, այլ իրենց մօր առաջւայ ամուսնուն: Այդ տարօրինակ երևույթը, որի ճիշդ բացատրութիւնը գիտութիւնը դեռ ևս չէ կարողացել գտնել, ապացուցւած է բազմաթիւ օրինակներով և նկատւած է մինչև անգամ կենդանիների մէջ:

3) Օրէնք համաճարակ ժառանգականութեան (гомохронная наследственность): ժառանգական յատկութիւնները զարգանում և արտայայտուում են մի որոշ ժամանակից յետոյ. նկատւած է որ շատ անգամ այդ զարգացումը սերնդի մէջ տեղի է ունենում միևնոյն հասակում՝ ինչ հասակում որ տեղի է ունեցել նախնիքների մօտ: Մենք գիտենք մի ընտանիք, որի անդամները երեք սերունդ շարունակ խելացնորեւել են քսանեօթը տարեկան հասակում: Դէժերինը չիշում է բազմաթիւ օրինակներ, որտեղ ինքնասպանութիւնը, խելացնորութիւնը և ուրիշ հոգեկան ու ջղային անկանոնութիւնները օրհասական կերպով զարգացել են միևնոյն ընտանիքի անդամների մէջ միշտ միևնոյն հասակում: Աւելի յաճախ ժառանգական յատկութիւնները երևան են գալիս սեռական զարգացման շրջանում. զուր չէ այդ հասակը միշտ երկիւղ ազդում ծնողներին: Սեռական զարգացումը մարդու ամբողջ կազմւածքի մէջ առաջացնում է բուն յեղափոխութիւն, որը յեղաշրջում է ոչ միայն ջղային և հոգեկան կարողութիւնները, այլ և առաջացնում է մարդու նոյն իսկ ֆիզիքական կազմւածքի մէջ մի շարք տեսանելի և շօշափելի փոփոխութիւններ, որոնք լաւ յայտնի են ամեն մէկին: Ոչ պակաս օրհասական են կանանց համար նաև յղութեան և ծննդաբերութեան շրջանները: Եատերին յայտնի է որ այդ ժամանակ կանայք ենթարկում են հոգեկան և ջղային այլ և այլ խանգարմունքների. այդ խանգարմունքները կամ պարբերաբար կրկնուում են իւրաքանչիւր յղութեան և ծննդաբերութեան ժամանակ և կամ մէկ անգամ երևալով դառնում են տևողական և անբուժելի: Քննելով այդ տեսակ կանանց կեանքը և ցեղագրութիւնը համարեա միշտ կարելի է ապացուցանել, որ այդ երևույթները հետևանք են ժառանգական ջղայնութեան:

Սրանք են ահա այն հատ ու կտոր օրէնքները, որ գիտութիւնը

մշակել է ժառանգականութեան խնդրի վերաբերութեամբ: Պէտք է զարմանալ, որ մի այդպիսի նշանաւոր խնդիր, որը բիոլոգիայի համար նոյնքան մեծ նշանակութիւն ունի, որքան և եզոցութեան կախը» և «բնական ու սեռական ընտրողութիւնը», այդչափ քիչ է մշակած գիտութեան մէջ: Սորա պատճառը այն է, որ ժառանգականութեան խնդիրը իսկապէս շատ ժամանակ չէ որ դարձել է գիտնական հետազօտութեան առարկայ. իսկ ժառանգականութիւնը, ինչպէս որ նոյն իսկ բաւը ցոյց է տալիս, պահանջում է ուսումնասիրութիւն մի քանի սերունդների ընթացքում:

Աւելի ևս անմշակ է ժառանգականութեան էութեան, նորա պատճառների բացաղբութիւնը: Ինչպէս և ի՞նչ ճանապարհներով նախնիքների առանձնայատկութիւնները փոխանցում են ապագայ սերունդներին: Ի՞նչ ոյժի կամ ի՞նչ ազդեցութեան շնորհիւ ծնողներից անփոփոխ անցնում են զաւակներին այնպիսի չնչին առանձնայատկութիւններ, ինչպէս են մազերի և աչքերի գոյնը, ականջների ձևը և այլն և այլն: Դարւիւնը, Սպենսերը, Հէկկէլը և մասնաւոր Վեյսմանը այդ խնդիրը լուծելու համար առաջարկել են մի շարք աւելի կամ պակաս սրա կիտ ենթադրութիւններ, որոնք մինչև այսօր էլ դեռ դուրս չեն եկել ենթադրութեան շրջանակից: Սենք հրաժարում ենք կանգ առնել այդ ենթադրութիւնների վրայ, որովհետև նրանց հասկանալու համար՝ հարկաւոր է նախապէս հաղորդել մի շարք տեղեկութիւններ մարդակազմութիւնից, հիւսւածաբանութիւնից (գիստոլոգիա) և սաղմաբանութիւնից (էմբրիոլոգիա). իսկ այդ շատ հեռու կը տանէր մեզ ներկայ յօււածի շրջանակից, որի նպատակն է միայն ընդանուր հասկացողութիւն տալ ժառանգական երևոյթների մասին:

(Վերջը լաջարդ համարում)

... քան թէ զմեզնիս արեւոյցնի վրայն...
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց
... մեզնիս արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց

ՓՈԹՈՐԻԿՆԵՐ

(ՄԱՆՔԱՆԻՄ ԸՆԿԵՐՆԻՔ ԵՒ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՎԵՐՈՒՄ)

... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄՈՒՐՅԱՆ

... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց

Պատանեկան անմեղ կեանքի այս երևոյցն Երեւոյցնի վրայն
Սիրոյ անհուն պանջանքները վշտերն են և սիրելիս...
Ձեր փառքը միշտ կ'անմահանայ մեր բարեխոյս սրտերում,
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց

Պատանեկան անմեղ սերը մեզ տանում է մի աշխարհ,
Որտեղ չկան հաղաչանքներ, ախուր ձայնը շղթայի...
Մ' նորա միշտ սիրելի են սիրելի էք մեզ համար,
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց

Երբ մեր սիրտը չունի հանգիստ՝ փոթորիկ ենք որոնում,
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց

Երբեմն մեզ վիշտն է մտում, ձանձրանում ենք այս կեանքից,
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց

Բայց շուտ կը գայ ծերութիւնը, որպէս ձմեռ դառնալից
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց
... արեւոյցնի վրայն զմեզնիս զուամենցնի մտիւրդսն յիս ցոյց

ԼԱՅՈՂ ՈՒՌԵՆԻ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Ես երազ տեսայ... Պառկած էի ես
Լացող ուռենու զով սաւերի տակ,
Որ, թեքւած դէպ ինձ մի վշտակցի պէս՝
Կ'ուզէր իմանալ իմ գաղտնի տանջանք...

Ես հիւանդ էի վերջին վշտերով,
Չունէի ուրիշ մի այլ սփոփանք.
Միայն ուռենին էր կարեկից շնչով
Գաղտնի վշտերիս ընկերը միակ...

Նա, որպէս մի կոյս՝ սգաւոր, տրտում,
Երկար վարտերը փռած իր կրծքին՝
Թափում էր վրաս գիշերւայ մթնում
Այրող արցունքը—նւէրը վերջին...

1 մայիսի, 1895 թ.

Ս Ա Ս ՈՒ Ն

(Ի մ' յիշատակարանից)

ՆԻԹԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ո Է Յ Լ Ա Ն Ի

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

Հ Օ Ր Օ

Անթապարտ կառավարութիւնը վրեժխնդրութեան առիթներ, միջոցներ որոնելուց չզաղարեց, 1879-ին զոհեց միր-ալայ-Ալին և 125 ուրիշներ, պէտք էր նոցա յիշատակը, սուերները հանգստացնել: Ունայն էին միջոցներ, միր-Աէ նոցա թելագրիչն, կամ, որպէս ասում են տաճիկներ, «աքլ-թէքնէսին» (խելքի դաշտ) էր, նա էր խրախուսում չընկճել, մաքառել իսլամի Ալլահը պաշտողի հետ և այս գաղափարն էր սնուցանում արդի օրուայ հերոսը, Գորպէն:

1886 թ. Բաղէշու կուսակալը (վալի) իւր հետն առած Մշու միւլթէսերի՛՛՛ (կառավարիչ) փաշան, մի քանի կեղտոտ հայեր, մի քանի հարիւր զինուոր յանկարծ Բերմ մտաւ, այնպէս որ ժողովուրդը յանկարծակի գալով՝ միջոց չունեցաւ դիմադրելու:

Միր-Յարօ՝ իբրև պահպանողական մարդ, զանազան ենթադրութեամբ համոզելով ժողովուրդը, արգելեց նոցա բուռն որոշումը, ծաշրայեղ ծրագիրը իրագործել:

¹⁾ Տես «Մուրճ» 1894 թ. № 10, 11—12 1895 թ. № 1, 2 և 3—4:

Թէ ինչ վնասներ տւեց վալին, անզթուլթիւններ դործեց, կարող են թուրքի կեանքին ծանօթ մարդիկ երևակայել: Լծի եզը քանդում, մորթում էր ոչխարն ու կովը, իւղն ու տոմաստը զօրքին կերակուր տալիս. դրեթէ պաշար չթողին Բերում 15 օրւայ մէջ: Ժողովուրդը մռնչեց, ուզեց սրից անցնել, այս տեսակ ծափահարութեամբ ողջունեց միր-Մուս-տէրարուկը, սակայն ռէս-Յարօ խնդրեց սպասել՝ մինչև որ մի անժխտելի առիթ ներկայանայ: Առիթը որոնողի ոտքի տակն է պառկած լինում:

Մի կապիտան, որ վաշաների հետ ռէսի տանն էր իջւանած, բաւ չհամարելով տւած վնասները, օգոստոսի 23-ին, առաւօտեան, մօտենում է հնոցին, ուր տանտիկինը կաթն էր տաքացնում, անասելի հայհոյանքով հրամայում է կաթը յետ առնել և նորանով իրեն լողացնել, իբրև թէ մի շատ օգտակար դեղ է եղել...:

—Դու ծնւո իս, ինչ իս,—դիտում է տիկինը հանդարտութեամբ,—գազան լը հըմլա բան չանի, դու կուզիս մզիք զառան տալ:

—Սուս, ա... լուտալով որոտում է սպան և կաթը հողի մէջ թափում՝ չզսպելով իւր կատաղութիւնը:

—Շուն դո՛ւ,—գոչում է սասնուհին անազին շերեփը նորա գլխին իջեցնելով,—զքզի ստիղ ուղր կուզի ճոպոյի բերան, շուն դո՛ւ, հըմկայ կի փխացում քզիք, միրնէ ինչ կուզիք, Ասուած ըզ ձըր քոք չորացու...:

Կապիտանը սուրը մերկացնելով վրայ վազեց, բայց քաջուհին շերեփը վահանի տեղ դործածելով մօտեցաւ սիւնին, որի կրծքից կախւած էին իւր անդրանիկ ճագերը, մի ձեռով խլեց վահանը, դէմ տւեց սպայի սրին, միւսով թուրը մերկացուց և սկսեց մեհամարու:

Տեսնող զինւորները շտապեցին սպաննելու քաջուհին,—պիտի չաջողէին, հանելուկ է:—Ցանտիկնոջ ձայնն առնելով ներս խուժեցին նորա գաւաղները և ռէս-Յարօ, վերջինս մի ապտակով զինաթափ արաւ վեհ. սուլթանի կապիտանին, ամրապէս կապեց սիւնի վերայ, մինչդեռ այս հօրից ու մօրից ծնւած կորիճները զինաթափ անելով վանում էին զինւորներին:

—Շուն ըզձզի,—մրմնում էր ռէսը նորան կապելով,—մկայ ձըր Մամուխ... Սլու... Սպուպէքրի... Լճ, կիկ, լորոտ մի ձագկի

ջասի: Տէրտըրու կի «մուրազը» կատարելու վրայ էր: Ռէս-Յարօ այլ ևս չյապաղեց,— առիթն ինքնին ներկայանում էր,— իւր քաջուհուն յանձնելով կասլած սպայն, որ երկու ժամ բարակ ճիւղոտով մի լաւ «ձաղկից» ըստ ամուսնին հրահանգին, Յարօ հոտաւ փաշաների մօտ:

— Ե՛, եզիզ (անհաւատ, կուսուրչտ)— վեհ, սուլթանի փոխանորդը որոտաց հեզնոտ ժպիտով, կամ կապկային ձեռով,— այսօր ինչ պիտի ուտենք:

— Մահ,— պատասխանեց ուէսը սառնութեամբ,— էն ժխօ շատի, շուն քզիք, յորին եզիտ տասիս, եզիտ դուն իս, խըրբան:

— Յիմարացար,— մեղմով, գունատելով մրմնջեց կուսակալը:

— Խինթ դուն իս, շնացիղ, միրնէ ինչ կուզիք... ըծօ, հերիք չի՞ ձիրն արածնիր, դո՞ւն իսասի՞ վըր քու զապտան իրթայ՝ ըզ մըրկիկ սպանի... Դալալ Սըբ-Գորգ զիննայ, հըմկայ վըր մժուկ էնիմ, մըր խորթեր քզիք կ'ակրտին, էլի, էլի, աւ ըզքօ լաշքար, զնա՞ ըզքօ ճամբախ, թըհ զիս ուզի ընցուկ տարու միր-Ալի աւայ չորնայ... սգալ...:

Ձեռները խաչաձև կրծքին դարսած, մի ոտը չկտ, միւսը յառաջ՝ զօրապետի նման կանգնած, այս ծանր նախադասութիւններն արտասանեց առանց յուզման ամենաթեթեւ շարժումի: Վալիի և շրջապատողների երակներից սարսուռ անցաւ: Առօ, ապշած էին:

— Լաւ,— լուռ ժիւնը խզեց վալին,— ես քօ լեզուն չեմ հասկանում պէտք եղածին չափ... թարգման, առաջ արի:

Այդ ժամանակ առաջ եկաւ անկիւնից՝ Բաղէշու հռչակաւոր Խաչմանուկեան Աւետիս էֆէնդին: Յարօ խորին զայրոյթով վերէն վար չափչըփեց այդ վաթսուկամեայ իժը, սպա կուսակալին շեշտակի նայելով՝ ասաց խրոխտ ձայնով:

— Իս զտի չըմ՝ ճանչի... ընի թարժման չըմ ընդունի:

— Ուրեմն ինչ անենք, ուրիշ թարգման...:

— Սզիք հըմկայ թարժման կէ վըր, քզի աւայ փաշանուն տըսնուչուրս տարի կիշխի տարս իտէլ,— դառնալով դրան մէջ կանգնած հայ կորիճին, որը ձեռը սրի դաստապանին դրած պատրաստ սպասում էր ուէսի հրամանը կատարելու,— ըծօ, Գորգ, ըստեղ կանչի ըզմըր վըժպիտ շօրօն:

Պատանին հեռացաւ: Լուռ անցան հինգ ընկերներ:

Ներս մտաւ մի՝ տարազով, դէմքով, ամեն տեսակէտով սասնցի հազիւ 24 տարեկան, թխադէմ, լեզուն կտրիճ, ձեռք սրին, առանց փաշաներին բարեկեր, շողուն բիբերը ուսին սեւեռելով:

— Ի՞նչ էիր ուզում, Յարօ, — հարցուց դաշն ձայնով:

— Խը՛լս, — կոկորդը հնչեցուց ուսը, — հըջրան իմ, Հօրօ՛, տեսի, հըջաը շնիր ըզինչ կուզին...

Հօրօ, — սա էր «վըրժպիտը» անկիւնից մի աթոռ ¹⁾ առնելով, ոտը ոտին վերայ՝ իբրև քաղաքակիրթ մարդ, բազմեցաւ կուսակալին դէմ:

Փաշան և շրջապատողները զարմանքով էին նայում պատկանելի երիտասարդին, որի կերպարանքից և շարժումներից երևում էր հոգեկան բարձր զարգացում և քաղաքակիրթութիւն:

Յարօ փոխանակ ինք խօսելով՝ հրամայեց նորան իւր ուղած ձևով բանակցել կուսակալի հետ, ոչ մի բանից չերկնչելով:

— Դուք՝ պարոն, որ տեղացի կլլաք կոր, — հարցուց Աւետիս էֆէնդի թեթև ժպիտով, — Մալ-խարնպ, գիտէք՝ որ Հայաստանի սովորական քաղաքավարութիւնն է հարցնել, մարդու մը, էֆէնդի մը նախ՝ որ տեղացի ըլլալը... օննան սորան, ծանօթանալ, խօսել ազգային, քաղաքական, ընտանեկան խնդրոց վրա:

— Պարոն, — պատասխանեց Հօրօ, — ձեզ է վերաբերւում հարցաքննել շողքորդելով, քծնելով, ձեզ ի՛նչ, ո՛վ եմ, որտեղացի եմ, ասացէք միայն վսեմութեանց դալստեան նպատակը, եթէ կուսակալը դուք էք: «Ականջէ ականջ» կապուտկեց մատնիչը բարկութիւնից:

— Մալ Խարնպ, օննան սորան, ուսաստանցի ըլլալը բէլլի կընէ կոր: «Ուսաստան» բառը դաշոյնի պէս խոցեց վալիի սիրտը, պատրաստեց հարցնելու, էֆէնդին ակնարկով լռեցուց: Սկսեցին բռն խնդրոյն դառնալ:

— Հարցուր ուսին, — հրամայեց կուսակալը, — ի՛նչ է ուզում ասել:

¹⁾ Սասնու մէջ անդիշատակ դարերից կալ աթոռի գործածութիւնը:

—Ինձ հետ խօսեցէք, — պատասխանեց Հօրօ մաքուր տաճկերէնով և իւրաքանչիւր բառը շեշտելով, — ձեր վսեմութիւնը կը բարեհաճի՞ արդեօք բացատրել իւր գալստեան պատճառը:

Վալին, զարմանալով նորա գրական արաբ-պարս-տաճիկ լեզուով խօսելուն, քաղաքավարութեան և իշխանավայել շարժումներին՝

— Մեր գալստեան պատճառը, — մրմնջաց ժպտալով, — էֆէնդի¹⁾, այցելել Սասնոց զիւղերը, հարկ ժողովել և վերադառնալն է:

— Ենորհակալ չենք ձեր վսեմութեան այցելութիւնից նոյնպէս կարծեմ թէ հարկահան չէք: Վարող էիք երկու մարդով գալ փոխանակ 900—1,000 զինուոր վեր առնելու, այսպիսի՝— Աւետիս էֆէնդին ցոյց տալով— ցած կենդանիներ բերելու, խեղճ շինականներին ճնշելու, պատիւ, հարստութիւն, մինչև անգամ՝ կեանք զրաւելու, միթէ պատիւ են ձեզ այս ամենը, հարստահարութեան անձնն էք դնում «այցելու թեան»: Դուրս ելէք, տեսէք ձեր վայրագ զօրքին անկարգութիւնները: Մենք պարտաւոր ենք որոշեալ հարկը վճարել՝ ոչ թէ կողոպուել բազմակողմանի կերպով, տուփանաց չափուրդ տալ: Աչքդ բաց, վսեմ, փաշա, այստեղ Սասուն է, բողը և բողարածը կը սպանեն բարոյական հասարակութեան ձեռք, միայն ձեր զիրքը այժմ ազատում է ձեզ, թէ ձեր զօրքը կոտորածից... Հեռուապէս՝ առաջարկում են ձեզ այսօր և եթ հեռանալ Բերմից քանի որ կոտորած չէք... Ապա թէ ոչ... մի մահկանացու անգամ չպիտի ապրեցնենք:

Պուստիալը զսպեց կատաղութիւնը, շատ բաներ անելու էր Հօրօի գլխին, եթէ ուրիշ տեղ լինէր, բայց՝ Սասուն, Բերմի մէջ, ուր 1,500 կանոնաւոր զօրք կորակոր պարտւած փախան, ուր ամեն տարի արիւննուշա էշիրէթներ էին ջախջախուում՝ ինքն ինչ կարող էր անել, լռութիւնը տրամաբանական գատու:

— Մ'ս, իբրև ներկայացուցիչ Բերմի, — շարունակեց Հօրօ, — կամ Սասնոց, առաջարկում եմ հեռանալ, եթէ ոչ մինչև կէսօր բոլոր Սասուն զինւած պիտի տեսնէք մի րոպէ, ապա գնաք Ալի-բէկին միանալու:

— Լաւ, — մրմնաց կայսեր փոխանորդը, — հարկը վճարեցէք, կ'երթանք:

¹⁾ էֆէնդի — Տէր. մեծ ածական է, մեծ մարդու կողմից եթէ արել:

—Որքանն տալու ենք...

—1,000 քիսայ, (50,000 ուռքի):

—Շատ բարի, հաճեցէք ներկայել վեհ. սուլթանի հրամանը, գուցէ ռիսալաժ լինիք, 1,000 քիսայ մի քաղաքից հաղիւ կարելի է պահանջել, ուր մնացած մի փոքր գիւղից...

—Իշխանաբար կը խօսիք ինձ հետ,—գոչեց կուսակալը կատաղութիւնից:

—Գուցէ Սասնոյ իշխանն եմ, պարոն, անկախ մարդու հետ էք:

—Էյ հէ... հայը իշխան:

—Մի բարկանաք, փաշան, Սասուն թաղում է բարկացողը, գոչողը... Դուք և մենք օրինաց ենթակայ ենք, օրինաւոր հրամանին հնազանդ է Սասուն, ուրեմն՝ ցոյց տւէք վեհ. սուլթանի հրամանը, մենք միայն նորան ենք ճանաչում... Թողէք Հայ-իշխան բռնի ծամաճուխը:

—Ես եմ հրամայում, պէտք է վճարէք...

—Դուք ոչինչ էք, ձեր հրամանը ձեր ականջից դէն չէ կարող գնալ:

—Յանուն վեհ. սուլթանի, իմ տիրոջը...

—Վեհափառի հրամանը միշտ յարգւած է... բայց դուք, չէք կարող ըստ Դիւստիւրի (օրինագիրք տաճկաց) տրամադրութեան նոր օրէնք գնել և այլն: Միայն սուլթանի դրած օրէնքը կարող էք իրագործել... Դուք կարող էք այժմ ստանալ սովորական հարկը, կնքել ընկալագին ու հեռանալ:

—Որքանն կը տայիք տարին:

—Ութ քիսա:

—Ուրեմն՝ ութ տարւայ հարկը 64 քիսայ կը պահանջենք. նոյնպէս Համիդէի գնդերը (? Խմբ.) իրար գումարելով կանէ 1000 քիսայ:

Հօրօ ջախջախիչ փաստերով ջնջեց նորա 1000 քիսայ տուրքը, մանրավաճառի պէս սակարկեցին, 1000-ը իջաւ 120-ի, սորա մի երրորդն էլ հաշուեցին զօրքի ծախքը, մնացած ութսունն իսկոյն վճարելով ստիպեցին հեռանալ:

Սորանից յետոյ սկսեցաւ կապիտանի դատը, կուսակալը նորա կրած պատիժը բաւ համարել խնդրեց, ուստի արձակեցաւ:

Աետիս էֆէնդու թելադրութեամբ, վալին շատ աշխատեց

շողոքորթութեամբ գրաւել Հօրօն, զանազան խոստումներով իրանց հետ տանել, վասն զի՝ Աւետիս Խաչմանուկեան Մշոյ Քաղաքական Ժողովի անդամ՝ Կ. Պոլսեցի՝ Վարդան Էփէնդի, Զիարէթցի Քաթոս աղա վկայած էին Հօրօի մասին շատ վատ և իմացուցած թէ դա էր այն սպիտակ հովանոցը ձեռին, այլ և այլ տարազով շրջէկը, որին պաշտում էին Մշեցիք և Սասնեայք. նա էր Տափկայ բէկի տունն ու տեղը, ցեղը յանկարծ օղը հանող, ոչնչացնող, մի խօսքով՝ դա էր իրենց որոնածը:

Նոյն օրը վալին հեռացաւ, առանց իւր բուն նպատակին հասնելու, թէև որոշած էր մինչև սեպտեմբեր 20-ն մնալ, այրել ու ոչնչացնել զիւրը:

Սասնեաց փոխարէն տուժեց Մշու զաշա, հարսներ, կոյսեր կորուցին իրանց պատիւները, որչափ ոսկիներ խլեցին մերկ շինականներին, քանի աղքատների օրական պարէնը գրաւեցին, ծեծ, բռնութիւն, սպանութիւն և այլն, թողնում ենք երեւակայութեան:

Վալիի մեկնած օրը, միւսնոյն սենեկին մէջ տեղի կ'ունենար մի այլ տեսարան: Վարժապետ Հօրօն հրաժեշտ կը տար իւր սիրական սաներին, որոց երկու տարի դաս էր տւած և դաստիարակած. արտասուում էին պատանիք և մանկալիք՝ յիշելով այն սիրւած դասերը, Հօրօի գորովալի ձայնը, հայրական գութն ու խնամքը, որոնցից զրկւած էին մի քանի օրից ի վեր: Կոցւում էր զխոտութեան դասը, հեռանում էր սիրական ուսուցիչը:

Կարելի չէ նկարագրել սիրախառն արտայայտութիւնները, անկեղծ համբոյրները, որ դրոշմեցին մատաղատի աշակերտները նորա քնքոյշ ձեռներին:

Երբ առանձին մնաց, սկսեց շտապով ժողովել իւր թեթև ինչքը՝ թղթերը, զգեստները, զինքը՝ աւելի ոչինչ: Ապա նայելով մի անկիւն սկսեց ծխել՝ իւր յուզումը զսպելու մտօք:

Գուռը բացեց մեղմիկ, Հօրօ մեքենայապէս աչքն այն կողմը յառեց, ներս մտաւ մի մաքուր հաղնւած, տասնուհինգ տարեկան պատանուհի: Սա Սիմա հերոս Գորպէի քոյրն էր, որ իւր մօրաքոյրը ռէսի տուն էր բերած:

—Մհ, էլմն,—վեր ցատկելով մրմնջեց Հօրօ,—հըր մնացիր...

—Փացիթ ինք յարա, հըյրանիմ Հօրօին, մեռնի զքո արևուն

Ելմա: Մըկայ ճժիր կի ժղլին թըհ գմեր վրժըպիտ կիրթայ... կու-
զիք լալ, ամըչցայ ճժերուց... տիճր տ'իրթաս:

— Ինչո՞ւ լացիր, հրեշտանկս, — պատասխանեց Հօրօ կուսի ճակ-
տին գրողմեղով մի համբոյր, — այո՛, գնում եմ, ընկերներիցս մինը
ձեր գիւղը, ձեր առւնը եկած ինձ է սպասում: Այստեղ ուրիշ ու-
սուցիչ պիտի գայ: Ես գնում եմ Սիմ, Ելմա ջան, քեզի մատաղ
լինի Հօրօն, բեր զէնքերս, կարծեմ առանց զէնքի քեզ սիրելի
չեմ, այնպէս չէ, կը սիրես զէնքը, երբ պատերազմ եմ քրդերի
դէմ... զու էլ պիտի գաս...

— Խը'խ, — պատասխանեց Ելմա:

Նոյն երեկոյեան հեռացաւ Հօրօ ի Սիմ: Այս պարոն կովկասցի
էր, ձրի ուսուցիչ ի Սասուն և պաշտելի նոցա:

Կ Ո Ւ Ս - Գ Ե Տ

Կուս-գետ գիւղն ընկնում է Քաջարենց սահմանը, ուր չկա-
րողացայ անձամբ երթալ, սակայն քաղեցի մի քանի թեթեւ ծա-
նօթութիւններ: Ինչպէս երբեմն յիշւած է պատմութեանս մէջ,
սորա կիսավայրենի են, ամենախորին ազիտութեան մէջ ապրում
են՝ բնակելով մի անմատչելի, մերկ ապառաժ սարի կրճքին,
որի ներքեւից անցնում է մի գետ. դա է «Կուս-գետը»: Աերևը սե-
պացած ապառաժ, ներքևը ձոր:

Արհեստ, գիտութիւն, մինչև անգամ մօտաւոր գիւղերի հետ
յարաբերութիւն երբէք ունեցած չեն: Կուս-գետցին երբէք չէ
թողնում իւր սիրական հայրենիքը, չէ գնում նորա սահմանից
հեռու, հէնց այդ պատճառով էլ վայրենիութեան մէջ է մնացած:

Պէտք է ասած որ՝ ոչ մի սասնիկ պանդխտութեան չէ զիմում,
մեղ կովկասում իբրև սասնցի ներկայացողները խաբեբայ մշեցիներ
են, մեր Թիֆլիսում տեսած սասնցին միայն Մշու գիւղացին է՝ որ
մեղ ներկայանում է իբրև աղաա որդի, լեռնորդի սասնիկ:

Կուս-գետոցը զգեստը մասամբ նմանում է միւս սասնցոց,
բայց՝ ինչ, ահա, Հպրոն, Կուս-գետի ռէսը աչքիս առաջ կանգնած
է. այս տեսնելով կարելի է երևակայել թէ ինչ է իւր ստորագրաս
ժողովուրդը:

Մնա Կուս-գետցին:

Մի արջի, գալլի, ոչխարի, կամ այծի մորթի կապուած է թիկունքով, շալ կամ կտաւ մի երկար շապիկ էջնում է մինչև ծնկները, մի խիստ հասարակ շալից՝ գօտի սեղմում է նորա մէջքը, որից կախուած է մի հնադարեան դաշոյն, այդ է իւր բոլոր զգեստը։ Իսկ վարտիկ, գուլպաց, կօշիկ, կամ զլխի ապարօշ՝ Ասուած սայ, ոմանք սուանց գլխարկ, մի իւզոտ խոյր են կրում այն ժամանակ, երբ մի անձանօթ հիւր է գնում։

Լւացուել, մաքրուել, մազերը սանրել չգիտեն, մանկութիւնից չխուզուած, անյարդար մազերը խճճուած, թաղիքի պէս պնդացած գոցում են մէջքն ու աչերը իբրև տիպար «դէրու-իշ»։ Դէմքերը սոսկալի է, երկու սուր ու սլաք աչք նկատուում են հաստ մազերի արանքից. սուր քիթ, արեակէզ դէմք, կեղտոտ մօրուք (ածելելը բացառութիւն է) նշմարուում է իւրաքանչիւրի վերայ։

Որքան որ վայրենի, կատաղի, այնքան քաղցր, աշխոյժ են. աւազակութիւնը իրանց զարգացած արհեստը լինելով «հըյրան իմ քի, հու գիդ'ի սիրիմ, զլտի եսի պիաքի» ասելով են կողոպտում, բայց՝ ոչ բոլորովին մերկացնում։

Ամենահարուստը հազիւ կարող է 5—6 այծ ունենալ, որովհետև արօտատեղի չունին, մանաւանդ բացի այծից չեն կարող ուրիշ կենդանի պահել, որն էլ որ պահին սեպացած սարերից գլորուելու է վար։ Շատ անգամ տեսնուում են Կուս-գետցիներ, որ մի այծ յափշտակած դրացի գիւղից, շալակած ամենայն արագութեամբ սլանում են անդունդների եզերքից, որտեղից օձն անգամ գլորուում է սողալիս...

Արդ՝ Կուս-գետը մի քանի հարիւր տնից բաղկացած գիւղ է, ահագին սարի զանազան կողմերը տարածուում են նորա տնակները միմեանցից բաւական հեռու։ Ինչպէս իրանց զգեստը, այնպէս և տնակները խիստ ողորմելի են։

Սոցա անցեալը խիստ մթին, ներկայն խաւար, ապագայն սխուր է՝ քանի որ չունին գիտութիւն, արևստ։

Կարգալ բաւը բոլորովին անձանօթ է նրանց. եթէ վեր աւնես մի թուղթ կարգաս Կուս-գետցու մօտ, — եւս, — կ'ասէ զարմանքով, — մըլթուկ դիննայ, զքօ փուր քաջ (դև) կէ, դու իմը՞ կի ժղլիս թղթու հիտ...»։ Հրաշալի լուրն անմիջապէս տարածուում է, զարմանաց և երկիւղի առարկայ դառնում կարգացողը։

Քահանայ, ուսուցիչ չունին տարիներով չեն տեսնում կղերի երես, այդ պատճառով էլ չգիտեն աղօթել, միայն՝ Քրդաուզ, Ապածամէր (Ասուածածին) և այլ սրբերի անուններ կ'արտասանեն առանց որոշ գաղափար ունենալու նոցա վերայ:

Մի խօսքով կարծես խոր նահապետական աշխարհի մէջ են ապրում:

Ընթերցողիս սոցա նկատմամբ լաւ գաղափար տալու համար, մէջ եմ բերում հետեւեալ իրողութիւնները, որոնց մէջ շօշափուում են պատմական, հնախօսական հարցեր և բացատրում ինչպիսի արարածներ լինելները և թէ ծիծաղաշարժ հանգամանքներով մի տեսակ տխուր գաւեշտ են ներկայացնում:

Անթանէի Վանայ վանահայր, կատակաբան, սասնցի Պետրոս վարդապետը մի անգամ զնում է Կուս-գետ. երբ հասնում է Կուս-գետ լեռը, որի ներքեւն է զիւղը, իսկոյն հագնում է սև երկայն վերարկուն, դնում վեղարը, գաւազանի օղնութեամբ իջնում զիւղ: Առաջին հանդիպած գրան առաջ երեք վայրենի կանգնած վիճում էին. երբ վարդապետը տեսան, սոսկացին, հիզրա կարծելով ուզում էին փախչել:

—Ողջուն ձգիք՝ լեռան իշեր, —ասում է վարդապետը:

—Ըճօ, շնախղիբ, մարդ ի էլի, —մրմում են իրար հանդարտեցնելով, —գէտ լը իկուկ զմըր զոչխար հարցու...

—Լօ, Պաւօ, մարդ չի, —գիտում է մեզ նորա տարազից այսպէս մակաբերելով, —սըբ-Խաշ-Թրիկ գիննայ, զրոտի ուրիշ տպայի, Հօլիկ, կանչի զմիբ Հպլօ, թըլի՛ր գէ, մժուլ էնի, իմնանք ըզ ինշ տպայի: Հօլիկ աճապարում է մի ժայռի գլուխ ցցելով անդունդն ի վար գոռալ, նորա ձայնի արձագանգը մի քանի անգամ կրկնելուց յետոյ, անդրադառնում էր ղ՛... լօ...: Վարդապետը նշմարելով նոցա երկիւղը՝ սխտում է դէմքի մկանունքը ծամածուել, աչքերը խոշոր մոլոր շուրջ յածել, գլխի վեղարը՝ ճակատը խաղացնելով, տատանել և այլն կատակերգական ձևեր անել:

—Սըբ-Մըրթուկ, սըբ-Խաշթուր գիննայ, — իսկոյն յետ յետ գնալով ստորոգում է մինը, —ըսի մարդ չի, զիլու ճուպոնի, սատանի պապի, լաօ, վալլա սըբ-Ախպերիկ հըյտը ջանաւեր տպայ մզիկ ուղրիլրե՛՛ վըր վախցու, ուտի... աշի, աշի, հըյրանիմքի՛՛ Սատէ, աշի իմը՛՛ կէնի, գլխի պամպուղ մըր Արեգի Միզրին ա... այ լիսկտի կի:

—Հպլօ, Հպլօ,—ձայնում էր միւսը ժայռից,—բծօ, Հպլօ, վազի դիտար իկիրի սատանի ճոպուն, էկի, ուր հիտ մժուլ էնինք: Շատ չանցաւ, ձորից մագլցելով վեր բարձրացաւ մի ուրիշ լեռնական, այդ նորեկը Հպլօն էր:

Սուր, վառվռուն աշերով, դէմքը, կուրծքը արևակէզ, ոտները մերկ, միայն մի շալէ գոտիկ միացնում էր շապիկն ու հագած մորթը այն մարդու՝ որի անունը արծազանդ տւեց սարերի մէջ: Ընկերները ցոցց տւին վարդապետը նորեկին. Հպլօ նախ՝ զարմացումով, ապա՝ ժպտելով մօտեցաւ նորան, վար առաւ իւր քամակի աջծեամի մորթին, տարածելով քարի վերայ՝ ասաց.

—Բարի իս էկի, տէր-Խշտօ ¹⁾, հըլլանիմքի, պամպլուզ, դու տիօր, ըզմըր Կուս-գիտ, տիօր, վայ, բարի իս էկի, չէար հէազար-բարի իս էկի, վըր մըր աչացն իս էկի, նատի չըլտըտիզ, զիմ տէր-Խշտիկ: Վարդապետը բազմեցաւ Հպլօի մորթին վրայ: Գիւղացիք սկսեցին Հպլօին մօտենալ զանազան հարցերով:

—Հպլօ, ըն ի՞նչ տպայի...:

—Լօ, Խշտօի, պամպլուզի, պամպլուզ, տաւրնիր:

—Ըծօ, պամպլուզն ի՞նչ աւայի:

—Լօ, մալը միրթնիր, բխովիք միծցի, զհաց բալաշիք կիրի, չըք ճանշնայ, վըրդըպիտի, հըլլը մարդուկ, վըրդըպիտի:

—Լօ, Հպլիկ, չընք ճանշնայ, էն ի՞նչի վըրդըպիտը:

—Լօ, շնախտնիր, իրցու պապի, իրցու պապ ²⁾:

—Հայ վաւելէր,—զարմացմամբ աղաղակեցին, բոլորովին երկիւղից ազատաձօ՝ մօտենալով վարդապետին,—էրէց վըր կիսին,

¹⁾ Այս ածականով պատուում են եկեղեցականին. անշուշտ բարձր նշանակութիւն ունի, սակայն հակառակ իմ խուզարկութեան չկարողացաւ բուն իմաստը բնութենել, ուստի երբ որնէ մէկին Խշտօ են ասում, ուշոււմ է հպարտութիւնից. Ծան. 2.

²⁾ Պէտք է գիտենալ թէ ժողովրդական ոճերը և նոյա խօսակցութեանց բուն ձևերը նույնութեամբ ենք մէջ բերում: Չպէտքէ զարմանալ Սասնցու անսեթեթեթ ոճին և պարզմտութեան, նոքա չէն որչում ոչ մի անհատ ընկերից. ինչպէս չարդում նախատում են նոքա ընկերը, այդպէս էլ վերաբերում են շատ բարձր մարդու նա անխտիր, երբեմն էլ ծանր հախճանքով: Ծան. 2.

գէտի, հըմալ կեղնի, սպիտկերիս սըբ-Սխպերիկ մինք չընք ճանչնայ:

Վարդապետը կէս ժամ նստեց, խօսեց, բաղմաթիւ կատակների նիւթեր հաւաքեց, ապա Հալօին դառնալով՝ հարցուց:

— Հալօ, հըյտը մարդիր խընծքի մինծ, կտրիճ, խեղացիին, պապօ, իմը՛լ կեղնի վըր դիու ըզ վրդպիտ կի ճանչնաս, ընունք տաւրու աւայծի կիշին:

— Ըծօ, պամպուլ, — քահքահ խնդալով, ձեռը ձեռին զարնելով բացականչեց Հալօ, — ըգունք զիւղից դուս չընգացի, դու զՀալիկ ձանձ կիսպիս, Հալօ շահրստանի օլրաի:

— Շահրստան...:

— Խը՛խ:

— Գեօր ես գացի, Մնւշ, Բաղի՛շ:

— Լօ, չի, ի Մակկայ ջաղաց, Քաղաքենց օլքէն:

— Գիննամ՝ վըր դիու գաւազիտունիս, — ընդմիջեց վարդպետը հեգնական ժպիտով:

— Միրն գաւազիտուն 1) Հալօնի, իրցու պապ, — մէջ մտաւ Հոլիկ Հալօին նայելով, — Վալլա, սըբ-Խաշթուր զուր խիւքիցնի տի յըտուր:

Վարդապետը յիշատակներն ամիոփելով երևակայեց Կուս-գետի և Մանկըկայ ջրաղացի երեք ժաման հեռաւորութիւնը, Հալօի ճանապարհորդութիւնը ծաղրելի էր: Հալօ յիշեալ ջրաղացում տեսած էր Մնտօ-Յարութիւն վարդապետը, այս պատճառով ճանաչեց Պետրոսի «իրցու պապ» լինելը:

— Փամտուն ունիք, — հարցուց վարդապետը:

— Փամտուն ինչ աւայի, զէն կուտի՛ն:

— Լօ, չի, աղօթրան կ'իսիմ:

— Վաւիլէր, զաղօթրնից կի ժղլիս, կէ, ունինք:

— Հիւսի:

— Ըծօ, չի, հըյղը տիղնի, — լեռնագոտին ցոյց տալով, — հպա՛ իմը՛լ ա՛սիս թը՛հ Կուսգիտն ըլ հայի: Պապօ, Կուսգիտ հայի, հայի՛ըլ ճըտի, Սանսարայ ցիղնի, գիննամս Դաւթայ նաղիլ, էնի ըզ մըր

1) Կաւազիտուն, հասկացող բանագէտ:

պապուց ճոպոն. մինք ունինք սըբ-Մըրըթակ, սըբ-Սաշ-Թրիկ, Թըհ կուղիս ըզքզիք տանիմ ի սըբ-Սաշ-Թրիկ:

—Իրթենք, իշինք, —ասաց վարդապետը ոտքի ելնելով:

Հալո Հոլիկի ականջից փսփսաց ու դիւզ ուղարկեց, ապա կապիկի պէս մագլցելով առաջնորդեց: Վարդապետը Թէ Սգրօն՝ սասնցի լինելով հանդերձ, երեք ժամ, անտանելի դժւարութեամբ, զաւազանների ծայրերը ժայռերի հորիզոնական նեղ քարէշաւղին վերայ ամրապէս բեւեռելով հաղիւ կարողացան հասնել մի անշուք ծերպի առաջ:

Հալո աղէտի ծակ մտնող շնիկի պէս գլուխը, ապա իրանը ներս մղեց վարդապետը՝ Թէպէա զղջացած անհեթեթ ձեռնարկութիւնից հետաքրքրելով առաջնորդողի օրինակին հետևեց:

Խիստ դժւարացաւ նեղանցքից անցնելից ճետոյ, շուրջ նայեց, շիջիլավառ կանթեղների վախո նշուէներով նշմարեց մի ընդարձակ այր, որ ահագին ժայռեղէն հատորներով ինքնին էր յօրինւած, անհարթ, բայց՝ բանաստեղծական ընդարձակ կամարը ծառայում էր աղջամղջին մէջ:

—Պամպլուզ, Թեզ ծի տուր, — մրմնաց Հալո նորա ձեռից քաշելով:

Մի քանի րոպէ վերջ, երբ վարդապետի աչքերը տեսան մթութեան մէջ Թաղւած առարկաները որոշապէս, շուրջ նայեց, մարմարիօն, պորփիւր արձանների, պատուանդանների բեկորներ, կամարներում բեւեռած հինաւուրց ջահերի մնացորդներ, կանթեղներ կախելու օղակներ, վիմափոր խզիկներ, խորանաձև արձաններ, զոյնըզոյն քարերի անորոշ խորտակւածներ, ծածկելով այրի խորութեան մի մասը, ներկայանում էր նորան մի քայքայւած շինութեան տիպար, կամ Շպիցբէրգի անհաստատ կղզիներում վրայէ վրա դիգւած սառուցների կտորներ, որոց անչափ անկիւնաւոր փոսերի և շերտերի հետ խաղալով ոսկեզօծում են հիւսիսային նշույները մելամաղձոտ փայլով: Այս դառն աւերակ նորա աչքին ոչինչ էր, նա որոնում էր գոնէ մի քարեղէն խաչ, որովհետև դիտէր որ սասնցին շատ չէր գործածում պատկեր. մինչև անգամ Սիմ, Գալէգուզան, Բերմ չունին, ուր մնաց Կուս-դետը: Նա միայն գտաւ մի քառանկիւնի, սեղանաձև մարմարիոն քար, որի վրայ ցցւած էր մի ժան-

գահար, սրից կոփեաժ ու ձեւած երկաթէ խաչ: Թէև վարդապետը չէր հետաքրքրուում, բայց Հալո պատմեց հետեւեալը.

«Այս խաչի պատճառով ասում ենք սուրբ-Սաչ-Թուր (Սաչ-Թրիկ), սա առաջ եղել է կռատուն, մեր լուսաւորեալ պապը այս ձորին մէջ կուել է քրմերի հետ և չէ կարողացել յաղթել, ապա չգիտեմ ինչպէս, սպանել է մեր իշխանը և Նուսաւորի: Թագաւորին հետ դալով խորտակել է բոլոր կուռքերը, կանգնել է այս քարէ «վէմը», օծել է և նորա վերայ ցցել խաչը: Այդ խաչը հայոց Թագաւորի սարն է և շատ հրաշալի է դա»:

Վարդապետը Հալոի պատմութիւնից հետաքրքրուած վերցնում է մի պորփիւրի կտոր: Այդ կտորը այժմ ես դրած եմ Վարնոց Սանասարեան վարժարանը: Ես կարծում եմ արձանի ստինք, իսկ նոյն դպրոցի տեսուչ պ. Աբուլեան որոշ փաստերով հաստատում թէ մուրճի կտոր է եղել: Կնչեիցէ դա մեր հեթանոսական կրօնի սրբութիւնից մի անժխտելի բեկոր է. բայց խիստ քննութեան կարօտ է քարայր տաճարը:

Վարդապետը դեռ իւր հետաքրքրութիւնը չյազեցուցած, ներս խուժեց ժողովուրդը. նոքա եկած էին աղօթելու: Բոլոր Վուս-գետ այնտեղ էր հայ թէ քուրթ:

Չանց եմ առնում մանրամասն պատմել: Ժողովուրդը չգիտէր աղօթել, նոքա օրինակում էին Պետրոս վանահօր շարժումները: Նորա ձայնը սիրուն էր, բայց մի քիչ այծի մկրկոցի էր զարնում: Աստի ժողովրդի արձակման ատեն, տեսաւ մի պառաւ, որ տաճարի դուռը կանգնած կըլար: Մտեցաւ նրան և հարցուց լացի պատճառը:

Վաղափարաց զուգորդութիւնը լացեցրած էր խեղճին: Նա պատմեց թէ ինք ունի եղել մի սիրուն ուլ, քարից դրոբել սատկել է մի տարի առաջ, այժմ երբ վարդապետն երգեց, պառաւն իւր ուլն չիչեց ու լացեց: Պետրոս վարդապետ մարելու չափ ծիծաղեցաւ և սանիկ լեզու պառաւի ասածից ոտանաւոր յօրինեց, որը նոյնութեամբ մէջ եմ բերում:

- « Պամպուղ մզիքի կիսկ մի կեր,
- « Մնաւ խորոտ ուլուկ մ'է բեր,
- « Հըմալ եանդին մ'ուր կի մկկեր,

« Հուհու զքո ձէն զլմընէր,
 « Մըրըթուկ առաւ զէն մըր անէն,
 « Փիտցաւ, զնաց ընթու տունէն,
 « Հըմկայ վըրտիու պացիր պիրան,
 « Միտա՛ի իկաւ զիմ մըկմըկան...»

Վարդապետը պատասխանում է,—Ստուած զքո տուն անի վիրան:

Տէր-Պետրոս վերադարձին [պատմում է ս. Առաքելոց վանքի արդի վանահայր գեր. Յովհ. Տ. վ. Մուրադեանին. ազգանէր եկեղեցականն այս անցքը լսելով ինք փորձում է զնալ Կուս-գետ և զնում է:

Ահա գրագէտ վարդապետի պատմութիւնը իւր խօսքով:

«Ապրում էր իմ շգնիւ նախորդը, ես իբրև նորընծայ արեղայ, ամեն տարի, նւիրակութեան պաշտօնով զնում էի իմ սիրած Ստոււնը, քարոզում էի... ինչ որ պէտք էր:

«Մի անգամ հանդիպեցայ Անթանէի վանքի վանահայր զարձաբան Պետրոս վարդապետին, սա պատմեց ինձ Կուս-գետացոց մասին, իւր այցելութիւնը և այլն, որոշեցի երթալ գէթ աղօթել տաճարը մաքուր պահել սովորեցնել, վեր առնել մանուկներ, վանք տանել, դաստիարակել քահանայ և ուսուցիչ տալու մեր վայրենացած եղբայրներին... Պետրոս վարդապետ ինձ յանձնեց իւր մոնթը, Խղբօն, որ իւր ուղեկիցն էր եղած:

«Առաւօտեան արշալոյսով ուղի ընկանք: Անկարելի էր ձիով զնալ, Խղբօ առած էր սրածայր դաւազաններ. բևեռաւոր կօշիկներ, զէնք՝ որպէս զի անվտանգ տեղ հասնենք: Սուրբ Աթանէից հազիւ երկու օրում հասանք Կուս-գետ: Ես չէի կարող սոսկալի ժայռերից գիւղ իջնել, պիտի գահավիժւէի, ոչ զաւազան, ոչ բևեռաւոր կօշիկներ օգնեցին ինձ, ցաւ ՚ի սիրտ յետ դառնալ էի ուզում անմատչելի Կուս-գետից»:

«Ոտս սահում էր, ևթէ գլորւէի, մահն էր ինձ բաժին անդընդախոր վհին յատակը: Խղբօ տեսնելով իմ վարանուժն՝ ասաց.

«—Վարդապետ, ես Քաջարենց զիւղերիցն եմ, շատ վարժ եմ քայլում այսպիսի տեղեր, արի շալակեմ քեզ»:

«—Ոչ, Խղբօ, յետոյ երկուսս միասին պիտի գլորինք»:

«—Մի վախիր, հայր սուրբ, ես խիստ վարժ եմ: արի շալակս: «Միտս եկաւ բոկոտն իջնել: Երկու ժամ մերկ ոտներով զգուշութեամբ քալեցի, վերջապէս տակաւին խուսարը չպատած մտանք գիւղ, իջեանեցինք Հայօի տնակը, որ «Մանկկայ ջաղաց» երթացած, մարդ տեսած լինելուն համար գիւղի դաւաղիտուն (գիտուն, հասկացող) ունն էր եղած:

«Հայր ինձ հիւրասիրեց կորեկ հացով, թանով: Գիշերը առանց տեղաշորի տանիքը ննջեցինք մեր զգեստներով մի մաշած թաղիքի վերայ:

«Առաւօտուն Հայօի ուղեկցութեամբ զնացի սուրբ Խազ-թուր, ամեն ինչ Պետրոս վարդապետի պատմածին պէս և աւելի գտաց: Երկաթ խաչը սրից էր շինւած, տաճարի ամեն մի անկիւնն ու քարը ապացոյց էին կռատուն լինելուն: Աւաղ որ չխուզարկեցի, եթէ ոչ մի բեկոր էլ ես կը բերէի փշրւած արձաններից: Տաճարի մէջ որոշապէս հեթանոս կրօնի նշխարն ու հետքը տեսնելով զայրացայ,—քրիստոնէական զայրոյթ,—ահագին պտուկները՝ որ կանթեղի դեր էին կատարում անմիջապէս սկսեցի կոտրատել:

«Խորին լուծթիւն էր տիրում: Յանկարծ աղջամուղջի մէջ նշմարեցի դաշոյնների փայլը. սոսկալի, քրիստոնեայ հայեր պիտի խողխողէին Քրիստոսի պաշտօնեայն Անահիտայ կամ Արսեմիտեայ տաճարում... Իսկոյն փախուստ աճապարեցի, եթէ Խզրօ յանուն սըբ-Մըրթուկի, Խազ-թուրի չպաղատէր խուժանին, որ հայ, քուրդ հաւասար բաժանորդ էին այս անմեղ ցոյցին»:

«—Հըյտը մարդուկ պամպլուզ չի,—աղաղակում էին հայ թէ քուրդ,—ըտի սըբ-Քանտիչի, սըբ-Քանտիչ. վոթինք զարինն ուրնէ»:

«Խզրօ սկսեց աղաչել, պտղատել ինձ ամբօխից հեռացնելով գիւղ տանել: Քուրդ Ալօն, գիւղի բէկը՝ ինձ էր հետեւում, ես սուկում էի այդ խորամանկից, որի տունն ապաստանած էի:

«—Պամպլուզ,—ասաց բէկը,—քզիք բան մի հարցում, իսի հահու բան չըմ գիիննայ, քուրդ, բալաքիմ, ոչ զմահմատ կի ճանշնամ, ոչ ըլ Քիրգուուզ: Թագաւոր տեճր կի նստի»:

«—Մեր թագաւորութիւնը վերջացած է,—պատասխանեցի:

«—Ը՛ գիիննամ՝ վըր զմըր Հաուց թագաւոր չըկէ, հըյտը տաճկու թագաւոր կիսիմ. տիճր կի նստի»:

- Ստամպոլ:
- Քան ըզինք պզտիկն:
- Էրզրում:
- Քան զէն:
- Բաղէշ:
- Խընծին:
- Մնշ:
- Քան զէն:
- Հոն:
- Ընտուց ըլ պզտիկն, ասքանն:
- Բունաշէն:

— Լաւ, պապօ, միր սրբիր ըլ հըմալին: Սրբունաց ջօջն Իջ-
միածին, ընդուց պզտիկ՝ Իրուսաղիմ, ընդուց ըլ պզտիկ սրբ-Ախ-
պիրիկ, ընդուց ըլ փոքր, գայմագամ կիսիմ, սրբ-Աթանէ, ընդուց
ժը փոքր՝ Մուտուր, սրբ-Մըրըթուկ, ընդուց ժըսօ պզտիկ թըլս
ըզմըր սրբ-Խաշ-թրիկ էնի, ջօջ սրբունաց ասկարն ի, էնըլ իկի,
մըր հաուց թագաւորի սրբ-թուրը, մտիրի միրն ժամ. պամպլուզ,
դու ջօրի՛ն կիքիս, կը քակիս, էն մղիք դալիկ մ՛ապրիկ, կտորիկ մը
հացիկ կիտէ, լօ, պաւօ, մըկաց քզիք կիսպանին ժիսօ իսի չթորկիր
իմ, առ զքո հուր ու մուր, գնա քու բան, թըհ չըս ուզի դիտնար:

«Մինչդեռ խօսում էր անւանական քուրդ բէկը, կատաղի ամ-
բոխը սուսերամերկ ներս խուժեց, անպատճառ սպաննելու էին ինձ:
Մահւան երկիրըը հնարագէտ է անում ենթակային: Լսած էի թէ՛
Կուսդեացիք սև թղթից վախենում են: Իսկոյն թղթակալից հա-
նեցի մի կապտադոյն նամակ, որ ստացած էի Կ. Պոլսից, Հալոյն
նետելով, որ ամբոխի գլուխն էր, իւր լիզւան ասացի.

— Հիմա նղովում եմ քեզ, Հալո. առ այդ սև թուղթը և
նղովեալ եղիր: Նաև նղովեալ է այն մարդը, որ համարձակում է
ինձ վրայ ձեռք բարձրացնել:

«Արձանացաւ կատաղի խուժանը՝ «սիւ-թղթիկը» մրմուռով:
Իսկ Հալօ գարհուրած յետ ընկրկեցաւ: Այլ ևս սպասելու չէր, ծա-
նապարհ ելաց Խզրօի հետ, ահով ու զոզով այն գիշեր հասանք Քա-
ջարինք, ՚ի Տէր հանդուցեալ հերոս աէր-Սիմէօն վարդապետի մօտ
հիւր եղանք:

«—Վարդապետ, — ժպտելով ասաց քաջայր եղբայրս, — դու ինչպէս յանդգնում ես, այն էլ Կոստ-գետի մէջ խորտակել սրբութիւններ. նորա յարաբերութիւնն չունին ազգի և կառավարութեան հետ, ոչ տուրք են վճարում, ոչ էլ «պամպուլուզի, տէր-Նշտօի» երես տեսնում. սակայն լաւ աղատեցար»:

«Այս դէպքը խորին տպաւորութիւն թողեց ինձ վրայ»:

«Անցան տարիներ. մեր վանահայրը վախճանեցաւ, նորան յաջորդեցի ես: Մի օր առաւօտուն դուրս կը դաշի եկեղեցուց, զարմացմամբ նշմարեցի դրան երկու կողմը վեց կուսգետցիներ, որ վայրենու համարձակութեամբ ժպտում էին»:

«— Ըժօ, Պամպուլուզ, — ասաց մինը ուղիս կտրելով, — հըյրանիմքի, վը՛ր միննի պամպուլուզնան ջօջ պամպուլուզը»:

«Ծիծաղաշարժեցաւ, հարցանողը քննելով պատրաստում էր պատասխանելու, երբ աչքիս մէջ նայելով՝ շարունակեց»:

«— Ըժօ, դուն իս, — ճժիր, կիծիճդի, վայ սըբ. Նաշթուրը զքո տուն քանբըլի, սպիտկեր իս սըբ-Սխպիրիկ գիննայ, ինքնի, վայ շան քգիք, ըժօ դունիս, յորին կի ծածղաս»:

«— Լաւ, — պատասխանեցի քահքահով, — ես իմ, ինչ կուզէք»:

«— Վաւէր, — աղաղակեց մինը յանկարծ ձեռս բռնելով, — ըժօ, իրցու պնպ, մզիք չիս ճանշնայ. ըժու մինծցար, հայ լօ, մենք քգիք չինք մոռցի, հըյրան, իկիր ինք վըր զքո «սիւ-թղթիկ» միրնէ առնիս, անօրն, ետա քո թուղթ աւրից ըզմըր սնակներ»:

«— Ինչ սև-թուղթ, — հարցուցի յիշատակներս ամփոփելով»:

«— Լօ, սըբ-քանդիչ, հըյնը սիւ-թուղթ, վըր ըզմըր Հպլիկ անիծակիս»:

Ճանաչեցի, մեր կուսգետցիքն էին, չիշեցի Անահտայ տաճարին արկածը, մանաւանդ Հպլօն, որ պարտասած վագրի նման մի անկիւն կանգնած, իւր դիժաշարժ նայածքով յուզում էր սիրտս, կարծես լսում էի նորա «մեղան»:

«— Ետեւս արիք, — ասացի և տարայ բնակարանս»:

Կէս ժամ աշխատեցայ համոզել և նստեցնել գորգերի վերայ, որովհետև չէին իշխում: Հպլօ շարունակ մատներով խաղում էր նկարներին հետ»:

«— Է՛, ինչն էք եկել, — հարցրի Սլօ բէկից՝ որ վահանը պինպ բռնած, նստած էր լնկերների վերևը»:

—ՐՃՕ,— պատասխանեց ժպիտով.— դու ժխօ գիննաս: Նա պատմեց թէ ինք իբրև Հպլօի տղան վկայուժ է թէ սև-թղթի պատճառով նա աղքատացած էր, հացի կարօտ էր: Խնդրեց ստանալ սև-գիրը և սալ ճերմակ թուղթ: Ինձ տւին կեանքս փըրկող նամակը:

—Սև-թղթի փոխարէն,—ասացի,— ճերմակն այն ժամանակ կը տամ երբ խոտանաք ինձ ձեր զիւղից, հէնց ձեր զաւակներից վեց հատ 10—12 տարեկան մանուկներ տալ, որ էր էց, իրցու պապ անեմ և ձեզ ուղարկեմ մի քանի տարի յետոյ:

«Համոզեցան, խօսք տւին եկեղեցի շինելու, վեց աղայ ինձ տալու և բոլորովին իմ հրահանգով շարժելու:

«Յրհնութեան գրով վերադարձան Կուս-գետ:

«Ես ազգեցի նրանց, իրագործւեցան մի քանի փափագներս: Այժմ ունին երէց»

Տ. ՍԻՄԷՕՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՄ «ԲԱԶԱՅՐ»

Քաջայր ծնւած է 1775 թ. Քաջարենց զիւղերից միոյն մէջ. մինչև 17 տարեկան հասակը նշանակութիւն չունէր. գրեթէ այս տարիքից սկսուժ է իւր համբաւը:

Սիմէօն վարդապետ Քաջայր բարձրահասակ, ջղուտ, հաստաթիկունք, խոշոր մատներով, չափազանց մեծ ատամներով, անարկու և դաժան աչքերով, վայրագ, վայրենատեսիլ, ուժեղ, տգէտ, բայց խելացի, քաջ, առաքինի, ազգասէր, քրդին ռխերիմ, հակաց մի կտրիժ էր:

Այս հոյակապ մարդու գործերը գրեթէ ծանօթ են բոլոր Սասնոց, Տարնոց հայերին: Իւր հարազատ քեռորդին տ. Ղազար վարդապետ Մարտիրոսեան և Քաջայրի եղբորորդի տ. Ասատուր քահանայ պատմել են իրենց գիտցածը:

Սիմէօն չափազանց ուժով, պատանեկութեան ժամանակ ըմբշամարտի մէջ միշտ յաղթող հանդիսանալով «փահլաւնի» անունը տարածուժ է բոլոր երկրուժ. քուրդ լամուկներ փորձուժ են խմբով խոնարհեցնել նորան, անկարելի է լինուժ. գլուխները խորտակուժ էր, ամօթապարտ յետ էր դարձնուժ պատանի ըմբիշը: Այս պատճառով բազմաթիւ թշնամիներ է ճարուժ:

Տասնութօթ տարեկան ատենը, մի օր Քաջայր՝ առանց ընկերի վերադառնում էր Մշու դաշտից հինգ ձիով, ցորեն բարձած: Յանկարծ ութ դարանամուս քրդեր մի կիրճի մէջ նորա ուղին գոցելով ուղում են կողոպտել: Պատանին իսկոյն ձիերը մի կողմ է առնում, բեռներով պատնէշ ձեւացնում կենդանեաց համար, ինք քաշուում ժայռի տակ՝ սխտում է հրացան արձակել: Առաւօտից մինչև երեկոյ երկուստեք պարպում են գէնք: Սիմէօն չէր ուզում մարդ սպաննել, առաջին անգամ լինելով՝ թշնամու գէմ գլծած էր:

Բայց երբ իսկապէս համոզւել է թէ որոշել են իւր մահը, աճապարում է դուրս սլանալ թագստոցից և հրացանի փոկով ջախջախել աւազակապետի ձակատը և սպաննում:

Քրդերը կատաղած սրերը մերկացնելով վազում են պատանոյն վրա, չնայելով որ իրենց ընկերները հետզհետէ տապալում էին անշունչ: Սիմէօնի վառօդը արդէն պարպած էր, չունէր թուր, դաշոյն կամ այլ մի գէնք, հրացանի փողով անմիջապէս, կայծակի արագութեամբ, թշնամիներին մի-մի հարեւածով կիսամուտ տապալելով՝ նոցա զէնքը, զգետները կողոպտում, կենդանիները բառնալով ուղին է շարունակում:

Քուրդը գերադաս համարելով մահը կողոպուելուց, ութ աւազակներին վեցը երջանիկ էին, կենաց հրաժեշտ տւած լինելով, իսկ երկու վիրաւոր ընկերների վերայ՝ երկու տեսակ պարտքեր էին ծանրանում՝ վրէժ և պատիւ:

Իրենց խիղճը անհանգիստ էր, ընկերները վրէժ էին խնդրում անարգ գերեզմանից, իրենց կեանքը անպատիւ էր, որովհետև մի հայ պատանեակ յաղթած էր նորանց: Պէտք էր վրէժ առնել:

Երբ մի քուրդ հայի ձեռք սպանւի, նախատինքը ընդհանուր քրդերին է վերաբերում: Հետևապէս՝ վեց քրդերի մահը, միւսների կողոպուելը սոսկալի փոթորիկ հանեցին, քրդերի համար ազգային և կրօնական խնդիրներ դարձան:

Նէյսը սառած օձի նման շարժեցաւ իւր տեղից, հրաման արձակեց իսլամ ազգին քրդաց աստուծոյ և մարգարէին հրամանաւ Քաջարենց գիւղը բնաջինջ անելու:

Հարիւրաւոր զինւած քրդեր աճապարեցին իրենց մարդոց վրէժը լուծել, Քաջարենք բնաջինջ անել:

Իսկ Սիմէօն խաղաղութեամբ գիւղ հասած, արկածի մասին ոչինչ չխօսելով շարունակում էր առտնին գործերը:

Մի երեկոյ պաշարում է գիւղը: Հայք առանց պատճառը քննելու և հմանալու՝ սկսում են պատերազմել, գնդակների տարափը երկու կողմից շատ նախճիրներ է գործում, մանաւանդ քրդերից շատեր վերադառնում և սպանւում են:

Քրդեր՝ իրենց սուարութեան չնայած, ամօթապարտ փախուստ կը տան: Կուլից չետոյ՝ երբ հայոց կտրիճները ուսի սենեակը խմբւած վիրաւորների վերքին սպեղանի գնելով իրենց քաջութիւնն էին երգում, ներս մտաւ պատանի-Սիմէօն, թուրն ու վահանը տէրտէրի ոտներին տակ գնելով, ձեռները միացուցած ծնրապրելով, տխուր ձայնով մըմնջեց. —

— Տէր հայր, սիրելի դրացիներ, ազիզ եղբայրներ, դուք՝ պատուական քաջեր, զիտէք թէ ինչու պատերազմեցաք, զիտէք թէ քրդերն ինչից թելադրւած յանկարծ մեր գիւղը պաշարեցին, զիտէք թէ ինչ պատճառաւ արեան հեղեղներով ողողեցիք Քաջարենց բլուրներն ու արտեր, ձեր քաջագործութիւնը խառնելով մեր մեծ պապերի անմոռանալի գործերին:

— Ո՛չ, — ասաց մի սամնիկ որոտալիր ձայնով, — ո՛չ, չգիտենք: Մի թէ գու գիտես, Սմօ...:

— Այո՛:

— Ե՛հ, կը լսենք, — ձայնեցին չորս կողմից:

— Լաւ ուրեմն, պատմեմ ձեզ: Ճանապարհին ութը քուրդ ինձ վրա յարձակւելով ուզեցին կողոպտել: Առաւօտից մինչև երեկոյ կուեցայ. երբ նկատեցի թէ ինձ սպաննել են ուզում, նոցանից մինի ուղեղը թափեցի, միւսները դազանի պէս մռնչելով ինձ վրա յարձակեցան:

— Սպաննեցիր. — ընդմիջեց ուսը ծիծաղելով:

— Այո՛... վեց մարդ:

— Որքանն, — հարցուց տէրտէրը զո՛հ դէմքով:

— Վեց:

— Ինչու միւսները չսպանեցիր:

— Փախան...:

— Ստամբան, թող վազէիր եօտներից:

—Տէրտէր,—ձայն տւին չորս կողմից,—մի՛ ամաշեցներ խեղճ պատանուէն, զարձեալ քաջ է, օրհնիր, օրհնիր դորան:

Քահանան մի պահպանիչ կարգաց, Սիմէօնի թուրն օրհնելով մէջքը կապեց, բայց՝ խորհուրդ տւեց կարգալ սովորելու և իրեն յաջորդելու: Արդէն Սիմէօնի դիրքը վտանգաւոր էր, որոշեցաւ ուղարկել սուրբ-Ախպերից վանքը կարգալ սովորելու...: Յայտնի չէ Սիմէօնի այդ ժամանակ գործածները: Եօթ տարի ուսանելից յետոյ վերագարձաւ հայրենիքը, ամուսնացաւ և ձեռնադրւեցաւ քահանայ: Մեռնում է նորա կինը, մի քանի տարի այրի մնալից յետոյ՝ վեղար է առնում, լինում վարդապետ, որ կրկին քուրդ սպաննած լինելով փախած էր սուրբ-Ախպերիկ:

Նոյն ժամանակները Մշու Սէլիմ-փաշան կը փախչի Սասուն, երբ Զիբլաղ-փաշա նորան յաջորդելով հրաման է ստանում ձերբակալելու և զլխատելու: Սա իւր հետ աւած Հասարանցի, Աշկոցի և այլն էշիրէթներ՝ կ'երթաց Սասունը պաշարելու, Խոյթի և Բանաշէնի՝ (ուր գտնւում է ս. Ախպրիկ,) միջով անցնելու ժամանակ ասպատակ կը սփռէ հայոց զիւղերը:

Նստ մարդիկ կը սպանւին, հարսներ, օրիորդներ, պատանիներ իրենց պատիւը, ծնողները կորցնելով՝ գնում են գերութեան՝ էշիրէթների հարէմները զարդարելու...:

Տէր Սիմէօն այս շարագուշակ գործիլուրը առնելով՝ բորբոքւում է հնոցի հրի նման, իւր հաւատարիմ ու քաջ սպասաւոր—զինակիր Խզրօին կ'ուղարկէ Խոյթի ունեւորին մօտ չորսորդելով նորանց՝ բանակ կազմել և ջախջախել հայրենեաց ոսոխն: Բայց՝ ափսոս, Խոյթը չունէր կորովի հայրենասէր Յովնաններ, ոչ էլ իններորդ դարու կարիճ զաւակներ, ստրկական արիւնը հոսում էր նոցա երակներից, փոխանակ դիւցազնական արեան. այս պատճառաւ տ. Սիմէօն մեռակ մնաց: Չվահատեցաւ վարդապետը, երեք օխա (9 գրւանքա) ծանրութեամբ 40 երկսայրի երկաթ ձողեր շինել տւեց, որպէսզի հրացանը մնասւած ժամանակ իբր նետ գործածէ թշնամին շամբրելու: Ատրճանակներով, թրով, դաշոյնով, հրացանով զինւած, ասպարով, վահանով ծածկւած, իւր հռչակաւոր արաբ-նոթոյզը նստած դուրս եկաւ հանդէս քաջաբար մեռնելու, իրեն հետ տարտարոս տանելով մի քանի թշնամիներ, չտեսնելու համար իւր այրի հայրենեաց

կրկին աւերումը: Խղբօ ձի հեծած, երկաթ ձողերը գրկած, հաւատարիմ շան պէս հետեւեցաւ իւր Քաջայր տիրոջը, որ—«Հաւատով խոստովանիմ...» և «Ողովեան ինձ Ասուած», մրմնջելով, խթում էր ձին ու սլանում:

Շատ չառաջացած՝ Քաջայր լսեց Խղբօի ձայնը, որ ասում էր:
—Հայր սուրբ:

—Ի՞նչ է՝ Խղբօ, — պատասխանեց ձին կանգնեցնելով:

-- Տես, մեր վերելից ձիաւորներ կը գան:

— Սչո՛, արշաւասոյր վազում են... բայց թշնամի չեն:

Իրօք՝ քսան ձիաւոր շրջապատեցին վարդապետին «Ասուած օգնական» ասելով: Սիմէօն ձանաչեց իւր համահիւղացի քաջերին, որ իւր նպատակը լսելով փութացած էին օգնութեան: Տ. Սիմէօն իւր հայրենակիցները խրախուսելով իջնում է հանդէս: Նախ՝ իբր միջնորդ խնդրում է Զիփլաղ-փաշայից չփնասել հայերին, երբ նա բարկանալով հրամայում է ձերբակալել, Քաջայր հրաման կը տայ կարիճներին թրերը մերկացնել, աջուահեակ զարնելով իրեն հետեւը:

Քաջափորով վարդապետը սոսկալի լուսանք թափելով՝ ոմանց վիրաւորելով, ոմանց անշունչ տապալելով առաթուր, ձեղում է բանակը իւր քաջերով և դուրս գնում: Զիփլաղ-փաշա հրաման կը տայ կուսելու: Տ. Սիմէօն գնդակների տարափին կարեւորութիւն չտալով՝ դիւցազնաբար հրացանները պարսկելից յետոյ՝ լուռ ու մունջ կանգնած վերտօին լեցնում է, դժբաղդաբար մի գնդակ գալով իւր հրացանի կոթը կը փշրէ. նա խկոջն փողը մի թշնամիի գլխին զարնելով խլում է երկաթէ ձողերը, հրամայում է իւր գնդին չեզոք զիրք բռնել, չկուսել:

Նժոյզի կողերին խփելով գնդակի պէս սլանում է դէպի թշնամի բանակը: Բագրանցոյ Բէկը իւր հեզարէն նիզակին ձօճ տալով վազում է ընդառաջ իբրև ակոյցեան. Քաջայր թող կը տայ երկաթէ շիշը, ձիու կուրծքը ծակելով և բոլոր թոքերը շամփրելով կը գլորէ այր ու ձի միմեանց վերայ անշունչ: Զիփլաղ-փաշա սարսափած հրաման կը տայ փախչելու, բայց ու. Սիմէօն երկու ժամ հալածելով տասներկու մեծ բէկեր կը սպաննէ, 35 մարդ կը վիրաւորէ, 40 ձի, նոյնքան ղէնք աւար առած մինչև քրդերի սահմանը կը հալածէ նորան:

Ապա աւարը իւր հայրենակիցներին տալով կը վերադառնայ վանք: Զիւրկադ-փաշա մարդիկ ուղարկելով հրամայում է հէնց վանքի մէջ սպաննել Քաջայրին, վանքն էլ կողուպտել:

Քսան քուրդ գիշերով վանք կը գնան իբրև հիւր, Սիմէօն հասկալով ազդարարում է վանահօրը շընդունել, նա Քաջայրի դիտողութեանց կարևորութիւն չի տալիս և հրամայում է զուռը բանալ: Քաջ վարդապետը լսեցնում է մի ապտակով ծերունուն, ապա հրացանը խլած վանքի աշտարակին մէջ ծածկելով սկսում է գնդակ տեղալ քուրդ-խմբի գլխին, որոնցից մինն սպանւում է, իսկ միւսները ահաբեկ փախչում: Նոյն գիշեր Սիմէօն վարդապետ իւր ձին աշտանակած, քրդի սէս հազած ու զինւած բռնում է Տիգրանակերտի ուղին: Անդի Ֆլահի (արաբ գիւղացի) զգեստով ծպտեալ խանւում է Երուսաղէմի ուխտաւորաց կարաւանին:

Երուսաղէմի մօտերը 30 արաբ աւազակներ կը գան կարաւանը կողուպտելու, Սիմէօն վարդապետ իւր եղեգէ նիզակը ճոճելով նետւում է նոցա մէջ, երեք մարդ սպաննում, մի քանին վիրաւորում, մնացածներն էլ հալածում է:

Կարաւանը այն գիշեր իջեւանում է մի աւերակ խանի (կարաւանսարայ) մէջ: Քաջայր բնազդմամբ հրամայում է ընկերներին մի անկիւն պտտսպարել, իսկ ինքը սուրը մերկացուցած քիչ առաջ գնում:

Խանի շինութիւնը տարօրինակ են նկարագրում: Ներքին ուղիի սէս մի ընդարձակ, այլանդակ լաբիւրինթոս է եղել, որ աստիճաններով շարունակ բարձրանում է վեր մի սենեակ միւսի վերայ և իջնում նոյն կարգով: Առաջին աստիճանի վերայ եղողը չէ տեսնում միւս աստիճանում մնացողին՝ շինութեան դիրքի և թէ խորին մթութեան շնորհիւ:

Վարդապետը վերին աստիճաններից իջնելու ժամանակ, դռնից մտնող նւազ լուսի օգնութեամբ, նշմարում է մի քանի գլուխներ, որք խօսում էին արաբերէն: Ճանաչում է Քաջայր՝ որ միւսնոյն աւազակներն են: Իբր թէ նորանց չէ տեսած, սկսում է հազալ իւր ներկայութիւնն իմացնելու մտօք: Արաբները իսկոյն աճապարում են իրեն հասնել, նա արդէն սուրը մերկացրած, իւր դիրքը բռնած էր, սպաննում է յարձակողին: Աւազակները գուշակելով՝ որ իրենց սպանող մի քաջ ձեռք կայ, փախչում են խանի խորերը: Վարդապետը

ընկած աւագակները թողնում է որ ապաժոյժ սողան ու մեռնին, շտապով վերադառնում, հրամայում է ընկերներին ձանապարհ ելնել: Սակայն ընկերքը նշմարում են աւագակների գիտակները և կը թւեն:

Տէր-Սիմէօն եօթ մարդ սպաննած էր:

Երուսաղէմ կը հասնին: Ուխտաւորներ կը փութան՝ Սիմէօն վարդապետի արարքը պատրիարքին կը յայտնեն:

—Աչքիս չերևի,—բարկութեամբ ասում է սրբազան Զաքարիա արքեպիսկոպոս—պատրիարքը,—աչքիս չերևի, վանքիս մէջ չմնայ այդ մարդասպանը:

Սրբազան,—պատասխանում են ուխտաւորները, զղջալով իրենց անխոհեմութեան վրա,—սրբազան, մեր կարաւանը 200 մարդից կը բաղկանար, բոլորս էլ հայ-քրիստոնեաց էինք, եթէ տ. Սիմէօն վարդապետը չլինէր՝ մենք կ'ըսպանուէինք:

—Թող սպանէիք, արքայութիւնն էր ձեզ հիւրընկալող:

—Եթէ սպանւելով պիտի երթամ արքայութիւն, —ընդմիջեց մի կոպիտ տիգրանակերօցի,—կը սպաննեմ, կ'երթամ դժուք,—դառնալով ընկերներին,—ելէք, տղէք, ելէք, պէտք չէ մեզ ուխտանել, վերադառնանք հայրենիք, մեզ հետ տանելով մեր ամենազնիւ վարդապետը՝ առաջնորդ անենք:

Պատրիարքը ճարահատած, ուխտաւորաց առատ նւէրը չկորցնելու համար, հրամայում է վարդապետը իւր մօտ բերել Ֆելլահի տարազով:

Տէր-Սիմէօն վարդապետ իբրև աւագակ ներս կը մտնէ, կը համբուրէ սրբազան հօր աջը, իսկ նա տեսնելով հսկայի պատկառելի դէմքը, նորա հերոսական ձևատուր, քաջութիւնը դրւատելով հրամայում է նստել:

Մի տարի յետոյ, առանց դժւարութեան Քաջայր ընդունում է Երուսաղէմի ս. Յակովբեանց միաբանութեան շարքը, ասպ' մի տարի հազիւ մնում է իբրև միաբան, երբ վիճակում է նորան Հայաստանի նւիրակութեան պաշտօնը: Նա միւս դաւառներին այնքան ծանօթ չէր որքան Սասնոյ, Մշու, Սլիւանի, Հզուաց, Բշիբիկի, Բաղէշի և այլն տեղերի: Ուստի չիշեալ դաւառներում մի քանի ամիս շրջելով բաւական դուժար հաւաքելով իբրև Ֆելլահ, իւր ան-

բաժան խորօի հէս վերադարձաւ դէպի վանք ցամաքային ճանապարհով, որովհետև՝ Սասնիկ վախենում էր ծովից:

Մի գիշեր ստիպւեց իջեանել այն խանը, ուր երբեմն սպանած էր եօթը մարդ: Աւազակային խմբի անդամներից ոմանք ճանաճում են Քաջայրը, ուղղակի կուելու անկարող լինելով՝ դարանամուտ սպասում են:

Կէս գիշերին հէնց մարդիկ լցւում են նորա սենեակը:

Վարդապետը խիստ յոգնած ննջւում էր ծանր քնով, աւազակները շտապում են քաջին գէնքը զգուշութեամբ հեռացնել, ապա ամբողջս կաշկանդել: Այս ժամանակ զարթում է Քաջայր, բաց՝ զգուշանում անօգուտ ջանքից ¹⁾:

Յ Ա Ի Ե Լ Ի Ա Ծ

Աշխատութեանս մէջ գործածած Սասնոյ բարբառով խօսքերի բացատրութիւնը.

Ա.

Ախպերիկ } փոքր եղբայր, կամ եղ-
 Ախպրուկ } բայր, նոցա լեզուն մէջ
 առն. ուկ- իսկ.
 Ակրատ, նախաճաշիկ
 Ակրտիլ, նախաճաշող
 Աղօթբան, աղօթարան
 Ամչըկուտ,—կամ (կոտ), ամաչկոտ
 Անարև, անօգնական, անբաղդ,անձար
 Անօրա, անօրէն, քուրթ, թուրք
 Աչի, աչել, աչել, նալել

Աւայ, պէս, նման, իսկ, իբրև

Բ.

Բալաչ, ձրի
 Բիրան, բերան
 Բիսո կամ բխով, առանձին
 Բրաս, եղբայր
 Բորէի, բորենի

Գ.

Գացուկ, գացիրի, երթալ, գնացել է
 Գըլմընի, գըլմընէր, նմանել, նմանում է

¹⁾ Մի ծանրակշիւ պատճառով կիսատ մնաց այս պատմութիւնը. ես մեկնեցաւ Սասունից միայն այս չափով: Սակայն Քաջայր ազատուում է աւազակներից, գնում է Նրուսաղէմ, ապա վերադառնում ս. Առաքելոց վանք, անդի իւր գիւղը, իւր ծերութեան կնքում մահկանացու կեանքը: Արդիհետև պատմութիւնը չկարողացաւ մանրամասն գրել, Քաջայրը չանձնում էմ նոր ապցիլունների ուղարկութեան, որի կենսագրութիւնը լի է օրինակելի գասերով...

Գիւիւլ գլգեւ լագուտ (? խմբ.)

Գիւ գեւ-ու գալ
Գինամ, գիննամ, գիտեմ
Գալիկ, գգալ
Գօտի, վատ

Գ.

Գալալ, 1. կանաչ, 2. սուրբ, մաքուր
Գալալէ, խտակ. անուն. գեղեցիկ
Գըրպ, 1. ուղի, 2. կողմ, 3. փայտ
Գիար, օտար երկիր, պանդխտութիւն

Գիօր կամ տօր, ուր

Գիտը, 1. այլտեղ, 2. բարձր
Գունէ, աշխարհ, բաղդ
Գպա, 1. դէպի, 2. ուղի, 3. թնչ է, թնչ բան

Յ.

Յն, դարմացական միջարկութիւն
Յգիա կամ իգիտ, 1. ելիտ, 2. անխիղճ, չիէշ

Զ.

Զառան, վնաս
Զէն, աջն
Զէտ, ալբ, իբրև
Զի կամ ծի, ինծ, ինծի
Զտունց }
Զտուց } դոցա
Զուտոր, ոտք ունեցող
Զուլմ, աղէտ, գիպած, վնաս
Զուլում, չար բաղդ
Զուել, զուլ
Զօզան, ամաբանոց, ելալ

Է.

Էբէր, բերեց
Էլի, էղի, լինել, եղել
Էն, նա. աջն
Էրէց, երէց
Էրցուկ, կամ իրիցուկ, վառած
Էմէ, միւս անդամ, կրկին

Ը.

Ըլ, էլ, ալ, ալ
Ըծ, ըծն, ծօ, ծա
Ըմալ կամ հմ. լ. ալսպէս
Ընթու, 1. ալնդին, 2. դժոխք, արքա-լուծիւն

Ընցուկ, անցան
Ըսի, ալս
Ըսիլը կամ իսըլ, ալս էլ, ալս ալ
Ըտ, ըտի, դա
Ըտկնա, ալբալէս

Թ.

Թըճն, թճն, վնչ, վնչ, լոցիւ, բարէ
Թամալ, հիմն
Թըլի, թոլ
Թիւրգա, թխիգէ, թոլ գա
Թըճ, թէ, թէ ուր
Թըրֆ, կողմ
Թորկել, թողնել
Թուղ, 1. թող, 2. աստիճան

Ժ.

Ժխօ, ևս, ևս ևս, խոմ
Ժաժիկ, լու, մի տեսակ պանիր
Ժղիել, խօսել

Ի.

Իլ, էլ, ալ
Իմըլ, որպէս: Իմըլ տ'ենիմ, որպէս պիտի անեմ,

Իճն, թնչ
Իսպանել, սպանել
Իրցիկի, երէցիկին
Իրցուկ, նորընծայ
Իրցու պապ, երէցի հալը, վարդապետ

Լ.

Լէ, լը, էլ, ալ ևս
Լամուկ, քուրդ երիտասարդ
Լաչքար, զօրք, գունդ
Լաքալ, լաքան, ձմեռը գործածելի
փայտ է կօշիկներ, որ գրում է

Թուվմ. Արժուունին

Լըխկտի, Լխկրտի, տատանել, փըր-
փըռալ

խ.

Խան, աչի

Խըրբան, խեր բան, ցաւ, մի տեսակ
ժանտախտ

Խը'խ, (կոկորդալին ձալնով) աչի

Խչտո, տ. Տէր-Խչտո

Խչտիկ, փոքր խուց

Խորթ կամ խորդ, կտրիճ երիտասարդ

Խուտ, խոտ, արօտ

Խօտէ, խօտա, խօտի, Աստւած

Խօրտ, գեղանի, կատարեալ

Մ.

Մուռ, 1. մանգաղ, 2. խենթ

Մռուկ, խենթացած

կ.

Կ'էնիմ, կ'անեմ

Կէր, կար, սպս կամ աչն բանը կար

Կ'իգէ, կ'իգի, կը գալ, գալիս է

Կիբ, կեր, հաց կեր

Կիրիք, կերէք

Կճկէ, կճքի, քրդի աղջիկ

Կիսք կամ կիսկ, ալծ

Կիամ կամ կիզմ, մալասըլ

Կամուտ, մալասուրով հիւանդ

Կ'իսպիս, կը համարես

Հ.

Հանլ ըօ, ով գոլ

Հանլ հէ, ով գոլ

Հըմլա, հըմկ, հըմկալ, մկալ,—աս-
պէլա, (? խմբ.) ալծով

Հըլնը, հըլնա, աչն

Հըլտը, հըլտը, աչդ, աչք

Հըլրօ, հըլրանիմ, սիրական, սիրեմ
զքեղ

Հունու, բնաւ, երբէք

Հուր ու մուր, պարագալք, ինչք

Հաու, հաուց, հալու, հալոց

Ճ.

Ճագ, ճաք, ղէնք

Ճիթ, մանուկ

Ճիթու բիթ, մանր-խոշոր

Ճօպօ, պապ, մեծ հայր

Մ.

Մալ միրաթ կամ մալը միրաթ, աը-
նաւեր

Մամ, մամտիկ, մամիր, շատ ծեր մայր

Մացին, մանցին, մնացին

Մզիք, ձզիք, ընուց, մեր, ձեր, նոցա

Մժուլ, առարկալ, խօսք

Միգար, գոգնոց, ղենջակ

Միբն, ձիբն, միրնէ, ձիբնէ, մեր,
ձեր, մեղանից

Մկալ, հմկալ, ալծով

Մրդիկ, մրդիկմ, 1. կճուճ, 2. շերեփ,
3. գունդ

Յ.

Յօրթ, ինչո՛ւ

Ն.

Նալար, թշնամի

Շ.

Շինակնիկ, շինական

Շահրստան, մալրաքսալք

Շնախտ, շան ախտ

Ո.

Ուղրկիլ, ուղարկել

Ուրանց, ուրինց, իրենց

Ուր, ուրենէ, իւր, իւրմէ

Չ.

Չար, չորս

Չունքի, վասն զի, քանի որ

Չուրս, զորս

Պ.

Պապ, պոպօ, պաւօ, հայր

Պառուուկ, ծերացած

Պըտկիկ, պզտիկ, փոքրիկ

Պոմպլուզ, վարդապետ

Պոմպլուզնուն պամպլուզն, եպիսկոպ.

Ձ.

Ձոջ, մեծ, հին, գարեօր
 Ձանաւեր, գազան, գալ
 Աջք, սրբ, սուրբ: Այս ածականով են
 չիշում իրենց բոլոր սրբերը
 Ասողի, հաւատարիմ
 Սիւ, սև

Վ.

Վալ'լան, բիլ'լան, թալ'լան, երդունն
 Վան վաւելէր, ախոս, աւանդ
 Վըր, որ
 Վրէտի, վերագ
 Վիրան, աւերակ
 Վըր մին ա'խիմ, որ մէկն ասեմ
 Վիրանի հաւուկ, աւերակաց թըռ
 չուն, բու

Տ.

Տաւար. եզ, ձի, գոմէշ
 Տէր-Խշտօ, 1. տէրտէր, 2. մի մեծ
 տձական
 Տէրաըրուկ, նորընծաչ
 Տնկուզ, տկուզ, մերկ
 Տոմաստ, սէր, կարագ և մածուն մի-

մեանց հետ խառնած

Տոէ կամ տոքէ, քրդի հարս
 Տխմար, տղաչ, մանուկ, անբան
 Փ.

Փիտնալ, մեռնել, սատակել
 Փիտցուկ, սատակած
 Փ.

Քաղցիկ, անուշ, նոթութիւն
 Քամբախ, քամբխիլ, անբախտ, ան-
 բախտացնել

Քզի, քզիք, քզիքի. քեզ
 Քէլիլ, քէլէլ, քիլիլ
 Քի, քեղ
 Քուլ, մօտ, քով
 Քուք. քօք

Օ.

Օւաչ, գաշտ
 Օխնիլ, օրհնել

Ֆ.

Ֆուշտել, ֆուտել, դգալով ջրալի կե-
 րակուր խոնել
 Ֆլան, գիւղացի կամ հաչ

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲԱՀԱԹՐԵԱՆՅՅ, Սարգիս.— Հողային և անձնական իրաւունքը Հին-Հայաստանում (Հայկազանց շրջան). (արտատպած ՎՊուրճ ամսագրից), Թիֆլիս տպարան Մ. Գ. Խոտինեանցի: 76 էրես: Գինն է 40 կոպ.

Ամեն մի գրագէտ հալին քաջ չափն է, որ հալերը դեռ ևս բնականին իրանց ազգին վերաբերեալ տնտեսական և իրաւագիտական պատմութեան մի որ և է ճիշդի մասին ուսումնասիրութիւն, բացի Վասն վարդ. Բաստամեանցի չափն աշխատութիւնը Մխիթար Պօշի դասատանագրքի մասին: Երբ որ աղպիսի մի աշխատութիւն մեր ազգային գրականութեան մէջ լոյս է տեսնում, աչն ժամանակ մենք իմանում ենք թէ որ ատիճան նոյն իսկ հալոց հին անցեալը պարունակում է ընդհանուր մարդկային գիտութեան համար գնահատելի նիւթեր պատմական խնդիրներ լուսարանելու համար: Սորան մի ապացոյց է պ. Բահաթրեանցի աշխատութիւնը, որը անցեալ տարի տպագրեց «Մուրճ» ամսագրի մի շարք համարներում և այժմ լոյս է տեսնում առանձին գրքուկով: Այդ աշխատութիւնը պիտի ուշադրութեան ար-

ժամանակ բոլոր աչն հալ ընթերցողներին կողմից, որոնք ուրախ են տեսնելու մեր ազգի տնտեսական, իրաւական և հասարակական պատմութեան մասին անւող ուսումնասիրութիւններ:

Պր. Բահաթրեանցը տասնեակ տարի սրանից առաջ փորձել էր ուսումնասիրելու անձնական և հողային իրաւունքը Հին-Վրաստանում¹⁾:

Սակաչն հեղինակը այդ պատմական գործը այլ ևս չչարունակեց, չգտնելով իր նպատակի համար նիւթ և պաշար վրացոց աննշան աղբիւրներին մէջ: Այսու ամենաչնիւ հեղինակի գիտական հետաքրքրութիւնը աչնքան շարժւած է եղել, որ նա սկսել է նման մի գործ, զիմելով հալոց անմահ դասական պատմագիրներին: Պր. Բահաթրեանցը խոստա-

¹⁾ Дичьяя и поземельная права въ древней Грузіи, Тифлисъ, 1886 года.

նում է տալ անձնական և հողալին իրաւունքների ամբողջ պատմութիւնը Հալատտանում հնուց սկսած մինչև նոր ժամանակները: Գորահամար նա՝ բաժանում է իր աշխատութիւնը չորս շրջանների, որոնցից ամեն մէկը պիտի պարունակի առանձին ուսումնասիրութիւն անձնական և հողալին իրաւունքների վերաբերմամբ: Իսկ այդ չորս շրջանները պիտի ամփոփեն Հալազանց, Արչակունեաց, Արչակունի-Բագրատունեաց, Ռուբինեանց և տաճկառուաց ժամանակները: Սոցանից առ ալժմ միաջն Հալազանց շրջանն է, որ կազմում է ներկազ գրածքի առարկան:

Գլմերով գրածքի բովանդակութեանը, մենք նկատում ենք, որ Հին-Հալատտանում հողալին և անձնական իրաւունքների սկզբնաւորութիւնը սերտ կապած է եղել ցեղական կիանքի կազմակերպութեան հետ: Իսկ ցեղապետութիւնը հին հայերին ևս չատուկ քաղաքական հաստատութիւն է եղել, որ նշանաւոր դեր է կատարել նոցա քաղաքական կազմակերպութեան գործի մէջ: Նահապետական ընտանիքների միաւորութիւնից ծագում են ծընունդները, որոնք միաւորելով կազմում են ցեղերը: Յեղերի ալս տեսակ կազմութիւնը կատարել է նոճնպէս հին հայերի մէջ: Մեր նախահայր Հալիը (թող նոճն իսկ պալմանական լինի ալդ անունը հայերի նախահօր կամ նախահայրերի համար) իր ամբողջ ցեղով գաղթել է Հին-Հալատտանի զանազան տեղերը և հիմնել ցեղական գաղթականու-

թիւններ: Ասպէս ցեղերից դարձեալ նոր ցեղեր էին կազմում, որոնք աճելով՝ հարկաւ, հողեր էին նւաճում իրանց գաղթականութեան համար: Հալազանց ժամանակներում հողալին նւաճումները կատարւում էին ուղղակի բռնի կերպով: Հեղինակի գրածքի 4-րդ և 5-րդ գլխերից պարզ երևում է՝ թէ ինչպէս բռնի նւաճումներից ծագում են կալուածական իրաւունքները: Հալազան ցեղերը երկիրներ նւաճելով ձեռք էին բերում նոցա վրազ կալածքի իրաւունք: Յեղապետները կամ իշխանները օժտում էին ցեղականներին կալածատիրութեան հետ նոճնպէս ժառանգականութեան իրաւունքներով: Սակայն ալս երկու տեսակ իրաւունքները վաղելում էին ցեղերի ալս անդամները, որոնք թէ հալազան և թէ մալազան ծագումով հարազատ էին, ալսինքն նոքա, որոնք իրանց ծնունդով պատկանում էին իրանց սեփական ցեղին: Երբոր Հալազան ցեղերը սկսեցին օտար կանանց զերի վերցնել և սոցա հետ ամուսնւնալ, գոլադաւ ալս տեսակ ամուսնական կապերից հալազան ցեղերի մէջ մի տեսակ խառնուրդ, որ բաղկանում էր երկու մասերից: մէկ մասը կազմում էր հարազատ ցեղականներից, որոնք ժամանակի ընթացքում ազնւականներ կոչւեցին, միւս մասը, որ ծնունդով արդէն ցեղին հարազատ չէր, ալ գոլաջել էր զերի կանանց հետ ամուսնանալուց, կոչւում էր մերձաւոր ցեղականներ: Վերջինները ներկայացնում էին իսկական ցեղի ստո-

բաղրեալ մասր, որ վերջ ի վերջու շին ա կ ա ն ի փոխեցց:

Ազնւականները իրանց էին սեփականացնում աչն նւաճած երկիրները, որոնց վրայ օտար ցեղեր էին բնակուում: Բայց նւաճած ամառի երկիրները նոքա բնակեցնում և շէնցնում էին իրանց ցեղի վիշեալ ստորաղրեալ մասով, որ նոր գաղթած տեղերում ձեռք էր բերում կալածական և ժառանգական իրաւունքներ: Զանազանութիւնը ցեղի աչս երկու տարրերի մէջ նրանում էր կալանում, որ ազնւական մասը վաւելում էր, բացի կալածական իրաւունքներից, նաև իշխանական և պետական արտօնութիւններ, մինչդեռ շինարան մասը աչս առաւելութիւններից զուրկ էր: Սորա գոյութիւնը չենւած էր լոկ հողի վրայ, որ նրան անտեսական ապահովութիւն էր տալիս: Ուրեմն ցեղի ստորաղրեալ մասը խկապէս շէնն էր, որի ասպարէզը սկզբից հողագործութեամբ էր որոշել և սահմանափակել: Շէնի մասին պարզ գաղափար տալուց չետո՛ղ հեղինակը մեզ ծանօթացնում է մի ալ երևութի հետ, որ ծագել էր Հալկազանց շըրջանում աչն ժամանակ, երբոր հալկական ցեղապետները օտար երկիրների հետ պատերազմելիս՝ դերիներ էին վերցնում օտարերկրեալ ժողովուրդներից: Յեղապետները լծ առի իր էին դարձնում գերիներին և պահում սոցա ս ա ր կ ու թ ե ա ն մէջ, աչնպէս որ լծի տակ գանուղ ժողովուրդը կամ լուծը ստրկահալով կազմում էր ցեղապետների կամ իշխանների անձնական սեպականու-

թիւնը: Ուրեմն գերիները ստրուկ էին դառնում, շբայց աչն օտար ժողովուրդը, որ բնակուում էր նւաճած երկիրների վրայ, հարկաւ ստրուկ չէր ալ միաչն հպատակ: Սա պահպանում էր հողաչին սեպականութեան իրաւունքները և միաչն երթարկած էր իր նոր տիրոջ և իշխանի հարկատուութեանը, որով և արտաչաչուում էր հպատակի շարաբերութիւնը շաղթւած ժողովուրդի և իշխանի մէջ:

Ահա գլխաւորապէս աչն հողաչին և անձնական իրաւունքները, որոնք գոյութիւն են ունեցել շին Հալաստանում Հալկազանց ժամանակներում մինչ 3¹/₂ դար Քրիստոսից առաջ և որոնց հետ մենք ծանօթանում ենք պ. Բահաթրեանի ներկաչ գրւածքով:

Անկասկած հեղինակի գրւածքը ներկաչացնում է առաւելութիւններ պատմական և գիտական տեսակէտներից:

Ընթերցողը տեսնում է ուրեմն թէ գլխական ինչ հետազօտութիւնների համար է շահագործում պ. Բահաթրեանց մեր հին գրականութիւնը: Հետազօտելով հողաչին և անձնական իրաւունքը հին Հալաստանում՝ պ. Բահաթրեանց լուսաբանելու է ձըգտում հին հալկական հասարակական կազմը, որի հետ կապւած է նաև երկրի նեւքին քաղաքական կազմակերպութիւնը: Գա մի առարկաչ է, որի համար քիչ անգեկութիւններ ունենալու մասին աչնքան գանգատներ են շաչոնել հետազօտողները: Օրինակ, Վահան վարպետ Բաստամիանց իւր նշանա-

ւոր զրւածքում Մխիթար Գօշի Գատատանագրքի մասին, զիւ մի տասնեհինգ տարի առաջ գրում էր. «Մենք ոչ միայն չունենք՝ բացի Գօշի գատատանագրքից և եկեղեցական կանոնագրքերից՝ մի ամբողջ շարագրութիւն զուս իրաւաբանական բովանդակութեամբ, որը խօսէր ազգալին օրէնսդրութեան և իրաւաբանական սովորութիւնների վրայ, կամ պետական, քաղաքական, քրէական և այլ տեսակի իրաւունքների վերայ, այլ չունինք ազգային ինդիւստրի մասին փոքր ի շատէ գոհացուցիչ տեղեկութիւններ մինչև անգամ և մեր պատմագրութիւնների և միւս տեսակ երկասիրութիւնների մէջ»։ (Մխիթարազ Գօշի Գատատանագրքը Հաւոց, Յառաջաբանութիւն հ. Բաստամեանցի էջ 63)։ Այլ կամ հ. Բաստամեանցի այլ խօսքերը (տես նոյն Յառաջաբանութիւն, էջ 64)։ «Այն նոյն իսկ այն սակաւթիւ տեղեկութիւնները, որ հասուկատր և կարծես թէ պատահմամբ մտել են մեր պատմագրութեան մէջ ժողովրդի կեանքի իրաւաբանական երևութիւնների մասին, չեն աչնչափ նշանաւոր և մանրամասն որ կարողանալին գէթ գոհացուցիչ բաւարարութիւն տալ մեզ գոհեա աչս կամ աչն մասնաւոր խնդրոչ մասին։ Ուստի մենք ալժամ գրեթէ ամենեւին չենք կարող գոհեա մօտաւորապէս որոշել թէ՛ ինչ տեսակ կազմակերպութիւն և ընթացք ունէին մեր պետութեան վարչական, զինւորական, քրէական, քաղաքական, քաղաքացիական, տնտեսական և այլ մասերը։ Չգիտենք՝ կանր արդեօք և ինչ տեսակ էր բարեկարգական կամ ոտարկանական հաստատութիւնը... Նոյնպէս չգիտենք թէ, որպիսի կազմակերպու-

թիւն ունէր պետութեան տնտեսական վարչութիւնը, ինչ տեսակ հարկ կար ժողովրդի վերայ՝ գլխահարկ, ծիւահարկ, թէ հողահարկ... և ուլ էր հարկատու և ուլ ազատ հարկից»։

Այսպէս էր գրում տասնեհինգ տարի առաջ մի գիտնական, որը աչնքան հետաքրքրել էր և հետազօտել հին հայկական իրաւունքը։

Մենք կարծում ենք, որ պ. Բաստամեանցի աչխատութիւնը մի օր լուրջ կերպով կը քննադատուի մասնաւոր երբ որ նա իր ամբողջ աչխատութիւնը լուս կը հանի, որովհետեւ պ. Բաստամեանցը մի գիտնական և գրական գործ կը ստեղծի, որ նոյն իսկ եւրոպական մասնագէտների ուշադրութեանը կ'արժանանալ։ Նման աչխատութիւններ ունի վաղուց արդէն եւրոպական գրականութիւնը, որից, օրինակ Մէնից մասամբ օգտուել է նաև մեր հեղինակը. մասնաւոր հարուստ է աչ կողմից գերմանական գիտնական գրականութիւնը, որից, լիպոս ենք, նա կ'օգտուի իր չաչորդ աչխատութիւնների համար, թէկուզ միայն համեմատութեան նպատակով։ Օրինակ աչնպիսի երեւելի գերմանական աչխատութիւններ, ինչպէս են Ինամա-Ստերնէգի՝ Գերմանիայի տնտեսական պատմութիւնը. (Inama Sterneg Deutsche Wirtschaftsgeschichte, Յանսէնի՝ Հողաչին պատմական ուսումնասիրութիւնները (Hansen, Agrarhistorische Abhandlungen) և այլ մի քանի ուրիշներ, որոնք կարող կը լինէին հողաչին իրաւունքների մասին հեղինակի համար թերես շատ խնդիրներ լուսաբանել։

ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ, Հ. Գրիգորիս վարդապետ, Մխիթար. ուխտէն.—
Պատմութիւն հայ լրագրութեան, ի սկզբանէ մինչև մեր ժամանակը:
Հատոր Ա. շրջան 1794—1840 թ. և շրջան 1840—1860 թ.: Մէկ
լուսատիպ սլաոկերով: Վիեննա, Մխիթ. տպարան. 1893 թ. 226
ութածալ էջ, գինն է 2 Ֆրանկ:

ԼԵՒՈՆԵԱՆՅ, Գարեգին Ձիւանի.—Հացոց պարբերական մամուլը.
պատմական տեսութիւն սկիզբից մինչև օրերը (1794—1894 թ.)
ընդարձակ ծանօթութիւններով: Արժանացած Սահակ-Մեսրոպեան
առաջին (?) մրցանակին: 1895, Ալեքսանդրապոլ, տպար. Աբրահամ
Մալխասեանի, գինն է 3 ռուբլի. Քստածալ, 290 մեծազիր երկսիւն
երեսներ (Ի+570 սիւնակ):

Ահա երկու աշխատութիւններ
նոյն նիւթի մասին. երկուսի էլ
առարկան է տալ մի ցուցակ բո-
լոր հայ պարբերական թերթերի
սկիզբից մինչև մեր օրերը, ամեն մէկի
մասին տալով տեղեկութիւններ
թերթերի թէ արտաքին հանգա-
մանքների և թէ ներքին բովանդա-
կութեան ու ուղղութեան մասին:
1894 թւականին յրացաւ հայ լրա-
գրութեան հարիւրամեակը. արժէր
խկապէս այդ առթիւ մի հալեացք
դիւր 100 տարւոյ անցիալի վրայ.
բայց մեզ պակասում էին նիւթերը,
ամենից առաջ պէտք էր այդ նիւ-
թերը պատրաստել. և ահա երկու
հեղինակներ միաժամանակ տեղե-
կութիւններ են հաւաքում եղել: Հ.
Գալեմբարեան, Վիեննապոլ, առա-
ջինը ձեռնարկից գործին, սկսելով
իւր տեսութիւնը հայ լրագրութեան
Վիեննալի «Հանդէս Ամսօրեաց» ամ-
սաթերթում 1887 թւականին, որ և
շարունակեց նոյն թերթում տպագ-
րել մինչև 1890 թւականը: Այդ գոր-

ծը այդա ի մի հաւաքելով նա հրա-
տարակեց 1893 թւականին: Այդ մի
գիրքը կազմում է գործի առաջին
հատորը, ամփոփելով երկու շրջան-
ներ, որոնցից առաջինը տեսւմ է
1794-ից մինչև 1840 թւականը, երկ-
րորդ շրջանը՝ 1740-ից մինչև 1860
թւականը: Երկրորդ, զեռ չհրատա-
րակած հատորը՝ պիտի բովանդակէ
թւականները սկսած 1860-ից մինչև
1894 և կամ մինչև մեր օրերը: Լուս
տեսած առաջին հատորի մէջ տեսու-
թեան են առնւած 50 հրատարակ-
ւած և 13 լոկ ցայտարարւած թեր-
թեր սկսած 1794-ից մինչև 1860
թւականը, որոնցից մինչև այժմ մի-
այն երկուսը չարունակում են իրանց
գոյութիւնը (Վեներակի «Բազմա-
վէպ» և Կ. Պոլսի «Մասիս», վերջինս
պլ և պլ արտաքին և ներքին փո-
փոխութիւններով):

Իւր տեսութեան համար հալը Գա-
լեմբարեան զլրատրապէս օգտուած
է Վիեննալի միաբանութեան մատե-
նադարանից, որի մէջ, շնորհիւ հալը

Նզիշէ Գաֆթանեանի, ինչպէս կարծում է հեղինակը՝ հալ պարբերական հրատարակութիւնները ժողովածուն ալսօրս մի միակ հարուստն է և գրեթէ ամբողջացած է: Ալլ աղբիւրներ ծառայած են շատկապէս հալական մամուլին նւիրած երեք աշխատութիւններ—Փիլիպպոս ճամճեան՝ «Ազգային լրագիրներուն և օրագիրներուն պատմութիւնը» խորագրով լօղւածները՝ տպւած «Ներոպա» շաբաթաթերթում 1850 թ., Արթուր Լալստի «Հալ լրագրութիւն» լօղւածը գերմաներէն «Annenische Bibliothek» ժողովածուի մէջ, ապա Յարոյի «Հալոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մէջ» (Թիֆլիս, 1878 թ.): Բացի այդ՝ հեղինակը նկատի է ունեցած նաև Պատմութիւն հալերէն ղպրութեան Հ. Գար. Չարբանդեանի, Հալական Մատենագրութիւն նոյն հեղինակի և Պատմութիւն հալ մատենագրութեան Նզիշէ վ. Գուրեանի, չհաշւած կողմնակի աւելի աննշան աղբիւրները: Բաց, ներկայ գրքովի հեղինակի զխաւոր աղբիւրը՝ նոյն իսկ Վ. Ինենայի միաբանութեան լրագրական ժողովածուն է:

Իւր գործը հ. Գալեմքեան, որպէս ասացինք, բաժանել է երեք շրջանների. 1794—1840, 1840—1860 և 1860—1894 թ.: Աղպիսի բաժանում անելու հիմք ծառայում է այդ շրջաններում հրատարակած թերթերի բնատրութիւնը: Մինչ 1840 թ. (ընդամենը 11 թերթ). մամուլի «գեռաբոս մանկութիւնն էր», 1840-ից մինչ 1860 թ. հրատարակում են արդէն թւով շատ (39 հատ)

թերթեր—թէև շատերը կարծօրեալ, «փոփոխամիտ երիտասարդութիւնն» է այդ. 1860-ից սկսած լրագրութիւնը հաստատուն ոտքի վրայ է դնում (հաստատուն ալրութիւն):

Յիշւած առաջին շրջանից, իրօք որ, մեծ կարևորութիւն ստացած որ և է թերթ չհրատարակեց: Իսկ երկարատևութեան նկատմամբ՝ կիէ նոցանից մէկը՝ «Նդանակ Բիւզանդեան» Վենետիկի հ. Կնճինճեանի՝ 17 տարի չարտուեց, բայց այն էլ տարեթերթ էր: Հալ լրագրութիւնը այդ շրջանում որոշ և մշտական տպարներ չստեղծեց: Գորա հակառակը՝ 1840-ից սկսած. հալ լրագրութիւնը արդէն աւելի որոշ կերպարանք է ստանում. նոցանից մի քանիսը շատ թէ քիչ երկար կեանք են վախլում, որոնց մէջ մէկը կամ միւսը նաև բաւականին բարձր դիրքի հասնում ժամանակակիցների աչքում, ինչպէս Քաղիթեանցի Ազգասէրը՝ (8 տարի), «Հալաստան» (6 տ.), «Ներոպա» (17 տ.), Խրիմեանի «Արծել Վասպուրականի» (9 տ.), Ստ. Նաղարեանցի «Հիւսիսամալը» (6 տ.), Չմիւռնիպի «Արշալուս Արարտեան» (46 տ.), Վենետիկի «Բազմամէյար» (կէս դարն անցած), Կ. Պոլսի «Մասիս» (38 տ.): Թիֆլիսի «Մեղու Հալաստանի» (27 տարի), որոնք թուրքն էլ իրանց սկիզբը առած են 1860-ից առաջ և 1840 ից դէս:

Ի հարկէ հարց է թէ որքան բնական է և հիմնաւոր այդ երկրորդ շրջանը 1860-ով վաղկել, ինչպէս այդ արել է հալ Գալեմքեանեան. Լրագրութեան «Պատմութեան» մէջ զըլխատորը ոչ թէ թերթեր հրատարա-

տարակել սկսեւն է և կամ զոցա թիւի առատութեան աստիճանը, այլ մի կողմից հասարակական կարեւորութիւնը և միւս կողմից տիրանիկալի կատարելագործութիւնը, որոնց հասնում է թերթերի խմբագրութեան և հրատարակութեան գործը: Թէ այդ կողմից ինչով պիտի տարբերեն, օրինակ, 1860-ից մինչ 1870 թւականը հրատարակել սկսած թերթերը աչն թերթերից, որոնք առելի առաջ սկսեցին հրատարակել և որոնք տևեցին 60-ական, 70-ական և չաջորդ տարիներում—այդ դեռ կը մնալ ցոյց տալ, որպէս զի հայր Վալէմքեարեանի արած բաժանումները նաև ընդհանրապէս ընդունելի լինեն: Եւ միւս կողմից, միթէ արհեստական չէ երբ աչն թերթերը, որոնց գլխաւոր կեանքը ընկնում է 1860 թւականից դէս՝ օրինակ «Մեղու Հալաստանի» և «Մասիս», լրագիրներ, որոնք հասարակական կարևոր դեր են կատարած 60-ական, 70-ական և 80-ական թթ., երբ, ստում ենք մենք, այդ և նման թերթերը գնում են մի շրջանի մէջ, որ սկսում է 1840-ից և վերջանում 1860 թւականով: Անկասկած ազգպիտի մի բաժանում կրում է իւր վրայ արհեստականի դրօշմը: Մենք, առհասարակ, հայր Վալէմքեարեանի գրքովին չէինք բարեկամել «պատմութիւն հալ լրագրութեան» անունը, որովհետև նա ոչ թէ «լրագրութեան», այլ «լրագիրներ» և կամ առելի ճիշդ՝ «պարբերական հրատարակութիւններ» պատմութիւն կամ տեսութիւն է ժամանակագրական կարգով: Չենք կասկածում որ, ով միայն

գիտէ դանադանել «լրագրութիւն» և «լրագիրներ» խօսքերի խմատը, կը համաձայնի նաև մեզ հետ այդ բանի մէջ: Լրագրութեան պատմութիւնը մի պատմութիւն պիտի լինէր թէ ինչպէս լրագրական գործը ծնեց, զարգացաւ, թէ ինչպէս մէկը շարկապէս միւսի հետ բովանդակութիւնով, ուղղութիւնով, թէ ինչ զարգացումն ստացաւ լրագրութեան կապը դիտութեան հետ, ժամանակակից կեանքի հետ, հասարակութեան հետ, ժողովրդի հետ և այլն և այլն և որոնք եղան կենարոնական ուժերը այդ զարգացման գործի: Կա կը լինէր արդարև պատմութիւն լրագրութեան: Դակ աչն, ինչ ներկայ աշխատութիւնն է տալիս մեզ—այդ՝ հատ հատ լրագիրների մասին տեղեկութիւններ են—վերաբերեալ նոցա արտաքինի և ներքինի, երբեմն շատ կարճ, երբեմն առելի ընդարձակ, նաեւ թերթի կարևորութեան, ժողովրդի նիւթերի լիակատարութեան կամ նաեւ թերթի կրած խմբագրական և հրատարակութեան այլ պայմանների փոփոխութիւններին:

Եւ այդպէս էլ պետք է դատել հայր Վալէմքեարեանի աշխատութիւնը: Արդ, հեղինակը գործ է գրել բանիմաց և բարեխիղճ աշխատասիրողի ջանքեր՝ իւր աշխատութիւնը գնահատելի դարձնելու հալոց գրականութեան համար իբրև առաջին փորձ մի լիակատար պատմութեան հալական պարբերական հրատարակութիւնների,—(թէև առաջմ միայն մինչ 1860 թւականը լոյս տեսած). իբրև այդպիսին—ներկայ աշխատութիւնը արժանի է շնորհա-

կալու թեան և խրախուսանքներն:

Ամեն մի թերթի համար հեղինակը աշխատել է տալ տեղեկութիւն նաև նորա ուղղութեան մասին: Մենք ձեռնահաս չենք դատելու տաճկահայոց հին թերթերի մասին հեղինակի գրածները, բայց դատելով աչն բանից, ոչ մենք գտնում ենք գրած ուսանալոց մի քանի թերթերի ուղղութեան և բովանդակութեան մասին, — երևում է որ հայր Գալէմքերեան բաւականաչափ ծանօթ է տեսութեան առնւած թերթերի ուղղութիւններին ու բովանդակութեան՝ շատ թէ քիչ մերձաւոր գնահատութիւն անելու համար նոցա արժանիքներին թէ ըստ նիւթի և թէ ըստ ուղղութեան: Բայց միզ պակաս է երևում բուն պատմարանի աչքը, ամեն մի թերթ միաչն առանձնակի քննելով՝ հեղինակը բաւականաչափ շոշափելի չէ կացուցանում աչն աիրող գաղափարները, որոնք ծնունդ են տւած այս ու աչն թերթին և որոշած նորա ուղղութիւնն ու տպած նիւթերը: Եւ այդպիսով աչն տպաւորութիւնն է ստացւում, իբր այս ու աչն թերթը լոկ մի մարդու կամ մի փոքր շրջանի ձեռնարկութիւն է եղած, առանց ոգեկան կապի շրջավազի և գործող սերնդի հետ, և առանց որ և է ոգեկան աւանդ թողնելու իւր լեւոնորդներին: Որքան օրինակ, շոր ու ցամաք է Հիւսիսափալլի մասին գրածը! Կարդալով այդ լուսածը, մարդ չգիտէ թէ արդեօք ինչ մնաց այդ ամսագրից. կարծես թէ ոչինչ. և սակաչն՝ ներկայիս չառաջդիմական մամուլը մասամբ Հիւսիսափալլի հետ է կապւում: Կարդա-

լով նուն լուսածը՝ աչնպէս կը թւայ որպէս թէ Մ. Նալբանդեանց ուրիշ ոչինչ չունէր եթէ ոչ միաչն «կիրք և կողմնակալութիւն». և սակաչն ուսանալոց նշանաւոր հրատարակախօսների մէջ Նալբանդեանց իւր տեղը ունի: Նաև կարծես Հիւսիսափալլը մեր նոր գրականութեանը որ և է մնալուն բան չտեսց. և սակաչն Շահազիզի թէ լեզուն և թէ նորա ոտանաւորների տեղեկեցիան Հիւսիսափալլի հետ կապ ունի: Սաղաթեանի թարգմանած «Գև»-ը մինչ օրս էլ հիացմունք է պատճառում — Հայր Գալէմքերեան մեծ հաճութեամբ վկայում է թէ Նալբանդեանց վերջը գրաբարի փոխանելու մէջ շատ անգամ «գրաբարին վերադառնալու ըրձացող խմբէն աւելի ազատութիւն ցոյց տւած է»: Եւ այդ վկայութիւնն անում է շանդիմանելու համար նոցա, որոնք «իրենք զիրենք Ս. Նալբանդեանցի լեզուկան ուղղութեան հետևող հոչակելով հանդերձ՝ գրաբարի և նաև գաւառաբարաւորու անտեղեկութեամբ՝ ստիպւած են թուրք ու թաթար և ուսու բաւերով ու ստութեամբ իրենց լեզւին աղքատութիւնը ճոխացրնել — և կը լուսարին նաև պարծիլ որ լեզու ստեղծած են»: Բայց ով միաչն լաւ հետևած է մեր աշխարհաբարի զարգացման և կանոնաւորելու ընթացքին, նա կը գիտենայ նաև որ այդ մշակութեան գործը ոչ ոք աչնպէս սերտ չի կապում Նալբանդեանցի հետ ինչպէս այդ ցոյց է տրւած վերջ առաջ բերած տողերում, նաև ոչ ոք աչն նախապաշարումը չունի գրա-

բարի գէմ՝ սորա դէրի նկատմամբ
 ներկայիս գրական լեզուի շինութեան
 գործի մէջ, ինչպէս այդ կարծել է
 ապլիս հայր Վալէմքերեան. իսկ
 ինչ վեարբերում է գաւառարար-
 բառներին, մեզ թւում է մինչև ան-
 գամ, որ այդ նկատմամբ հեղինակը
 որպէս աւելի հակած դէպի գրա-
 բարի ջատագոյութիւնը, արդէն ու-
 չացած և քողարկած խոստովանու-
 թիւն է անում չօգուտ աչն բանի
 (գաւառարարբառի), որի դէմ էին
 առաջ գրաբարասէրները. Նաև
 թուրք, թաթար և ռուսական բառեր
 անտեղի կերպով մեղմում գործածող-
 ներ չկան շատ թէ քիչ հեղինակա-
 տր գրողներին շարքերում. կան եւ-
 րոպական ընդհանրացած բա-
 ռեր գործածողներ, բայց դա մի ցույց
 չէ գրաբարի կամ բարբառների դէմ,
 այլ մասամբ ժամանակաւոր
 գործածութիւն, մինչև որ նոյցա փո-
 խարինող հայերէնը մշակէ ինքը
 կիանքը, որովհետև օտար բառը
 փոխարինելու համար գործած-
 ւող գրաբար բառը չաճախ աւելի
 մեծ ապագայ չի խոստանում. բայց
 թէ այդ որ թուրք, թաթար ու
 ռուսական բառերն են, որոնց ափ-
 նարկում է հայր Վալէմքերեան—
 այդ մեզ համար հասկանալի չէ, ո-
 ռովհետև այդ լեզուներից բառեր փո-
 խառութիւն անելու սովորութիւն չկալ
 մեր գրական լեզուի մէջ, բայց եթէ
 միայն աչն դէպքերում երբ մի գրող
 նիւթի և հանդամանքների շնորհիւ՝
 պարտաւոր է համարում որ և է ժո
 ղովրդի բարբառին հետեւու:

Եւ դարմանալին աչն է, որ Մխի
 թարեան միաբանութիւնը դեռ նո-

րերս հրատարակեց մի ամբողջ հատո-
 րիկ, (Հիւրչմանի և Բո ոկիւմ.) աչն բո-
 ւորհալ (այսինքն հաւայրած) բառերի,
 որոնք հին ժամանակներում անցած
 են մեզ օտար լեզուներից, իսկ աւժմ
 նոյն այդ միաբանութեան լաւագոյն
 ներկայացուցիչներից մէկը զալիս ու
 պախարակում է աչն ամենքին, ու
 քեր միայն համարձակութիւն ունեն
 ընդհանուր եւրոպական քաղաքա-
 ցիութիւն ստացած մի որ և է բառ
 գործածել, շատ անգամ առի չգոյէ
 հայերէնի:

Մենք այդ կէտի վրայ մի փոքր
 աւելի կանոյ առանք, որովհետև բա-
 ցի աչն որ լեզուի մասին Մխիթարեան
 ների ունեցած հալեացքները ըստ ե-
 րևութիւն սատարիկ ազգում են նաև նո-
 ցա կարծիքների վրայ մի թերթի
 արժանաւորութիւնների մասին առ-
 հասարակ, այլ նաև նոքա լեւելաչն
 խրախուսող են հանդիսանում մեր
 աչն գրողների, որոնք ուղղակի աղ-
 ճատ լեզու ունին, միայն թէ այդ
 աղճատութիւնը չառաջացած լինի
 գրաբար իօսքերի և դարձածների
 չաճախ անտեղի գործածութիւնից:

Ի դէպ, անխառը հայերէն գրելու
 համար պարծանք վալելողները, չղի-
 տենք այլ ես գրաբարի թէ որ և է
 մեզ անչալտ բարբառի ազդեցու-
 թեան ներքո՛ւ՝ աչնպիսի նախադա-
 սութիւններ են կաղմում, որոնց ի-
 մաստը առեղծւածալին է: Օրինակ,
 զրքուկիս էջ 191—192. «Անոր հա-
 մար մեղի անըմբռնելի է թէ ինչու
 Կ. Պոլսոյ «Մեղուն» աչնչափ խոռ
 ված և խռովեցուցած էր իրենները,
 «Արեմտաք» ի Կ. Պոլսոյ մէջ գտած
 ընդունելութիւնը գրով և պատկերով

հեղինակն ստորագրելով և հաւաքելով խոռովեալ ժողովրդեան բերնէն չուեսես և սպառնալից «Արեմուտք»ի չառաջ բերած ազդեցութիւնը: Թէ ինչ է նշանակում «հաւաքել ազդեցութիւնը» այդ մեզ անհասկանալի է:

Սակաւն, շատ չչեղւեհնք բուն խնդրից: Արկինենք, որ աշնուամենաչնիւ հաւր Գալիսթեարեանի ներկալ հատորը մի բարեխիղճ աշխատութիւն է: Բաւց և համառօտ է: Մեր կարծիքով՝ քանի որ Արկինենալի Մխիթ. միաբանութիւնը տէր է մի բաւականին կատարեալ լրագրական ժողովածուի, զուր չէր դատուի եթէ տեղեկութիւնները թերթերի մասին աւելի առատօրէն արւած լինէին: Մեր խօսքը վերաբերում է մանաւանդ կարեորագոյն թերթերին, որոնց նշանաւորագոյն չօղւածներից եթէ սխտեմական քաղւածներ առաջ բերւած լինէին—անշուշտ բնագիրների լեզուով և ուղղագրութեամբ— զիրքը շատ աւելի մեծ օգտակարութիւն կը ներկայացնէր: Այդպիսի քաղւածներ արւած կան նաև այս հատորի մէջ—բաւց ոչ բաւարար չափով: Մի քանի օրաթերթերի և ամսագրերի համար բերւած են «ազգային զիտութեան» վերաբերեալ չօղւածների ցուցակներ (փակագծում նշանակում ենք թէ այդ նիւթերը թերթերի որ տարիներից են) այդ թերթերն են՝ «Արշալուս Արարատեան» (1840—69), «Բաղմավէպ» (1843—1887), «Հայրենասէր» (1843—1846), «Հայաստան» (1846—1852) «Ներուպա» (1847—1857). «Բանասէր» (1851 թւականի չօղւածները), «Մասիս» (1852—1886 թթ.-ին

տպւածները), «Նուեան Աղաւնի» (1852 թ.), «Աստղիկ Արարատեան» (1855 թ.), «Մասեայ Աղաւնի» (1855—1861), «Արծուի Վասպուրական» (1855—63), «Ներեակ» (1858—1866), «Հրախափալը» (1858—1864), «Ճռաքաղ» (1858—1882):

Բաւց, ինչպէս ասացինք, վիշտակած են մի առ մի միալն այն չօղւածները, որոնք վերաբերութիւն ունին հալ պատմութեան, լեզվին և այլն, մի խօսքով «ազգային զիտութեան»: Իսկ չօղւածներ, որոնցով որոշուի են այդ թերթերի ուղղութիւնը և հալեացքները, չօղւածներ, որոնք ազդեցութիւն են արել ժամանակակից սերունդների և հալական կամ որ և է կուսակցութեան մտքը ընթացքի վրայ,— այդպիսի— և ի հարկէ, ոչ միալն խմբագրի գրչից բղիւած—չօղւածների ցուցակներ չեն բերւած, եթէ միալն նոքա նաև հալպիտութեան չեն վերաբերում: Գորա պակասը հեղինակը կամեցել է լրացնել ամեն մի թերթին նիւրած ընդհանուր նկարագրովը. բաւց այդ տողերը աչնքան սուղ են, որ նոքա չեն լրացնում այդ պակասը: Թէ որքան քիչ բան է խօսուում նոյն իսկ ամենակարեոր թերթերի մասին՝ մօտաւոր գաղափար կարելի է կաղմել աչն էջերի թւից, որ նւիրւած են ամեն մի թերթին: Ահա մինչ 1860-ը լոյս տեսած աչն թերթերը, որոնք աւելի երկար կիանք կամ աւելի կարեորութիւն են ունեցած և թէ որքան էջ է նւիրւած նոցա առհասարակ. (մեր ընթերցողներին աւելի հասկանալի դարձնելու համար ասենք որ գրքովի երկու երեսը հա-

առար է «Մուրճ» ի մտաւորապէս մի երեսին):

Ազգարար	3 տարի 15 ¹⁾
Արշալ. Արարատեան	46 » 12 էջ
Քաղմալէպ	51 » 18 »
Ազգասէր	8 » 8 »
Հայաստան	8 » 6 »
Երոպա	17 » 8 »
Քանասէր	2 » 6 »
Մասիս	41 » 12 »
Մասեաց Աղանի	10 » 4 »
Աւետարեր	39 » 2 »
Արժ. Վասպուրական	9 » 6 »
Հիւսիսափալ	6 » 13 »
Մեղու Հայաստանի	27 » 6 »

Աւրեմն «Մուրճ»-ի երեսների վերածելով՝ ամենաշատը ինչ ասուում է մի թերթի թէ արտաքինի և թէ ներքինի մասին՝ 9 երես է, իսկ սովորաբար 6, 4, 3, 2 երես և աւելի նւազ: Եւ զոքա զեռ երկարներն են. դատեցէք, ուրեմն, թէ այդքան երեսներում որքան տող կամ որքան երես կարող է բաժին ընկնել թերթերի բովանդակութեան և ուղղութեան նկարագիրներին... Եւ ամբողջ գիրքը կազմում է ընդամենը «Մուրճ»-ի միջակ մեծութեան տաւերով տպած 100 երեսը, նւիրած փսուն թերթերին:

Անշուշտ պատահական չպիտի համարել որ Մխիթարեան միաբանը այդքան գերակշիռ ուշադրութիւն է դարձրել «աղգալին գիտութեան» վերաբերեալ թերթերին և չօղւածնելին, որոնք մեր աչքում ևս անշուշտ

իրանց կարևորութիւնն ունին. այդ բացառիկութիւնը մեկնուում է Մխիթարեանների շկոյալի ուղղութիւնով, որի շրջանակները հայր Գալեմքարեան, որպէս մեզ թւում է, ոչ թէ սեղմողն է, այլ զեռ ընդարձակողը:

Բայց ինչ և է, գրքուկը այնպէս, ինչպէս նա կալ՝—մեր վերջին տարիների հաւաքագրական գրականութեան լուրջ աշխատութիւններից է, գնահատելի մանաւանդ տեղեկութիւնների ճշդութիւնովը, և այն հանգամանքով, որ, ուր տեղեկութիւնները իրան պակասել են՝ հեղինակը խոստովանել է ինչպէս և վազել է գիտնական հետաքոտողին:

Ի վերջոյ ասենք, որ այս առաջին հատորը ունի մի չաւելւած, որը կազմում է գրքի անբաժան մասը, որովհետև բաւականին չափով տեղեկութիւններ զետեղւած են այդ չաւելւածի մէջ:

Բայց ահա և մի այլ գիրք նոյն նիւթի մասին. այս մէկը՝ Գարեգին Զիւանի Լեոնեանցիին է, որի մի այլ գիրքը հալ աշուղների մասին՝ «Մուրճ»-ում անցեալ տարի մի գրախօսական ուլքնեց: Գիրքը կազմում է մի մեծ ու փառաւոր հատոր, իւր պարունակութեամբ 3—4 անգամ աւելի մեծ քան հայր Գալեմքեարեանի առաջին հրատարակւած հատորը: Ա. Լեոնեանի աշխատութիւնը պարունակում է 1794-ից մինչ 1894 թ. լոյս տեսած բոլոր հայոց թերթերի նկարագիրը, որոնց թիւն է, ըստ հաւաքագրողի՝ 172:

Թերթելով ներկալ մեծ հատորը՝ մարդ չգիտէ ինչին աւելի զարմանալ:

¹⁾ Որից 4—5 երեսը բւճում է գրքերի մի ցււցակ որ հրատարակւած է եղել «Ազգարարում»:

աջն բանին որ մի երիտասարդ, Ալեք- սանդրապոլում նստած, ուր երեւ- կալում ենք թէ ինչ գրադարաններ կարող են լինել, հայոց բոլոր թեր- թերի նկարագիրը տալու վճռողա- կանութիւնն է ունեցել, թէ արդեօք հեղինակի անձնապատանութեան վրայ հեղինակի, որ կարգին ոչ մտա- ծել, ոչ գրել և ոչ շարադրել գիտէ, ամեն քաղափոխում մի թերուս գա- ւառական գրագէտի դատողութիւն- ների նմուշներ է տալիս, բայց և փտահանում է ամեն ինչ դատել՝ գո- վելով կամ պախարակելով: Այդ գիր- քը լուրջ քննադատութիւն չի վերցնում՝ ոչ շարադրութեան, ոչ դա- տողութիւնների կողմից. երեխալա- մտութիւնը մտնում է նոյն իսկ լեզ- ւի մէջ. աշնպիսի անգրագէտ նախա- դատութիւններով է լիքը այս ամբողջ գիրքը, որ ընթերցողի մէջ անդիմա- դրելի կերպով հարց է ծագում հեղի- նակի ով լինելու, որտեղ ուսած և նոյն իսկ քանի տարեկան լինելու մասին: Նա գաղափար չունի նախա- դատութեան մասերը իրար հետ շաղ- կապելու մասին. օրինակ.

«Այս գիրքը որ մի համառօտ աշխատութիւն է 108 փոքրագիր էջե- րից բաղկացած, պ. խմբագրողը մի քանի էջերում խօսում է հալ լրագրութեան մասին»... (տես չառաջաբան. ԺԳ—ԺԵ). և կամ չը- գիտէ բառերի իմաստը՝

«Այդ կարիքը պիտի չագե- ցնէր «Մուրճ» ամսագիրը»:

«Արշալույսն էր որ ժամանակա- կից պահանջներին անհրա- ժեշտ՝ իւր սկզբունքը կապել էր հայրենասիրութեան... հետ: (էջ 40):

«Աւրոպացոց մէջ երևացող աղա- մանքները» (էջ 11,) ուզում է տեղ ալմանախնները:

Եւ կամ կուրիօզներ, ինչպէս՝ «Դարուս առաջին կիսի վեր- ջի կիսին», որ դեռ կանոնաւոր... լրագիր չէր երևում»... (էջ 39)

Եւ այլն և այլն և այլն. քերա- կանական և շեղական կուրիօզների թիւ ու համար չկալ այս գրքում:

Բայց կուրիօզները շարունակ- ւում են նաև ուրիշ բաներում: Հա- ւաքագրողը թւում է այն աղբիւր- ները, որոնց վրայ նա լցնում է, և այդ «աղբիւրների» թւում նա լի- շում է աշնպիսի գրածքներ, որոնք աղբիւրի արժէք չունեն. օրինակ, 1893-ին լույս տեսած (Մակար Չմկեա- նի) մի շնչին օրացույցի մէջ տպւած են գոյութիւն ունեցող մի քանի թեր- թերի մասին չալտարարութիւններ, որոնք արդէն աղբիւր են ծառայում մեր հաւաքագրողին. աղբիւրների թւումն է նաև Ռոստովի Տէր-Աբրա- համեանցի 1893 թ. օրացույցը, ուր չալտարարութիւններ կան տպւած լրագիրների մասին...

Տեղեկութիւնների աղբիւր է ծա- ռայում նաև Խ. Մալումեանի մի բրո- շուրը, «որի մի քանի երեսներում, ասում է պ. Ջիւանի Լեոնեան իւր անգրագէտ լեզուով, հեղինակը ծա- նօթացնում է իւր ընթերցողնե- րին գլխաւորապէս Ռուսահայոց մա- մուլից մի քանի տեղեկութիւն- ներ»:

Եւ այդ ու մի քանի ուրիշները բերած են կարևոր աղբիւրների հետ միասին և նշանակւած են որպէս «հիմնական աղբիւրներ»:

Ուզում էք իմանալ թէ մեր հաւաքագրողը ինչպիսի նմուշներ է տալիս ամեն մի թերթի լեզուից, ոճից, ուղղագրութիւնից: Նա վերջնում է մի հատ նախադասութիւն ամեն մի թերթից, և այն էլ ոչ թէ մի նախադասութիւն ամբողջապէս, այլ չաճախ միայն նորա կէտը, քառորդը, կէտ դնելով նոյն իսկ խօսքը չլրացրած տեղում: Օրինակ, լրագիրներէից մինի համար բերում է այս նմուշը. «Արածես թէ ալդ մի մասնաւոր դէպքով, մասուրից դուրս կեանքի մէջ կատար...»: Եւ կամ՝ «Հնութեան փուշիով ծածկւած մտքերը բացել նորա աչքերը կատարուող...»

Կուրիտգների թիւ ու համար չկալնոքա անվերջ են: Մարդու խեղճն է գալիս, տեսնելով որ մեր հաւաքագրողը երբեմն նոյն իսկ չի էլ հասկացել իւր կարդացած գրքերի իմաստը: Հետեւ սլ նմուշը իսկ որ դասական է: Պարոնեանը իւր «Ազգային ջոջերի» մէջ, ուզենալով ծաղրել Արծրունու հակումը դէպի օտար բաները, հնարել է մի հեռագրի թարգմանութիւն, լիքը օտար և նոյն իսկ աղաւաղ բառերով: Եւ որովհետեւ մեր հաւաքագրողը չգիտէ թէ ինչ բան է Պարոնեանի ծաղրը, ալդ հեղինակի ննարածը նա վերցրել ու տեղաւորել է իւր գրքի տեքստի մէջ, հաւատացնելով թէ նա տպւած է «Մշակ»-ի մէջ...:

Մեր հաւաքագրողը այնքան ընկրկել է իւր «ճիւթերի» մէջ, որ կարծես խպաւ կորցրել է սեփական աչքով մի բան գիտելու ընդունակութիւնը: Օրինակ, «Մուրճ»-ը մեր ժամանակաչ թերթ է. և ահա պ. Լե-

ոնեան ալ ևս չգիտէ թէ ինչ «աղբիւրներէից» նա տեղեկութիւններ «հաւաքէ»: ստիպւած է ուրեմն անմիջական զիտողութեանը դիմել Ահա նա կազմում է «Մուրճ»-ի «մշտական» աշխատակիցների ցուցակը, բայց որովհետեւ նա չգիտէ ինչն է մշտական և ինչը պատահական՝ նա լիջում է՝ «մշտականներին» մէջ և այնպիսի անձերի անուններ, որոնք իրանց կեանքում միայն մի հատ գրածք են ունեցած «Մուրճ»-ում և որոնք նոյն իսկ «Մուրճ»-ին հակառակորդ են ճանաչւած: Եւ կամ, գիցուք, պ. Լեոնեան ուզում է տալ ցուցակը «Մուրճ»-ից արտատպած գրքերի. դորա համար դա չունի երկրորդական աղբիւրներ, ստիպւած է առաջնակարգ աղբիւրից օգտուել. իսկ այդ աղբիւրն է «Մուրճ»-ի չարտարարութեան բաժնում լաճախ տպւած ցուցակը: Եւ ահա նա արդէն շփոււում է, ու «Մուրճ»-ից արտատպած գրքերի մէջ գնում է այդ ամսագրի խմբագրի՝ «Մուրճ»-ի հետ ոչ մի կապ չունեցող մի աշխատութիւնը՝ «Արեւելեան ազգերի հին պատմութիւնը»: Եւ վերջապէս նա խոստանում է չիչել ամսագրից արտատպած հրատարակութիւնները, ու լանկարծ՝ որտեղ իւր քէֆը ուզում է՝ կանգ է առնում ու դնում «և այլն» խօսքը, որ միանգամայն անտեղի է:

Աւելորդ չէ ասելը, որ հաւաքագրողը ջերմաջերմ երկրպագու է «Նոր-Գար»-ի և աշակերտողը վերջինիս: Ալդ թերթին նւիրած լողաձոււ ինչեր ասէք որ չի ասում պ. Լեոնեան, ցուց տալու համար թէ որքան տարածւած թերթ է, որքան

շատ (միշտ ի հարկէ «մշտական») աշխատակիցներ ունի նա, որքան ցաւալի է որ նորա «բաժանորդները» միայն մի մասն են վճարում բաժանորդագիրը և այլն. մի այլ տեղ (էջ 336) մանրակրկիտ կերպով հաւաքագրողը հաշուել է թէ 1891 թւականին որքան չօգւածներ և նոյն իսկ մանր լուրեր են տպագրուել այդ և դորա հակառակորդ մի այլ թերթում:

Հաւաքագրողը, որը մի համբակ է բառիս բուն նշանակութեամբ, փոխանակ լիակատար և կարևոր տեղեկութիւններ հաղորդելու՝ շարունակ բանակութիւններ է մղում այս ու այն թերթի դէմ, երբէմն հասնելով նոյն իսկ լրբութեան. բաւական է ասել, օրինակ, որ գիտնական աշխարհում չայտնի անուն վայելող Գալուստ Տէր-Մկրտչեանը (Միարան) մեր հաւաքագրողի գրչի տակ (տես «Արարատ» ամսագրին նւիրած չօգւածը, էջ 296—97) ոչ այլ կերպ է չիշուում, եթէ ոչ «Միարան ստորագրող մի պարոն՝ Գալուստ Տէր-Մկրտչեան», և կամ ովքեր էին «Արարատ»-ի աշխատակիցները տեղակալութեան օրօք. այս ու այն պարոնները և «Միարան...» (քաղմակէտները հաւաքագրողինն են, իբր հեղուցութեան նշան) իսկ թէ ովքեր էին առաջ, սկզբից մինչ 1891 թւականը, դոցա անունները նա չիշում է ամենայն ակնածութեամբ, սկսած Աբէլ եպիսկոպոսից և վերջացնելով ոմն աւ. սարկ. Փինաչեանցի անունով, անհրաժեշտ «և այլքն» էլ հետը... Եւ այդ բանակը ռուսական տենդով բռնածը աւելորդ է համարում ուղղակի չիշել

աչպիսի մի կարևոր հանգամանք «Արարատ»-ի մասին, թէ այդ թերթի բաժանորդ գրուելը պարտադիր է բոլոր հայ-լուսաւորչական եկեղեցականների համար Ռուսաստանում, իսկ Մակար կաթողիկոսի մի կարգադրութեամբ՝ նաև Ռուսաստանի հայոց դպրոցներում ծառայող բոլոր ուսուցիչների համար:

Այդ թերթի մասին աչպիսի կարևոր տեղեկութիւնները նա բաց է թողնում, և ընկնում բանակուի մէջ իւր չհասկացած խնդիրների մասին:

Մի խօսքով, մի կողմը թողած խակ դատողութիւնները, ներկայ գիրքը կազմւած է աջակէս, որ չի կարող իբր հեղինակաւոր աղբիւր ծառայել հայոց լրագիրների մասին: Ոչ թէ որովհետև ստույգ տեղեկութիւններ չկան նորա մէջ, ընդհակառակը՝ մենք ուզում ենք հաւատալ որ ստույգ տեղեկութիւններ չառ և շատ կան նորանում բաց այնքան շատ անհեթեթութիւնների ենք հանգիպում, որ գրքից օգտուել ուղղորդակամաչ երկիւղ է կրում հեղինակին հետեւելու:

Եւ անա աչպիսի մի գիրք առաջարկողն է որ, իւր գրքի լոյս տեսնելուց մի փոքր առաջ, «Արարատ»-ում (1895 № 2) դուրս եկաւ մի երկար գրախօսականով, ուր նա նպատակ էր դրել հայր Գալուստեանի վերոյիշեալ գրքովը իբր բազմաթիւ սխալներով կազմած մի ցարագրութիւն ցոյց տալ:

Էջմիածնի «Արարատ»-ում պ. Ջիւլանի Առնեան մեղադրեց հայր Գալուստեանին մի քանի սաննե-

րեւի սխալն երի» համար:

Այդ սխալներից առաջինի համար նա գրել էր այսպէս.

«Հայ անդրանիկ Ազդարար լրագրի մասին հ. Գ. (Գալեմբար) ասում է որ այս ամսագիրը տեւել է երեք ամբողջ տարի: Յետոյ գըր քովի վերջում իւր Ուղղեւի ք-Յաւել ԼԼԻՔ-ի մէջ մասամբ ուղղել է իւր սխալը: Աւելի պարզաբանելու համար չիչնք որ Ազդարար 1794—1796 թւերի ընթացքում հրատարակել է միայն մէկ ու կէս տարի, որ է 18 տետրակ»: (Նւ. չետոյ Լեոնեան առաջ է բերում թէ ամեն մի համարը որ ամսին էր հրատարակւած):

Այժմ բաց ենք անում հ. Գ.-նի գրքի էջ 219 և այդտեղ կարդում այս խօսքերը. «Ուրեմն Ազդարար 1794—6 միայն 18 ամսատետր ունեցած է»: Ուրեմն Լեոնեան ստուգում է, քանի որ հայր Գ. ոչ թէ մասամբ, այլ լրիւ է ուղղում իւր սխալը: Այժմ երբ Լեոնեանի զիրքը արդէն մեր առաջն է զրած՝ բաց ենք անում կարդալու Ազդարարի մասին չօրւածը, և ինչ ենք տեսնում? Այն, որ հաւաքադրող պ. Լեոնեանը Ազդարարի մասին ոչ միայն աւելի լիակատար տեղեկութիւններ չի տալիս, այլ այդ կողմից՝ հ. Գ. լեմբերեանից շատ ետ է մտում, չնայած որ վերջինս զեռ. 1893-ին է հրատարակւած: Լեոնեանի գրքում չի աւած նոյն իսկ թէ Ազդարար միայն 18 տետր հրատարակեց: Ուրեմն ինչ է զուրս գալիս. այն, որ Լեոնեան օգտուում է հ. Գ.-նի գրքից քան անգեղութիւնից և նոյնը այդ

գրքի հեղինակի երեսովը տալիս, որ մէջ տեղը ինքը պարծենալ... Որքան ամօթ...

Մի երկրորդ օրինակ ևս, այդ առաջնից զեռ շատ աւելի զարմանալին: Հայր Գալեմբ. իւր գրքում ասել էր թէ Նոյեան Աղաւնի (որ սկուած էր 1852-ին) զադարեց հրատարակել 1853-ին, օգոստոսի 8-ին վերջին 74-րդ համարով: Էջմիածնի Արարատում Լեոնեան, իւր վերը վիշած գրախօսականում եկաւ չաչտարարելու թէ հ. Գալեմբ. 20 տարով սխալել է. և որպէս զի աւելի աչքի ընկնի իւր գիւտովը՝ նա չի բաւականացել քսան խօսքը սովորական թւանշանով նշանակել այլ գրել է «20=XX=ի տարի»: Այժմ, երբ Լեոնեանի գիրքը մեր առջն է, բաց ենք անում Նոյեան Աղաւնիի մասին չօրւածը և կարդում ենք նոյնը ինչ հ. Գալեմբ. ասել էր, այն է թէ Նոյեան Աղաւնի՝ հրատարակեց 1852—53 թւականներին, և որ «1853 թ. օգոստոսի 8-ին թերթի 74 րդ համարը վերջինն եղաւ»: Իսկ իւր գրքի չաւելածում միայն նա պնդում է այն, ինչ ասել էր «Արարատ» ամսագրում, առանց որ և է վկայութիւն բերելու իւր պնդածի ճշմարտութիւնը հաստատելու համար...

Նւ զեռ վերը բերած օրինակները միակը չէ. ոչ այդքան սարսափելի բաց նման ֆոկլորաբանութիւն է անում Լեոնեանը նաև Արծուի վասպուերական թերթի առիթով, Աւետաբերի առիթով և այլն: Եւ այդ ֆոկլորաբանութիւնները նա անում է այն հեղինակի

գլխին, որի (հ. Գ. պեմքեարեանի) շողածներինց շահնդէս Ամսօրեալումնա, Լեոնեանը, պէտք է որ ամենամեծ օգուտները քաղած լինի իւր սեփական աշխատութեան համար Եւ ահա այդ պարուն է, որ «Արարատ» ում ամենայն անձնապատանութեամբ, անհամեստութեամբ գրում է և «Արարատ»-ի խմբագիրներն էլ տպելին այս կոպիտ տողերը.

«Վերապատելի հալը շտապել էր իւր գրքից մի օրինակ ուղարկել էր (այս լեզուն Լեոնեանինն է, և մենք, պաճապանելով նաև կէտադրութիւնը բաց ոչ ուղղագրութիւնը, արտատպում ենք Արարատից անփոփոխ) Կոստանդնուպոլիս, Սահակ-Մեսրոպեան 1894 թվականի մրցանակաբաշխութեան մատնակցելու համար Գննադատները համեմատելով նիւթերի պակասութիւնը, ժամանակագրական աչքի ընկնող սխալները, չէին կարող չես չձգել արժանաւոր գրւածների շարքից և ինչպէս չաչանի է ոչ մի պարզատուութեան շարժանացաւ որպէս կը սկստար գործի Իսկ անհամեստութիւնն չի լինի կարծում ենք արձանագրել այստեղ որ նոյն թվականի մրցանակաբաշխութեան ուղարկած «Հայրց պարբերական մամուլը» տուար աշխատութիւնը, որ 1794—1894 թ. հալ շրջագրութեան ամբողջացած պատմութիւնն է բազմաթիւ ծանօթութիւններով, առաջին կարգի պարզի հետ արժանացաւ Գործագիր Մնայուն Յանձնաժողովի քաջալերութեան»:

Այս տողերի գեհկութիւնը մեկնութեան կարծած է: Միայն մի բան, այդ որ հիման վրայ պ. Լեոնեանը ամենուրեք և ամենից չեստոյ նաև իւր գրքի ճակատին չաչտարարում է թէ իւր աշխատութիւնը արժանացած է Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան առաջին պարգևին: Պաշտօնական գրութեան մէջ որ տպած է պ. Լեոնեանի գրքում, ոչինչ չի ասած պարզի առաջնակութեան մասին, այլ միայն ասած է «արժանի դատեցաւ քսան (20) Օսմանեան սկի պարգևի»: Այդ խօսմանում է և ոչ իսկ 200 ո.: Մենք գիտենք որ Գործագիր Մնայուն Յանձնաժողովը այլ տարիներ տել է պարգև նաև 600 ո. մի միակ աշխատութեան համար: Այդ որտեղից ուրիմն դուրս բերեց պ. Լեոնեան թէ իրան տւած մրցանակը առաջին կարգի պարգև է:

Եւ նման աչքկապուկ ռեկլամների ձգտումը մեր հաւաքագրողը մտքել է նաև մի այլ բանում. իւր գրքի լոյս սնանկուց ի վեր նա մի քանի լրագիրների մէջ չաչտարարութիւններ է տպում ուր նա, իւր գրքին ահագին մեծութեան պատիւը չատկացնելու մտքով առանց քաշելու չաչտարարում է թէ իւր այդ գիրքը բազկացած է մօտ 600 մեծագիր (երկէջեան) երեսներին»: Եւ ընթերցողը պիտի կարծէ ի հարկէ թէ գիրքը բազկացած է մօտ 600 մեծագիր երեսներից, ամեն մի երեսն էլ բաժանուած երկու սիւնակի: Մինչդեռ իսկութիւնը այս է, որ գրքի ամեն երեսը բաժանուած է երկու սիւնակի, իսկ բոլոր սիւն

նակները թիւն է ընդամենը 570, ահապէս որ երկուսն կամ երկէջեան երեսները թիւն է միայն 235, տասը երես չառաջարանով միասին՝ 245 մեծադիր երես: Եւ այդ 245 թիւը նա չալտարարում է իբր մօտ 600 մեծադիր երեսներ: Կարելի է արդեօք աւելի հեռու դնալ սուտ ակիլամներ տարածելու մէջ?

Մենք ծանրացանք պ. Լեոնեանի գրքի խոշոր պակասութիւնների վրայ, պակասութիւններ, որոնք զրկում են նորան լուրջ հեղինակութեան պատկից: Հեղինակի երեսաւամասութիւնները աւելի ևս աչքի կ'ընկնէին, եթէ քննադատութեան տակ գցէինք նորա զատողութիւնները թերթերի մասին. բայց այդ արդէն շատ հեռու կը տանէր մեզ, առանց շօշափելի օգուտ տարա ոչ յիշել, և ոչ իսկ հեղինակին իրան, որին պակասում է ընդհանուր և լաջն զարգացումը: Վիրքը անշուշտ լինէ է տեղեկութիւններով, բայց անհասկացողութեան աջն քան նմուշներ է տալիս հաւաքագրողը, որ այդ գիրքը օգտակար կարող է լինել ոչ աջն քան ընթերցող հասարակութեան, որքան մի այլ բայց աւելի լուրջ հաւաքագրողին, որը կ'իմանայ հարկաւոր զգուշութիւնները բանեցնել այդ գրքից օգտելու ժամանակ: —

Թող ներքին մեզ ի վերջոյ «Մուրճ» ի վերաբերեալ լօղաձուռ եղած սխալներից գէթ մէկը ձշղել այս տեղուի, հաւատացած լինելով որ մի կողմնակի մարդ հազիւ կարողանայ ամեն զգուշութիւններ բանեցնելով հանդերձ՝ չմոլորուել դորա վերա-

բորմամբ ¹⁾:
Առած է՝ «1892 թւականի սկզբից հրատարակութեան իրաւունքն անցաւ պ. Փ. Վ. ցի ձեռքը»:
Սխալ է. «Մուրճ»-ի հրատարա-

¹⁾ Թէ որքան անհատատ են պ. Լեոնեանի տաճ տեղեկութիւնները նաև աչք կէտերում, թող օրինակ ծառագեն Փորձի մոսիֆն ասածները: Առած է՝ Փորձ միամսեալ հանդէս 1876—1881 թ., մինչդեռ ինքն էլ գիտէ որ առաջ եռամսեալ էր, չետոյ միամսեալ Փորձի դիրքի մասին ասած է՝ «Վիրքը՝ 12—18 տպ. թերթ, 150—200 էջ»: Եթէ «Մուրճ» ընտ Լեոնեանի 6 տպ. թերթ է 196 էջ, այդ ինչպէս է պատահում որ Փորձը իբր թէ 12—18 թերթ էր և միայն 150—200 էջ: Այդ նրանից է որ հաւաքագրողը գլխում ամեն ինչ շփոթ է:

Աւելորդ չենք համարում նաև հ. Գալիմքեարեանին խորհուրդ տալ գէթ իւր երկրորդ հատորի մէջ և կամ առաջին հատորի երկրորդ տպագրութեան ժամանակ հետեւել այս աւելի նպատակադարմար կանոնին, որով, երբ մի թերթի արտաքինը և լոյս տեսնելու ժամանակամիջոցը փոփոխւած են, որպէս նաև երբ հրատարակութիւնը գէթ մի տարով ընդհատուած է—այդ չիշատակել լօղաձուռի ձեռնադրում: Օրինակ գրել՝

Արչալոյս Արարատեան
1840—1886.

երկշաբաթաթերթ 1840—նոյ. 1840,
շաբաթաթերթ 1840 նոյ.—1845, նորից երկշաբաթաթերթ 1845—1886.

Եւ կամ՝
(թերթի անուն)
1845—1880

ամսագիր 1845—47. դադար՝ 1847—48. շաբաթաթերթ 1848—55. երկշաբաթաթերթ 1855—64. օրաթերթ 1864—1880.

կութեան իրաւունքը հիմնադրի ձեռքից երբէք չի անցկացել մի ուրիշի ձեռք, ալ միաջն պաշտանական կերպով հիմնադիրը ունեցել է հրատարակչական մի ընկեր 21 ամիս «հրատարակիչ» տիրոջսով, և այդ ընկերը չունէր թերթի աջն սեփականութեան իրաւունքները, որ վազելում են հրատարակիչ սեփականատէրերը:

Թէև մտադրութիւն չունէինք հաւաքագրողի կարծիքների մասին խօսք անդամ ասել, բայց ի դէպ նկատենք, որ «Մուրճ»-ի կողմից Խրի մեան Հալիկի կաթողիկոսական թեկնածութեան պաշտպանութիւնը հաւաքագրողը համազօր է համարում առհասարակ որ և է տաճկահայ հոգևորականի թեկնածութեան պաշտպանելուն, լինէր ուրեմն այդ հոգևորականը մի Աշըգեան, մի Խապալեան և այլն: Թող այդ էլ լինի չրքի անթիւ կուրիոզներից մէկը!

Ա. Ա.

Յ. Գ. Ներկայ չօղածը արդէն գրած պատրաստ էր, երբ խմբագրութեան մէջ առիթ ունեցանք ծանօթանալու գրքիս հեղինակի հետ: Եւ այդ ծանօթութեամբ պարզեց շատ բան: Բանից դուրս է գալիս որ հեղինակը, որ ալժմ 21 տարեկան է, իւր գիրքը մրցանակաբաշխու-

թեան ուղարկել էր 20 տարին չբացրած, իսկ իւր աշխատութիւնը 4—5 տարեալ արդիւնք լինելով՝ նա այդ գործը սկսել է 15—16 տարեկան հասակում, ստացած չլինելով նոյն իսկ միջնակարգ դպրոցի ուսումն յետէ ի նկատի ունենանք, որ նոյն այդ պատանեկան հասակում պ. Աւուսեանցը հրատարակել է նաև իւր մի աշխատութիւնը հալ աշուղների մասին, ուր նա աշխատել է բոլոր հալ աշուղների լիակատար ցուցակը տալ՝ կենսագրական տեղեկութիւններով հանդերձ, — ալն ժամանակ մնում է մեզ միաջն զարմանալ այդ անձի հաւաքագրական բոլորովին արտասովոր հակման և ոյժի վրայ միևնոյն ժամանակ չենք կարող խորհուրդ չտալ նորան՝ մեծ ուշք դարձնել իւր գրական կրթութեան վրայ և չչտապել հում-եփ գործքերը հրատարակելու, նոցա մշակման վրայ հարկաւոր խնամքը տանելու համար, թերևս օգնութեամբ ձեռնհաս անձերի: Եւ դեռ այդ նոյն երիտասարդը արդէն Նիւթեր է ժողոված 1700-ից դէս եղած նշանաւոր հալ գործիչների կենսագրութիւնների համար, մտադիր լինելով գործը հասցնել մինչ 1900 թւականը՝ երկու դարերի պատմութիւն տալու համար:

Ա. Ա.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ն Ի Ի Թ Ե Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆԴՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անգլիացի, Ֆրանսիացի և Ռուսիացի Կ. Պոլսի դեսպանները արդէն հաւաքական յայտագիր են առաջարկել Սուլթանին՝ Տաճկահայաստանում մոցնելիք բարենորոգումների մասին: Յայտագիրը պաշտօնապէս հրատարակած չէ, որովհետև նա տակաւին չիշեալ պետութիւնների դեսպանների և Բ. Դռան քննութեան առարկայ է և Սուլթանի համաձայնութիւնը դեռ ևս ստացւած չէ: Հաստատու միայն այս է, որ չիշեալ երեք պետութիւնների ներկայացուցիչները Սուլթանին և Բ. Դռան յայտագիր առաջարկելու քայլն արել են: Դէպքը պէտք է որ եղած լինի նոր տոմարով մայիսի 11-ին, շաբաթ օր (մեր հին տոմարով ապրիլի 29-ին): Ար առաջարկը եղած է, այդ պաշտօնապէս հաստատեց Անգլիացի արտաքին գործերի մինիստրի օգնականը, պարլամէնտի նիստում նոր տոմարով 14 մայիսի (հին տոմարով 2-ն մայիսի): Իսկ ինչ վերաբերում է յայտագրի բովանդակութեանը՝ այդ մասին յայտնի են ծրագրի գլխաւոր գծերը, որ հաղորդւած են ոչ պաշտօնական ձևով: Չնայած, սակայն, որ այն, ինչ ծանուցւած է՝ պաշտօնական բնաւորութիւն չի կրում: Բայց այլ և այլ ազբիւրներից ծագած տեղեկութիւնները ընդհանուր առմամբ այնքան համաձայնում են իրար, որ պէտք է հաւատով վերաբերել դէպի հետևեալը, որ հեռագրւած է Պարիզից Դէյլի-ն իւս-ին նոր տոմարով 16-ն մայիսի:

Այդ հեռագրի համաձայն, Մեծ-Բրիտանիացի, Ֆրանսիացի և Ռուսիացի դեսպանների կողմից Սուլթանին առաջադրւած ռեֆորմների վերաբերեալ յայտագիրը պարունակում է մանր գրւած 25 բառաձալ էջ և բաժանւած է երկու մասերի. առաջինը ցոյց է

տալիս այն միջոցները, որ Թիւրքիան պիտի գործ դնէ երկրորդ մասում պահանջուած կազմական օրէնքը հաստատելու համար: Յայտագրի երկրորդ մասը բովանդակում է իւր մէջ այն վարչական, դատական և ելմտական ռեֆորմները, որոնք ցանկալի են երեք պետութիւններին:

Նախապարզ միջոցներից ամենակարևորներն են՝ կարգել մի Բարձրագոյն Յանձնակատար (կոմիսար), ընդհանուր թողութիւն տալ բոլոր քաղաքական կալանաւորներին, վերաքննութիւն մի քանի դատերի, որոնք վերջացել են մեղաւորաձեւների բանտարկութեամբ, դադարեցումն այժմ շարունակող դատերի, արձակումն բարտարկաձեւների և կարգումն Կ. Պոլսում մի Յանձնաժողովի, որին միանալու է Բարձրագոյն Յանձնակատարը՝ ռեֆորմների իրագործմանը վերահսկելու համար:

Վարչական ռեֆորմներն են. Վանի, Էրզրումի, Սըւազի, Բիթլիսի, Խարբերդի և Տրապիզոնի հինգ վիլայէթներում նահանգապետները և փոխ-նահանգապետները պիտի լինեն մահմեդականներ կամ քրիստոնեաներ՝ նայելով թէ որ կրօնի հեռուողները մեծամասնութիւն կը կազմեն: Մահմեդական նահանգապետը պիտի ունենայ քրիստոնեայ փոխ-նահանգապետ և փոխադարձաբար՝ քրիստոնեայ նահանգապետը կ'ունենայ մահմեդական փոխ-նահանգապետ:

Յայտագիրը պահանջում է, որ նահանգապետները կամ վալիները հինգ տարով նշանակուեն և որ նշանակելը պետութիւնների հաճութեամբ լինի:

Ելմտական ռեֆորմները, ըստ յայտագրի, պիտի կայանան հետևեալում: Հարկերը այլ ևս չպիտի հաւաքուեն զինւորների և կամ արքունի զանձարանի պաշտօնեաների ձեռքով: Եւրաքանչիւր գաւառի և վիճակի հատուցանելու հարկի չափը առաջուց պիտի որոշւի նահանգական (սորհրդով) և գաւառապետը պիտի կարգադրէ ժողովել տուրքերը քաղաքային պաշտօնեաների ձեռքով, որոնք պէտք է ստացազիր տան իրանց հաւաքած գումարների մասին: Եւրաքանչիւր ընտրուած պաշտօնատար պատասխանատու է իւր գաւառի կամ համայնքի համար: Հաւաքուած տուրքերը պիտի վճարուեն շրջանի հարկաժողովի զանձարանին, որը պիտի հասցնի գաւառի հարկաժողովին: Վերջինս պարտաւոր է հասցնել բոլոր գանձ-

ւած գումարը նահանգի ընդհանուր հարկաժողովին: Սակայն ամեն մի վարչական մարմին, սկսած թաղերից, պիտի վերապահէ իւր գանձարանի համար այնքան գումար, ինչքան որ անհրաժեշտ կը դառնի տեղական վարչութեան ծախքերը հոգալու համար, աւելորդը արքունի գանձարանին տալու պայմանով: Այնինչ մինչև այժմ նահանգներում հաւաքւած բոլոր հարկերը լիութեամբ գնում էին Կ. Պոլիս:

Դատական մասի համար զեսպանների առաջարկած ռեֆորմները, նոյն աղբիւրի համաձայն, այնքան կարևոր են, որ եթէ դոքա իրագործւեն, զգալի չափերով դատաւորների իշխանութիւնը կ'ընդարձակւի և առաջին կամ նախադատ ատեաններն աւելի կանոնաւոր հիմքերի վրայ կը դրւեն: Բողոքի ատեանի փոխանորդները, նահանգները գնալով՝ վերահսկողութիւն կ'ունենան տեղական դատարանների վրայ և կը վերաքննեն նոցա դատերն ու վճիռները:

Մի յատուկ Յանձնաժողով կը նշանակւի հոգ տանելու, որ ոչ մի օսմանեան հպատակ չբանտարկւի, մինչև որ ձերբակալութեան համար մի օրինական հրամանագիր չորւի նրան, նմանապէս և հրակելու, որ իւրաքանչիւր ամբաստանւող օրէնքով սահմանած ժամանակին քննւի և, արդարացման դէպքում, անյապաղ արձակւի: Յանձնաժողովի պարտքը կը լինի իսպառ ոչնչացնել մարմնական պատիժներն ու տանջանքները, որոնք այժմ այն աստիճան սովորական են: Իւրաքանչիւր շրջանում քրիստոնեայ դատաւորների թիւը համապատասխան կը լինի քրիստոնեաների թւին: Խրաքանչիւր գաւառակում կը լինի մի խառն ժանդարմերի (ոստիկանութիւն) բաղկացած թէ մահմեդականներից և թէ քրիստոնեաներից: Ժանդարմերի մի քանի սպաները քրիստոնեաներից կը նշանակւեն: Քիւրդերը կը մնան Համիդիէ հեծելազօրի մէջ, բայց զէնք կը ստանան միայն զինւորական վարժութիւնների միջոցին, իսկ սովորական ժամանակ նոցա զէնքերը կը պահւին զինանոցներում՝ կանոնաւոր զօրքի հսկողութեան ներքոյ:

Սուլթանի կառավարութիւնը կը պարտաւորւի վերահաստատել այն օրինական կարգերը, որոնք կապ ունին կրօնական գործերի հետ:

Ահա ընդհանուր գծերով երեք պետութիւնների առաջարկածը, որով նոքա մտածել են վերջ տալ ներկայումս հայկական խնդրին:

Ուրեմն ծրագրի մէջ չկայ ինքնավարութեան գաղափարը: Առաջարկածը շատ աւելի պակաս է քան ինչ սպասուում էր արդարացի կերպով: Ուրեմն տաճկահայկական նահանգները, ըստ այդ ծրագրի, դարձեալ մնում են Սուլթանի կառավարութեան անմիջական հեղինակութեան ներքոյ: Միակ կէտը, ուր եւրոպական պետութիւնները մասամբ մասնակցութիւն ունեն՝ նահանգապետների նշանակումն է այս պետութիւնների համաձայնութեամբ: Բայց թէ ինչ ապահովութիւն է տրուում որ նոյն իսկ այդ ռեֆորմները կիրականանան—այդ մասին ծրագրում ոչինչ չկայ: Իսկ մինչև որ վերահսկողութեան գործը ամենամուր հիմքերի վրայ դրւած չի լինիլ—ոչ մի ծրագիր իրականանալ չի կարող ծածկաստանում: Նահանգապետների մահմեդական լինելը ապահովցրած է արդէն իսկ նրանով, որ նոցա որ կրօնի լինելը կախւած պիտի լինի նրանից թէ իւրաքանչիւր նահանգում որ տարրը մեծամասնութիւն է կազմում: Իսկ մենք հաստատ գիտենք, որ ներկայումս ոչ մի նահանգում քրիստոնեաները (որ գրեթէ միայն հայերն են) մեծամասնութիւն չեն կազմում, հետևապէս նահանգապետներն էլ մահմեդական կը լինեն և միայն փոխ-նահանգապետները՝ քրիստոնեայ (այն էլ հայ լինելը պարտաւորեցուցիչ չէ, ուրեմն կարող են դոքա ևս լինել նոյն իսկ հայութեան թշնամի քրիստոնեաներ):

Մենք անկարելի ենք համարում, որ այդ եղած լինէր Անգլիայի սկզբնական դիտաւորութիւնը, թէև չենք կարող չխոստովանել, որ Անգլիան պէտք է պատրաստ լինէր պատերազմ յայտնելու, եթէ նա կամենար ռեֆորմների ծրագիրը ծածկա-Հայաստանի ինքնավարութեան ծրագիր դարձնել: Եթէ ինկատ առնենք այն ամենը, ինչ իսուել և գործել են Անգլիայում հայկական խնդրի համար, ակներև կը լինի որ ռեֆորմների ծրագիրը մշակելիս՝ անգլիական ղեսպանը գտնուել է մեծամեծ ճնշումների ներքոյ իւր ընկերների կողմից, որոնք չեն կամեցել Սուլթանի ինքնակալ իրաւունքները տաճկա-հայկական նահանգներում սղմել յօգուտ հայկական դատի:

Կը մնայ մեզ սպասել աւելի լիուլի տեղեկութիւնների և սլաշ-

տօնական յայտարարութիւնների. մինչ մի ամիս, որպէս պէտք է կարծեւ, խնդիրը պարզաժ կը լինի:

Այս անգամ մենք տպում ենք «Նիւթերի» մէջ նախ այն, ինչ գրում էր պատրաստող ռեֆորմների ծրագրի մասին. և երկրորդ՝ խնդրում նոր տոմարով մայիսի 7-ին կայացած մեծ միտինգի նկարագիրը, որից ընթերցողները կարող են եզրակացնել թէ պետական մինչև որ աստիճանի մեծ կարևորութեան կարողացել է թանձրանալ հայկական խնդիրը Անգլիայում: Այդ միտինգը նոցանից է, որոնք ընդունակ են կառավարութեան վճռողական և համարձակ քայլեր անել տալու: Այս անգամ մենք կը տանք այդ մեծ միտինգի նկարագրի առաջին մասը, մասնաւորապէս այն, որ պարունակում է դուքս Արգայլի ճառը, թողնելով միւսների խօսածները յաջորդ համարին:

ԱԿՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿԻՆԵԼԻՔ ՌԷՖՈՐՄՆԵՐԸ

Ապրիլի 15-ին Վեյլի Նիւս-ի յատուկ թղթակիցը հետևեալն էր գրում Կ. Պոլսից.

Քանազատ մարդիկ տեսնում են, որ Կ. Պոլսի թիւրք պաշտօնեաները այժմ սկսել են լաւ հասկանալ հայ ազգին հասած զրկանքների բնաւորութիւնն և դոցանից յառաջ գալիք հետևանքը: Նոցանից շատերը գուցէ իրօք որ և է ճիշդ գաղափար չունենին անցեալ աշնան դէպքերի մասին: Տեղական թերթերը ոչ միայն անպէտք են, իբրև լրատուներ, այլ և ուղղակի մոլորեցնող, որովհետև պարտաւոր են միայն այն կրկնել, ինչ որ պաշտօնապէս կը թելադրէ վարչութիւնը: Եթէ կամենաք քամել զտել նոցա հաղորած լուրերի իմաստը, արդիւնքն այս կը լինի, թէ մի քանի հայ աւագակներ ազմկել են հանգիստ ու գոհ հպատակներին, և մանաւանդ հայերին, և թէ այդ աւագակներից ոմանք արդէն պատժւած են, միւսներն էլ կը պատժւին, երբ որ Քննիչ Կոմիտիան իւր տեղեկաքիրը ներկայացնէ: Ժողովուրդը վարժւած չէ ստույգ փաստեր պա-

հանջել պաշտօնական թերթերից, և ամեն մի քրիստոնեայ և թիւրք ընթերցող լաւ գիտէ, որ ճշմարտութիւնը հրատարակել արգելւած է: Մինչև վերջին ժամանակը մի որոշ բան չգիտէին պատահած դէպքերի մասին, և միայն եւրոպական մամուլն էր, որ իսկութիւնը հրապարակ հանեց:

Իսկ գիտցողները— Բ. Գուռն արդէն չորս ամիս առաջ տեղեկացած էր եղած դեսպաններից—կարծում էին, թէ բոլոր եզելու-թիւնը կարելի կը լինի ծածուկ պահել: Ոմանք մինչև անգամ բացարձակ ասում էին, թէ Անգլիան մենակ է մնացել իւր համակրութեամբ դէպի հայերը: Այդ թիւրք պաշտօնակատարների ամենամեծ ջանքն էր՝ արգելել թղթակիցներին Հայաստան մտնել: Եւ երբ բաւական ժամանակ յաջողութիւն գտան այդ գործում, արդէն սկսան հաւատալ, թէ Եւրոպան մի պաշտօնական տեղեկագրից զատ՝ էլ ոչինչ չի ունենալ, և ամեն բան դրանով կը վերջանայ: Եթէ թղթակիցներն իրօք հեռու մնային Հայաստանից,— թիւրքաց նախարարներն արդէն պարծենում էին, թէ ոչ մի թղթակից չի կարողանալ ներս մտնել,—այն ժամանակ գլխաւոր գեկուցագիրը Կոմմիսիայինը կը լինէր, մինչդեռ այսօր դժւար թէ մի մարդ գտնուի, որ մի առանձին արժէք տար դրան:

Այժմ ամեն բան փոխւած է: Ծշմարտութիւնն իւր բոլոր անեղ սարսափներով մերկացւած է և նոյնքան յայտնի է արեւմտան Եւրոպային, որքան և նոյն իսկ տաճիկ նախարարներին: Ուստի նոքա այս վերջին երեք չորս շաբաթւայ ընթացքում աւելի տագնապած են, մտածելով թէ ի՞նչ կը լինի հայկական նախճիրների հետեւանքը, քան թէ երբեւիցէ: Այսպիսի տագնապ տարիներից ի վեր չէին զգացել նոքա: Եւ այդ զգացմունքը սաստկացաւ, երբ նոքա տեսան Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համերաշխ գործակցութիւնն և այն բացարձակ համակրութիւնը, որ ընծայւում է նոցա միւս եւրոպական դեսպանների կողմից:

Ստոյգ կարելի է ասել, թէ Կ. Պոլսի հետ ամեն մի հաղորդակցութիւն դժւարացնող արգելքները, արգելում էին նաև պետութիւններին որ և է ազդու քայլ անել, որովհետև նոքա արժանահաւատ տեղեկութիւններ չունէին: Առերբը միայն կաթիլներով էին հասնում դեսպաններին, և շատ կասկածելի է, թէ արդեօք,

բացի երկուսից, զէթ մէկը ստացել էր իւր յատուկ պաշտօնական աղբիւրներից որ և է զեկուցումն, որ հաւասար լինէր Լոնդոնում հրատարակած Փակտերին: Այս պատճառով մինչև մարտի ոկիզբը մի տեսակ կասկածոտութիւն և գաղջութիւն էր տիրում դիւանագիտական շրջաններում:

Այդ բոլորը փոխեց:

Այժմ անգլիական դեսպանատան պէս՝ միւսներն էլ ձեռնհաս են հաստատելու, թէ իրանց ստացած զեկուցումները ևս անցեալ աշնան Հայաստանում տեղի գտած դէպքերի մասին կատարեալ են, և թէ ուրեմն իրանց բռնելու ընթացքի համար կարօտ չեն Յանձնաժողովի զեկուցագրին:

Կարծեմ կարելի է հաստատ ասել, թէ ոչ մի ժամանակ վերջին քսան տարւայ ընթացքում չի տեսնուել Կ. Պոլսում մի աւելի սրտագին միաբանութիւն բոլոր եւրոպական պետութիւնների դեսպանների միջև, քան թէ այժմ: Սրւած կամ անելիք քայլերի նկատմամբ նոցանից ոչ մէկը առիթ չի աւել կնթագրելու, թէ համերաշխ չէ միւսների հետ, և դորա հետևանքն այն եղաւ, որ եւրոպայի հասարակաց կարծիքը հայկական նախճիրների մասին առանց անցն հանգամանքների ցոլացաւ, որոնք սովորաբար դրդում էին Թիւրքիային հաւատալու, թէ այս ինչ պետութիւնը միայն իւր մասնաւոր շահի համար է միջամտում, և թէ ուրեմն նա կարող է մի օւրիշ պետութեան վրայ յենւիլ՝ առաջնի պահանջը մերժելու համար:

Արդէն ամենքին յայտնի է, որ միւսներից աւելի շահակից երեք պետութիւններն արդէն մշակել են ռեֆորմների մի ծրագիր, որ առաջարկելու են Վեհափառ Սուլթանին: Դորանով նա կ'ազատուի մի առանձին յանձնաժողով կազմելու հարկից, որ իւր ծրագիրը պիտի առաջարկէր պետութիւններին: Արդեօք դեսպանների ծրագիրն իբրև մի ամբողջ բան և կամ իբրև մի ուրւագիծ կ'առաջարկւի, որի հիման վրայ Բ. Դուռը կարողանար իւր ունեցած ռեֆորմի հիմնադիծը ներկայացնել դեսպաններին, — ներկայումս դա մի աննշան խնդիր է: Ռեֆորմի ծրագրի մանրամասունքը դեռ մի առ մի չեն որոշւած, սակայն ընդհանուր գծերն արդէն քաշւած են:

Նախ՝ բոլորն էլ համոզւած են, թէ անյապաղ պէտք է կազ-

մել մի խառն ժանդարմըրի ¹⁾: Հայաստանի առաջին կարիքը կեանքի և գոյքի ապահովութիւնն է: Երևի թէ կը պահանջւի, որ լինի մի տեղական ժանդարմըրի, կազմած այն քաղաքի կամ գաւառի քրիստոնեաներից և մահմեդականներից, ուր որ նա կայան կ'ունենայ, և մի մեծ՝ աւելի ընդարձակ նահանգի կամ շրջանի մէջ գործելու համար: Անհրաժեշտ կարևոր է, որ այդ մարմինները մի քանի եւրոպական սպաների առաջնորդութեան տակ դրւին: Պետութիւնները կը պահանջեն, որ ժանդարմըրին ամենևին գործ չունենայ հարկահանութեան պաշտօնի հետ: Հայաստանից հասած թղթերը պարզ ցոյց են տալիս, թէ զրկանքների մեծ մասը յառաջ է եկել հարկերի անիրաւ պահանջքից, և հարկաւ ցանկալի է, որ նոր գունդը կեանք և գոյք պաշտպանողի բարի համբաւ ստանայ և ըստ կարելուցն հեռու կենայ հարկ հաւաքելու հին եղանակից: Տեղական վարչութիւնները պահանջում են, որ որքան կարելի է շատ քրիստոնեաներ մասնակից լինին վարչական գործին, և դժար չի լինիլ մշակել մի այնպիսի կարգ, որի զօրութեամբ հայերը շատ անդամներ ունենային այն նահանգների վարչութեան մէջ, ուր որ հայ ժողովուրդը բազմաթիւ է:

Թրէնքի գործադրութիւնը Քիւրքիայում անչափ վատ է: Ամեն մի տաճկաբնակ կարող է հարիւրաւոր դէպքեր պատմել, թէ ինչպէս մարդիկ ամիսներով մնում են բանտում՝ առանց մի օրինական ամբաստանութիւն լսելու, առանց դատական քննութեան ենթարկւելու և նոյն իսկ գիտենալու, թէ ինչու են բանտարկւած: Անձնական ռիսն ու չարութիւնը բաւական է, որ այդ պատճառով մարդիկ բանտարկւին: Անգութ և կամ երկչոտ նահանգապետը շտապում է բանտը լքցնել, որպէս զի դրանով կարգ պահպանէ: Այստեղ դեռ նոր պատահեց մի տիպիքական անցք, որի մասին զեկուցումն էր տրւած դեսպաններին: Մի հայաբնակ գիւղի մօտ մի սպանւած թիւրք է գտնուում: Մերձակայ քաղաքի նահանգապետն անմիջապէս հրաման է տալիս բանտարկել գիւղի բոլոր արու բնակիչներին՝ տասնուվեց տարեկան հասակից վեր, և հրամանն իսկոյն կատարուում է: Եւ ի հարկէ հայերն են բանտարկուում: Իւրաքանչիւր

¹⁾ Զիւար և ոչ ձիւար ոստիկանութիւն (պոլիցիա):

հիւպոտոսական տեղեկագրի մէջ շատ այդպիսի դէպքեր կը գտնէք: Հետեւաբար անհրաժեշտ է ապահովել օրէնքի արդար կիրառութիւնը: Լորդ Սալիսբըրին արտաքին գործոց նախարար եղած ժամանակ առաջարկեց, իբրև դարման, տեսուչներ կարգել դատարանների կողմից: Գուցէ աւելի լաւ կը լինէր բաւարար թոշակով վարձատրւած դատարներ կարգել քրէական ատենաներում: Պետութիւններն անշուշտ այս երկու միջոցներից մէկը կամ միւսը կ'առաջարկեն:

Ամենադժար խնդիրը դեսպանների համար նահանգապետներ նշանակելու և կամ նրանց վերահսկողութեան եղանակը որոշելն է: Արդեօք ինչ կերպով հարկ կը լինի սահմանել այդ վերահսկողութիւնը: Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածի վերջին մասը Բ. Դուան մոցնելիք ռէֆորմների վրայ հսկողութիւն անելու պէտքը չիշատակել է, սակայն չի որոշել յատկապէս, թէ ինչ կերպով պիտի կազմուած լինի այդ բանը. մինչդեռ առանց վերահսկողութեան ոչ մի ռէֆորմ արժէք չունի, և չկայ ոչ մի դեսպան, որ այդ հանգամանքը լաւ չիմանար: 1880 թ. հրատարակւած Կանդոյտ գիրքը յառաջ է բերում մի լաւ մշակւած ծրագիր Վակեդոնիայի վարչութեան համար, որ պատրաստել էին Բերլինի դաշնագրութեան 23-դ յօդուածի տրամադրութեան համեմատ բոլոր մեծ պետութեանց գործակալների համագումար ժողովում: Անգլիայի ներկայացուցիչ լորդ Էյմունդ Ֆրիմորիսի նախագահութեամբ: Թիւրքիայի ներկայացուցիչ Ասէմ փաշան էլ լիովին ընդունեց ծրագիրը: Սակայն դրա գործադրութեան ապահովելու միջոցների մասին ոչ մի հոգ չէր տարւած, և ամբողջ ծրագիրը մի մեռած տառ մնաց, այնպէս որ նրա գոյութիւնն անգամ մոռացան: Այս օրինակը ցոյց է տալիս, որ ոչ մի ռէֆորմ չի կարող իր և է արժէք ունենալ, մինչև որ նրա գործադրութեան միջոցները պարզ չորոշին: Թիւրքիայի օրէնքները բաւական լաւ են, բայց վարչութիւնն իսպառ ապականւած է և կաշառակեր: Թիւրքիան ունի մինչև անգամ կանոնագրեր հայ քրիստոնեաների մասնակցութեան մասին վարչութեան գործերի մէջ, որոնք եթէ գործադրւած լինէին, հարկաւ վերջին տասնամեակի շատ և շատ զեղծումների ատաջ կ'առնէին և իրաւացի զանգառների տեղիք չէին տալ հայերին: Նրանք Սուլթանից զոհ հպատակներ կը մնային: Բայց կանոնագրերը գործադրութիւն չգտան, և

ամենևին հիմք չկայ յուսալու, որ ապագայի փորձն անցեալից տարբեր կը լինի այս բանում: Որքան էլ լաւ մշակեա՞ծ լինի պետութիւնների կողմից առաջարկելիք ռէֆորմների ծրագիրը, սակայն եթէ դրա ճիշդ կիրառութեան համար ազդու միջոցներ չորոշին և դորձը Եւրոպայի վերահսկողութեան ներքոյ չդրւի,—այդ ծրագիրը մի անօգուտ բան կը մնայ:

Ուստի կարելի է հաւաստի համարել, թէ բոլոր պետութիւններն էլ ձանաչում են վերահսկողութեան անհրաժեշտութիւնը: Բայց թէ ինչպէս պիտի սահմանւի այդ վերահսկումը—ահա այդ է դժւար կէտը: Խնդիրն արդէն քննուած է, բայց թէ արդեօք դեպքանները մի վերահսկողութեան եղանակ որոշելու և միաբան ընդունելուց յետոյ՝ կառաջարկե՞ն Բ. Դուան, որ գործադրէ,—այդ դեռ չգիտեմ: Ետանալ միայն հիւպատոսների վերահսկողութեամբ չի կարելի: Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդեա՞ծի իմաստը բնաւ այդ չէ: Էական ռէֆորմները պէտք է սկսել՝ նահանգապետներ նշանակելով նահանգների վրայ: Թող պետութիւնները պահանջեն, որ իւրաքանչիւր նահանգապետ իրանց հաւանութեամբ նշանակւի, ինչպէս որ նշանակում է Լիբանանի նահանգապետը: Այդ կարգը լաւ հետեւանք ունեցաւ Լիբանանում, և հարկաւ Հայաստանումն էլ կ'ունենայ: Ոսկայն Բ. Դուան անշուշտ ընդիմութիւն ցոյց կը տայ, առարկելով, թէ ինչ որ հեշտ էր իրագործել Լիբանանում, դժւար կը լինի գլուխ բերել չորս և կամ թէ հինգ վիլայէթներում: Ասում են, թէ մի կայսերական յանձնակատար (կոմիտար) կը կարգւի բոլոր վիլայէթների մէջ ռէֆորմների իրագործման վերահսկելու պաշտօնով, և թէ Սուլթանը կը կարգէ նրան մի որոշ ժամանակով և պետութեանց հաւանութեամբ: Չգիտեմ, թէ որքան այդ միտքը հաճելի կը լինի այստեղի երեք դեպքաններին, բայց և այնպէս դա լուրջ քննութեան արժանի հարց է: Մի գերագոյն յանձնակատար նշանակելը, որ պարտաւոր լինէր պաշտպանել ընդհանրապէս կեանքն ու գոյքը, և մանաւանդ հայերինը, շատ օգտակար կը լինէր: Նա մերձաւոր յարաբերութիւն կ'ունենար վարչութեան հետ և կ'արգելէր կենարոնական կառավարութեան անգիտակ լինել և կամ թէ առ երես անտեղեակ այն ամեն բաներին, ինչ որ կատարուած է Հայաստանում: Նա յարաբերութիւն կ'ունենար և դեպքանների հետ:

Բայց որ ամենագլխաւորն է՝ նա հէնց իւր օգտի համար կ'աշխատէր՝ պետութեանց, իւր իսկ կառավարութեան և հայերի առջև բարի՝ համբաւ վաստակել։ Նա կը լինէր Հայաստանի համար մի մշտական մինիստր՝ պատասխանատու և հաշւատու Սուլթանին, ում վեհապետի հպատակներն և կամ թէ պետութիւնները կարող էին բողոքել, եթէ նա անփոյթ գտնէր իւր պարտքի կատարման մասին։

Իմ նախորդ նամակներից մէկում գրել էի, թէ Սուլթանն անձամբ անտեղեակ է Հայաստանի հանգամանքներին։ Թիւրքիայի վարչական դրութիւնն այն ստտիճան քաջքայուն է և կազմալուծ, որ տեղական պաշտօնատարներն ընդհանրապէս օրէնքին ներհակ և նոյն իսկ Բ. Գուան հրամաններին հակառակ են ընթանում։ Հերիք է յիշել, օրինակի համար, Ս. Գրքի և կամ ուրիշ վաւերական զբրքերի վաճառման արգելումը նահանգներում։ Օրէնքը թոյլ է տալիս, որ կրօնական գրքերն ազատ շրջին, իւրաքանչիւր թոյլատրած գրքի վրայ պաշտօնական կնիք է դրում, բայց և այնպէս գաւառական իշխանաւորը սառն-սառն ասում է, թէ թոյլ չի տալ այդ գրքերի վաճառումն ու տարածումը, և բոլոր օրէնքն ու կարգերը կամայօրէն է ոտնակոխ անում։ Հայ գրքերի վրայ ծանրացող արգելքը, նոյն իսկ այլակրօն վկաների ասութեամբ, այն աստիճան խիստ է, որ դաստիարակութեան գործը չառաջ տանելու ոչ մի հնար չէ մնացել, որովհետև ժողովուրդը վախենում է տանը գիրք պահել։ Ասելիքս այն է, որ իրերի այդ վատ վիճակն օրէնքի վատութիւնից չէ ծագում, այլ վարչութեան վատութիւնից, նահանգներում պատահող զեղծումների անչաչտ մնալուց և նահանգապետների կատարեալ անհոգութիւնից այն մասին, թէ ի՞նչ կ'ասեն մայրաքաղաքում։ Եթէ մի յանձնակատար նշանակւի, որի պաշտօնը լինի վերահսկել հայոց գործերին, Բ. Գուաը կ'իմանայ, թէ որպիսի շարիք են կատարում, և իսկոյն դարման կը գտնէ։ Ուստի եթէ պետութիւնները զանազան վիլայէթների միացման վրայ չսխալեն և կամ թէ գոյութիւն ունեցող վիլայէթների մէջ նահանգապետներ նշանակելու գործում վէտօի իրաւունք չվերապահեն,—գոնէ հարկ կը լինի լաւ կշռել յանձնակատարի պաշտօնը և ճիշդ որոշել դրա իրաւանց ու պարտուց սահմանը։

Կայ մի ուրիշ ռեֆորմ, որ արժանի է ուշադրութեան առնե-

լու, և անշուշտ կ'առնուի: Անուրանալի հարկը պահանջում է, որ հայոց երեք եկեղեցիները—մինը Հայաստանեայց եկեղեցին ազգի մեծամասնութեամբ, միւսը հայ կաթողիքականը և երրորդը՝ հայ բողոքականը, —հրաւիրւին վերահսկելու ունեւորների գործադրութեան վրայ: Տաճկաստանի գործերին անտեղեակ մարդուն պէտք եմ համարում լուսաբանել այս խնդիրը: Առաջին երկու եկեղեցիները Կ. Պոլիս նստած պատրիարքների ենթակայ են: Բողոքականներն ևս մի եկեղեցական պետ կամ վէճիլ ունին, որ նմանապէս Կ. Պոլսումն է: Թիւրքն արգելում է քրիստոնեաներին միջամտել Իսլամ հպատակների արտօնութեանց և օրէնքի մէջ, սակայն թոյլ է տալիս եկեղեցական մարմիններին տնօրինել իրանց մասնաւոր կրօնական գործերն և առհասարակ քրիստոնէի վերաբերեալ կարգերը: Ամուսնութեան, դրա վաւերացման կամ լուծման, կտակների և ժառանգութեանց խնդիրները որոշում են իւրաքանչիւր եկեղեցու իշխանութեան ձեռքով՝ իւր յատուկ օրէնքի համաձայն: Կրահետեանքն այն եղաւ, որ ամեն մի եկեղեցի մի կատարեալ կազմակերպութիւն ստացաւ: Անցեալ ժամանակի պատրիարքները իրօք էին, ինչպէս որ այժմեանները ի տեսականին են, իշխանաւոր անձինք, որոնք իրաւունք ունեին բողոք յայտնելու կառավարութեան իրանց համայնքի անդամներին հասած ամեն մի զրկանքի մասին: Այս վերջին տասնուվեց տարեաց ընթացքում մի յամառ ու յարատեւ ձգտումն կար ճնշելու նրանց և զրկելու ամեն իրաւունքներից: Սրբազան Աշրգեան պատրիարքի կենաց պէս եղած սպանութեան փորձի պատճառը, ասածներին նայելով, այն էր, որ նա ի դերեւ էր հանել իրեն ընծալած հաւատարմութիւնն և դաւաճան հանդիսացել ազգային իրաւանց: Այժմ իւրաքանչիւր հայ խոտոտվանում է, թէ ունի ջանձին ներկայ պատրիարքի մի այնպիսի մարդ, որ փախուստ չի տալ իւր ազգի իրաւունքները պաշտպանելուց: Նա ակնածութեամբ ներկայացրեց Սուլթանին իւր գանդառները, խորապէս նամոզլած լինելով, թէ հայ ազգի ցաւերը յայտնելիս՝ նա իւր սրբազան պարտքն էր կատարում:

Նա անդադար հաղորդակցութիւն ունի իւր եպիսկոպոսների ու վարդապետների հետ ամբողջ Թիւրքիայում, և նրանք ամեն բանի համար, որին կարելի է Կ. Պոլսից դարձան հասցնել, զեկու-

ցումներ են տալիս նրան, իբրև իրանց հոգևոր պետին: Չնայելով թիւրքերի ամեն տեսակ ջան ու ճիգին տապալելու ճակոց Սահմանադրութիւնն հոչւած հաստատութիւնը, — և զաւառական եպիսկոպոսների, վարդապետների ու քահանաների բանտարկութեամբ շարուցւած ահ ու սորսափին և նամակների բռնւելուն, — այդ հաստատութիւնը դեռ կանգուն է և մի պատւական միջոց է, որով կարելի է իմաց տալ Բ. Ղոան, թէ ինչ են յատկապէս հայ ազգի կրած աղէտները: Եթէ այդ հաստատութիւնը կործանելու ձգտումներ եղած չլինէին այս վերջին տարիներում, այն ժամանակ Վզգային ժողովը իւր պատրիարքով հանդերձ անտարակոյս կը զգացնէին Բ. Ղոան հայ ազգի տառապեալ վիճակն և թոյլ չէին տալ, որ իրերի ընթացքն անցեալ օգոստոսի և սեպտեմբերի դէպքերին յանգէր:

Այս պատճառով շատ ցանկալի է, որ Հայաստանեայց եկեղեցու արդի անւանական իրաւունքները պետութեանց հովանաւորութեան տակ դրւին և ըստ կարելոյն վերահաստատւին: Եկեղեցու պաշտօնեաները մի անգամ իրանց հանդիսաբար վաւերացւած իրաւունքներն իրօք վերստանալուց յետոյ՝ ձեռնհաս կը լինին անշուշտ միշտ յայտնել կառավարութեան և կամ թէ կաշտերական յանձնակատարին հայ ազգի ցաւերն և դարման պահանջել դոցա համար: Այդպիսով հայերի համար մի օգտաւէտ գործ արւած կը լինի: Նոքա հնար կ'ունենան կոչումն անել իրանց հոգևոր իշխաններին, որոնց լիովին հաւատում են, և նոցա միջնորդութեամբ կառավարութեան կամ թէ յանձնակատարի վերջնական որոշումն ստանալ իրանց վերաբերեալ խնդիրներում: Միւս կողմից՝ թիւրքերի օգուտն այն կը լինի, որ նոքա գործ կ'ունենան մի գոհ ու ջանասէր ազգի հետ, որ ուրիշ բան չէ ուզում, բայց միայն պաշտպանւած լինել իւր զբաղմանց մէջ և հաւատարիմ մնալ սուլթանին:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄՏՅՆԻՆԼԻՔ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ

(Նամակ 'Կէլլի Նիւսի հրատարակին)։

Սեօր—Արդէն հասել ենք այն կէտին, երբ երեք շահակից պետութիւնները կարող են յայտնել Սուլթանին իրանց որոշումը Փոքր-Ասիայում մտցնելիք սեփորմների մասին։ Հաւանական է, որ նրանց առաջարկելու սեփորմները հետեւեալ ուրաղիծը կ'ունենան։ 1) Բաժանել Հայաստանը մի քանի վիլայէթների՝ իւրաքանչիւրը ջոկ վալիով և նահանգապետով։ 2) Իւրաքանչիւր վալին լինի մի արժանաւոր և ձեռնհաս անձն և նորան ստորագրեալ պաշտօնեանների մի երրորդ մասը լինին քրիստոնեաներից։ 3) Նշանակւի մի գերագոյն յանձնակատար՝ (կոմիսար) հանդերձ իշխանութեամբ վալիների վրայ, և թէ կարելի է՝ մի կոմիսիա 4. Պոլսում, բաղկացած չորս մուսուլմաններից և չորս քրիստոնեաներից, որ օգնէր ներքին զործոց նախարարին վիլայէթների վարչութեան վրայ։ 4) Մի խառն ժանդարմի՝ կազմւած քրիստոնեաներից և մուսուլմաններից։ 5) Մի մշտական կոմիսիա՝ տեսութիւն ունենալու բանտերի վրայ և հսկելու, որ ոչ մի կալանաւոր զուր տեղը չպահւի բանտերում։ 6) Մտցնել դատական սեփորմներ։ 7) Վարձատրել Սասունցոց իրանց նիւթական կորուստների համար (ո՛հ, ո՛վ կարող է փոխարինել նրանց սիրելիների կորուստը)։ Ձեմ ուզում ասել, թէ այս կէտերից մէկը կամ միւսը կարելի չլինէր բաց թողնել և կամ վերաքննել, սակայն հաւատացած եմ, որ վերոյիշեալ պայմանները իրօք ներկայացնում են պետութեանց կողմից առաջարկելիք սեփորմների էական դժերը, որոնք եթէ իրագործին, մեծապէս օգուած կը լինին ոչ միայն հայերը, հապա և մահմեդական ազգաբնակչութիւնը։

Սակայն անհրաժեշտ է ի նկատի ունենալ հետեւեալ բարեփոխումները. ա) որ գերագոյն յանձնակատարը լինի մի եւրոպացի (թերևս ամենից չարմար մի աւստրիացի) և նշանակւի մեծ պետութիւնների կողմից ազատ սուլթանի կամ Բ. Գուան գերահպոգութիւնից։ բ) Ար բոլոր նորա ստորագրեալները լինին պատասխանատու նորան, այլ ոչ թէ սուլթանին կամ Բ. Գուան։ գ) Ար ժանդարմին լինի իրօք այնքան զօրեղ, որ կարողանայ պաշտպանել

հայերին քիւրդերի գէմս դ) Որ քիւրդերը զինաթափ արւին (սա անհրաժեշտ պայման է՝ sine qua non, եթէ կամենում ենք, որ Հայաստանի խաղաղութիւնը հաստատուն լինի): Սակայն գլխաւոր պահանջելի կէտն այս է, որ մշտական վերահսկողութիւնը մեծ պետութիւններին վերապահւի: Եթէ այդ բանը չանւի, ես վախենում եմ, որ լոկ Տրազիր առաջարկելը և նոյն իսկ Թիւրքիայի կողմից ընդունւիլը ոչ մի արժէք չի ունենար: Թիւրքիան, ինչպէս որ պատուութիւնը ցոյց է տւել, սրբան և ինչպիսի խոստումներ ասես՝ կը տայ, սակայն երբէք չի կատարիլ, մինչև որ նրան չստիպեն: Վերոյիշեալ կէտերից շատերը յիշւած են թիւրքական օրէնքի մէջ, սակայն անիրագործելի են ֆնացել և անպէտք տաճկաբնակ քրիստոնեաների համար: Եթէ սուլթանը չյօժարւի գերագոյն յանձնակատար ճանաչել. եթէ մեծ պետութիւնները (կամ Մեծ-Բրիտանիան) չուզենան վերահսկել այս կամ սոցանման ուէֆորմների իրագործման վրայ, այն ժամանակ Հայաստանի վերջին վիճակն առաջինից էլ վատ կը լինի, և Անգլիան, որ առանձնապէս պատասխանատու է հայերի՝ Բերլինի դաշնագրից ի վեր քաշած ազէտների համար, ամբողջ աշխարհի ատելութեան և հայոց ազգի նզովքին արժանի կը լինի: Յուսով եմ, որ մեր ներկայ կառավարութիւնը չեա չի կանգնիլ իւր պարտքից, քաջ գիտենալով, որ այս հայկական խնդրում ամբողջ անգլիական ազգը նորա կողմն է՝ առանց կուսակցութիւնների և կրօնների խտրութեան:

Ձեր և այլն:

Չարլզ Շուէնն

ՍԷՆՏ ՋԵՅՄՍ ՀԱԼԻ ՄԵԾ ՄԻՏԻՆԳԸ ¹⁾

Միտինգին անձամբ մասնակցողներից կարեւորագոյնները

Մայիսի 7-ին երեկոյեան Սէնտ Ջէյմս Հալում հայ քրիստոնեաների հալածանքի գէմ բողոքելու համար կայացած ազգային մեծ միտինգի

¹⁾ Այս մեծ և հայկական խնդրի համար ամենանշանաւոր ու պատմական միտինգը, որ երկար ժամանակ առաջ ծանուցւած էր, տեղի ունեցաւ մայիսի 7-ին (նոր տոմար) երեքշաբթի գիշեր, Սէնտ-Ջէյմս Հալ կոչւած սրահում, որը լանդոնի ամենամեծ սրահներից մէկն է. և սակայն,

նախագահն էր Արգալլի դուքսը ¹⁾։ Ներկայ էին ի միջի այլոց Ուէստմինստրի դուքսը ²⁾, լորդ և լէդի Ռիբլէսդալ, Եօրկի արքեպիսկոպոսը, Հերֆորդի եպիսկոպոսը, սեօր Ռոբերտ Պիլ, Հերֆորդի աւագ երէցը, Շոտլանդիացի կառավարիչը, Լիււրդուլի լորդ Մայորը, Պարլ. անդ. միստր Փ. Սաէւընսըն, արժանապ. զոկտոր Ալիֆորդ, Սէնտ Ագաֆի եպիսկոպոսը, լէդի Հէնրի Սոմբսէտ, գերապ. Կանոն Մակ Կոլ, սեօր Ջոն Ռոբինզոն, Էդինբուրգի ներկայացուցիչ աւագ լորդը, գերապ. Կանոն Ուիլբերֆորս, սեօր Ջոն Կէնէուէյ, Պարլ. անդ. սեօր Ջէմս Ջոյսի, Պարլ. անդամ միստր Հերբերտ Պոլ, Պարլ. անդ. սեօր Ջորջ Սիտուէլ, պրոֆեսսոր Ջորջ Ազամ Սմիթ, պրոֆես. Ազար Բիտ, լորդ Ստէնմոր, Գրահամստրնի և Սինգապուրի եպիսկոպոսը. Պարլ. անդ. Ծովակալ Ֆիլդ, Պարլ. անդ.

նա չկարողացաւ պարունակել իւր մէջ բոլոր ցանկացողներին, այնքան մեծ էր բազմութիւնը։ Ժողովը բացւեց երեկոյեան 7 ժամ 30 րոպէին։ Նախագահի սեղանի ծածկոցը նւիրած էր Լոնդոնի հազ տիկիւնների կողմից և կրում էր ոսկեթելերով ասեղնադորժած Ա (աշխինքն Արմենիա) տաւը և մի արքայական թագ։ Ժողովականների մէջն էին նաև երեք սասունցիներ՝ մի կին և երկու տղամարդ, որոնք իրանց ուղեկից պ. Բազրատ Ս. Ասլանի հետ՝ արդէն զանապաւն քաղաքներում իրանց ճանաչել են տւած։ Միտինգի նկարագիրը վերցրած ենք Գէլլի Նիւս-ից 8 մալիսի։ Ծան. Ա. Ա.

¹⁾ Արգալլ դքսական տիտղոսն է շոտլանդական կամ պէլ գերդաստանի։ Այս մէկը, Ջորջ Ջոն Գուզլաս Կամպրէլ, դուքս Արգալլի ծնւած է 30 ապրիլի 1823 թ. ուրեմն ալժմ 72 տարեկան է. նա բրիտանական պետական անձն է. եղած է անդամ Արերդինի (1852-ին) և Պալմերստոնի (1855 և 1859) մինիստրութիւնների. 1868—74-իս պետական քարտուղար (մինիստր) էր Հնդկաստանի համար, 1880-ին պետական մեծ կնիքի պահապանն էր, 1881-ին չեռ քաշւեց իրլանդական հողալին օրէնքի պատճառով. լալանի է նաև որպէս գրող և նպաստող գիտութեան Նորա անգլանիկ որդին, Ջոն Ջորջ Էդուարդ Հենրի Գուզլաս Սութերլանդ, մարքիզ Լորնի, ծնւած 1815-ին, ամուսնացած է 1871-ին Լուիզալի հետ (ծնւած 1848-ին), որ դուստրն է Անգլիայի Վիկտորիա թագուհու. եղած է 1878—93 թթ-ին ընդհանուր կառավարիչ Կանադայի։ Ծան. Ա. Ա.

²⁾ Ուէստմինստրի դուքսը ճանաչւած է որպէս Անգլիայի ամենամեծ հարուստը. ներկայ միտինգի համար եղած ծախքը նա իւր վրայ էր վերցրել։

միտր Չաննինդ, Պարլ. անդ. միտր Արչ, Պարլ. անդ. միտր
 Էնտուօրթ, զոկտոր Մարտինօ, Պարլ. անդ. Չոն Լէնգ, լէպի
 Ֆրիդերիկ Կաւէնդիշ, Ճայրագոյն վարդապետ Պարոնեան, Կանոն
 Սկոտ Հոլլանդ, Էլիէ աւագ Երէցը, գերապ. Ու. Կոկչոտ, գերապ. Չ.
 Ուիլիամս, գերապ. զոկտոր Նիւհամ Հոլ, Ձետարի Մայօրը և այլք:

Նամակներով մասնակցողներ

Անգլիացի ամեն կողմերից միտինգի նպատակին ջերմ համակ-
 րութիւն չաչտնող նամակներ էին ստացւած, և դոցա հեղինակ-
 ներն են Եօրկի, Արժագի, Դուբլինի և Կէշելի արքեպիսկոպոսները,
 Պորտլանդի դուքսը, մարքիզ Օրմոնդ, լորդ Ուինշիլչին, լորդ Գոս-
 Փորդ, լորդ Պոլուօրթ, լորդ Օւերտուն, վիկոնտ Հալիֆաքս,
 եպիսկոպոսներ՝ Չիչեստրի Բիպոնի, Ուէկֆիլչի, Ձետարի, Բոչեստրի,
 Տրուրօի, Սոդորի և Մէնի, Կերբիի, Դոււրի, Լէյչեստրի, Դոունի,
 Կոննորի և Դրոմմորի, Դէրրի և Բաֆօի, Քիլդարի և Լէյլինի,
 Կիլալօի, Կիլքենորի, Կլոնֆերաի և Կիլամագուուայի, Գրէսգոյի
 և Գալլուէի, Արերդինի և Օրկնէյի, Արգայլի և կղզիների, Սին-
 գապուրի և Սարաուակի, Անտիգուուայի, Հորնպի եպիսկոպոսը, Բրոմ-
 բի եպիսկոպոսը, Աբերդինի համալսարանի պրինսիպալ Դոնալդսընը,
 Շոտլանդլայի ազատ եկեղեցու կառավարիչը, Անգլիացի պրեսբի-
 թերեան եկեղեցու կառավարիչը, Բայտիստների միութեան նախա-
 գահը, Էդինբուրգի համալսարանի նախագահը, Մէլլաչն Կոլլէջի
 նախագահը—Օքսֆորդ, Դոունինգ Կոլլէջի տեսուչը—Կէմբրիջ, գե-
 ներալ Բուսը, լորդ Նորթբուրն, Պարլ. անդ. լորդ Ստէնլի, լորդ
 Քէյնհամ, լորդ Բրասէյ, լորդ Կորիջ, լորդ Էդմունդ Ֆիցմորիս,
 Մանչեստրի լորդ Մայօրը, մայրներ (քաղաքապետներ)՝ Աբե-
 րափոնի, Աբինդգոնի, Բերնալէյի, Բիուզլէյի, Բրիջուատերի,
 Բրայհաուզի, Բիւրի սէնտ Էդմունդսի, Կալնի, Կարդիֆի, Կարնար-
 վոնի, Ձետարի, Քրիստոգուրչի, Կոչեստրի, Կովենտրիի, Դրիուի, Դիլի
 Դէվրնպորտի, Դրոյտուիչի, Էկլէսի, Փաւերչէմի, Գրիտ Եարմոթի,
 Դլալընբերիի, Գրիտ Տորինգուրնի, Հաւերֆորպի, Հէնլէյոն Թեմզի,
 Հայ Ուիլիամի, Հայգամ Գերբսի, Իլկեստընի, Լենկտընի, Լաու-
 սեստընի, Լինկոլնի, Լիմինգուրնի, Մայոստընի Մալմեսբերիի, Մալ-
 բուրուի, Միդլսքրուի, Նիւկէստլ-օն-Թինի, Նորթ Համպտընի,

Օսէտտի, Օքսֆորդի, Պուլթֆրակտի, Րէյգէտի, Րոզդէլի, Րոմանէյի, Րիպոնի, Սալֆորդի, Շէֆիլդի, Սուլթ Մոլանի, Ստոկոլուն-օն-թէզլի, Ստրալֆորդ-ուպոն-Ալոնի, Սիւզբերիի, Տամուոլթի, Տրուօրի, Ուստերֆորդի, Ուիլտընի, Ուինչեստարի և Ուինչգորի մայօրները, Գլասգուի, Դունգիի և Էլզինի աւագ լորդերը, Երէչինի Կրոմարտիի, Կրայլի, Արգլիի, Դորնոկի, Դուլ Հարտնի, Դիզաքտի, Դունֆրլայնի, Փորֆարի, Համիլտընի, Ջէդբուրգի, Ինվէրարիի, Կիրկուալի, Կիլմարնոկի, Լաուդերի, Լայթի Նորթ Բերուիկի, Պիրլէսի, Տէնի ու Սէնտ Անդրիւսի կրօվոստները. Արմազի, Բանգորի, Կէնսէրբերիի, Կլոյնի, Դէրրիի, Դուրհամի, Էլիի, Փէրնսի, Հէրֆորդի, Լիմէրիկի, Լինկոլնի, Մանչեստրի, Օտորի, Տուէմի, Ուէլսի և Ուիչեստարի աւագ երէնները. Պարլամէնտի ազատամիտ անդամներից աւելի քան հարիւր հոգի. Պարլ. անդ. միստր Ջոն Այրդ, Պարլ. անդ. սեօր Չայլդ Դէլրայլ, Պարլ. անդ. միստր Հ. Պլենկէտ. Ման Ֆելդ Կոլլէջի պրինսիպէլ Ֆէրբայընը—Օքսֆորդ, Ուինչեստարի վերատեսուէ գերապ. Ա. Ֆէրոնը, Հովարդէնի ըէկտոր գերապ. Ստէֆըն Գլադստընը: Բաժանուում էր մի տպած թերթ, ուր յիշատակած էին հազարից աւելի անգլիական և Նոնկոնֆորմիստ հոգևորականների անուններ, որոնք նմանապէս համակրութեան նամակներ էին առաքած:

Կարգադրիչ կոմիտէի անդամ միստր Ատկինն ասաց, թէ համակրութիւն և շնորհալուծիւն յայտնող նամակներ ստացած են նաև սեօր Ջոն Սիմոնից (հաւանութիւն) և Եւրոպայի ու Ասիայի բազմաթիւ հայ դաղութներից: Հետևեալ նամակն ուղարկել է միստր Գլադստընը: (Սլացուցիչ և երկարատև ծափահարութիւններ):

Գլադստոնի նամակի ընթերցումը

Հովարդէն Կէտոլ, Չիստր, 5 մալիսի, 1895 թ.

Իմ սիրելի Արգայլի ղուքս,—Յուսով եմ, որ այս միտինգը, որին ղուք արիաբար յանձն էք առել նախագահելու, դրա հաւաքելու և պատճառ աւող մեծակշիռ դատին համապատասխան արդիւնք կ'ունենայ:

Իմ փափագս է ամբողջ աշխարհի խաղաղութիւն և անդորութիւն, և մեծ վշտով եմ տեսնում այժմ,—երբ Հայաստանում

գործած խայտառակ չարիքները այլ ևս չի կարելի կասկածելի համարել, — որ Քիւրքիայի անմիտ կառավարութիւնը ասես թէ վճռել է ամեն բան անել, ինչ որ կարող է իւր իսկ կործանումը յառաջ բերելու:

Պէտք էր յուսալ, թէ Բոլղարիայի 1876 թ. նախճիրները՝ այն ծանրակշիռ հետեանքներով հանդերձ, որ նոքա ունեցան Քիւրքիայի համար, կ'արգելէին նրան վերակրկնել այն և զույգ ասելի վատթար ոճիրները Հայաստանում:

Ամբողջ Եւրոպայի պարտքն է այլ ևս հաւատ չընծայել լոկ խօսքերին, այլ ազդու միջոցներով առաջն առնել այդ տեսակ զարհուրելի ոճիրների կրկնութեան: Այդ պարտքը կարծեմ պարզ է: Ես վստահ եմ, որ Մեծ Բրիտանիան իւր պարտքից յետ չի կանգնի, և հաւաստի եմ նմանապէս, թէ Ֆրանսիան և Ռուսաստանը նրան հզօրապէս կ'աջակցեն: Եթէ ուրիշ մեծ պետութիւնները ձեռնպահ մնան, իրանց միայն պէտք կը լինի փոստալ:

Ձեռ ուզում ձանձրացնել ձեզ շատ խօսքերով, սակայն չեմ էլ կարող չարտայայտել իմ ջերմ համակրութիւնը և իմ յոյսը, որ, դուք բարոյական, իսկ եթէ ոչ՝ ուրիշ միջոցներ բանեցնելով հնարաւոր լինի արգելելու սուլթանին և նրա խորհրդականներին՝ նորից այդպիսի անարգ գործեր կատարել ասպագայում:

Մնամ, սիրելի դուքս, միշտ ձեր

Ու. Լ. Գլադստոն:

(Որոտագին ծափահարութիւններ):

Միտինգի Նախագահ Արգայի դքսի մեծ ծառը

ա. Գլադստոնի նամակի տեղում

Նախագահը, որին սիրով ընդունեցին, ասաց. — Գերապատիւ սրբազան հայրեր, իմ լորդեր, լէդիներ և ջէնտլմէններ — ստիպած եմ անձիս վերաբերեալ մի համառօտ բացատրութեամբ սկսել ասելիքս: Գեռ նոր ազատուած լինելով մի ծանր հիւանդութիւնից, այն էլ ոչ լիովին, ես իսպառ անկարող եմ երկար կառավարել այս բազմամարդ միտինգը, և մի քանի խոսք ասելուց յետոյ, որ անհրա-

ժեշտ եմ համարում ուղղել ձեզ, ստիպւած կը լինիմ յետ քաշ-
 ւել: Այսպիսի հանգամանքներում հարկաւ աւելի լաւ կը լինէր,
 որ ես նախադահի պաշտօն յանձն չառնէի. սակայն երբ այս միտինգի
 կարգադրիչները միաբերան օգտաւէտ գտան, որ յանձն առնեմ, ես
 սրբազան պարտք համարեցի հետեւել նոցա հրաւերին: (Հաւա-
 նու թիւն): Դուք լսեցիք միտոր Գլխադատոնի ինձ ուղղած նշա-
 նաւոր նամակը: (Հաւանու թիւն): Բաւական է ասել իմ կողմից,
 թէ ես այդ նամակի ամեն մի բառին համամիտ եմ: Միւսնոցն ժա-
 մանակ պարտաւոր եմ յայտնել պատկառելի միտինգիդ, թէ
 այդ նամակը գրւած է առանց որ և է յառաջակաջ բանակցութեան
 նրա և իմ միջև, թէ ես ընդունել եմ այս միտինգին նախադա-
 հելու պաշտօնը առանց որ և է բան յայտնելու նրան այդ մասին,
 և թէ ես ոչինչ չգիտէի նրա զգացմունքների վերաբերմամբ, բացի
 այն, ինչ որ քաջ գիտէի, նրան վաղուց ճանաչելով: (Լ. ս ե գ է ք,
 լ ս ե գ է ք): Ուստի երբ ես ասում եմ, թէ լիովին ձայնակցում են
 նրա նամակի ամեն մի բառին, գրանով ուզում եմ հաղորդել ձեզ,
 թէ նա արտայայտում է միւսնոցն համոզմունքը, ինչ որ ես ինքս
 կազմել եմ հայկական խնդրի քննութեան քայլ առ քայլ հետեւելիս:
 Սակայն, տիկիներ և պարոններ, միտոր Գլխադատոնի գրութիւնը
 պարունակում է իւր մէջ մի էական կէտ, որի մասին և կը ցանկայի
 խօսել այսօր: Նա ասում է, թէ ռամբողջ Եւրոպայի պարտաւո-
 րութիւնը բաւական պարզ է,—այդ է՝ շատանալ լոկ խօսքերով,
 այլ ազդու միջոցներով առաջն առնել զարհուրելի ոճիրների կրկ-
 նութեան: (Հաւանու թիւն): Եւրոպայի պարտքը բացայայտ է,
 ասում է նա: Այո, տիկիներ և պարոններ, բաւական բացայայտ է
 թւում ձեզ և ինձ, և բացայայտ անգլիական ազգի ահագին մեծա-
 մասնութեան: Ո՞վ կարող է կարգալ այս պատերի վրայ խոշոր տառերով
 գրւած խօսքերը ¹⁾ և չզգալ այդ պարտքը: (Լ. ս ե գ է ք, լ ս ե գ է ք):

¹⁾ Սրահի աջ կողմի պատի վրայ մի մեծ դրօշակ կար, որի վրայ
 խոշոր տառերով գրւած էր «Բերլինի դաշնագրի 61-րդ լօգւածը», խոկ բեմի
 առջև նոցն կերպ գրւած էր հետեւելը՝ «Հաշիւը պահանջում են իրանց
 հայրենիքի մէջ խաղաղութեամբ ապրելու իրաւունքը»:

Սակայն, այս երկրում կայ մի կուսակցութիւն, չստեմ կուսակցութիւն այլ կան բազմաթիւ մարդիկ, որոնք լաւ չգիտեն, թէ ի՞նչ է մեր երկրի պատասխանատուութիւնը տաճկաց պետութեան մէջ կատարուող անգթութեանց նկատմամբ, և ես եկել եմ այստեղ միայն տպաւորելու ձեր մտքի մէջ իմ այն խոր համոզմունքը, թէ մենք, այս երկրի մարդիկս, անգլխացիքս, մենք իբրև ազգ ուղղակի պատասխանատու ենք Քիւրքիայի վատթար վարչութեան համար: (Հաւանութիւն): Այո՛, տիկիւններ իմ և պարոններ, գիտեմ որ շատերը կ'ասեն. «Վա մի շատ խիստ ենթադրութիւն է: Ի՞նչ հեղինակութիւն ունիք դուք այդպիսի ենթադրութիւն անելու: Այո՛, ես հեղինակութիւն չունիմ բռնի բռն առմամբ, բացի Փակտերի հեղինակութիւնից, և ես գալիս եմ որպէս վկայ այդ Փակտերի,—գալիս եմ աւելի իբրև վկայ, քան փաստաբան:

բ. Ղրիմի պատերազմի նպատակը

Ես կանգնած եմ այս երեկոյ ձեր առջև, տիկիւններ և պարոններ, իբրև միակ վերջամնաց՝ իմ բարեկամ միտոր Գլադստոնի հետ—նա և ես ենք միայն Ղրիմի պատերազմին ձեռնամուխ եղող մինխտորութեան կաբինէտից երկու կենդանի մնացորդները—(հաւանութիւն):—Եւ ես ուզում եմ ուղղել այդ պատերազմի նպատակի մասին շատ տարածւած մի կարծիք: Շատերը հաւատացած են—և ես դեռ նորեքս կարդացի մեր պարբերական հանդէսներում մի քանի ուսումնական անձերի գրւածքներ, որոնք պնդում են, թէ մենք Ղրիմի պատերազմը ձեռնարկեցինք միայն թիւրքերին և թիւրքաց պետութիւնը պաշտպանելու համար: Այդ կը նշանակէ ամենևին չհասկանալ Ղրիմի պատերազմի նպատակը: Մեր նպատակը բնաւ թիւրքիան իբրև պետութիւն պաշտպանելը չէր: Մեր նպատակն էր պարտադիր անել Եւրոպայի համար, որ ինչ էլ լինի թիւրքայի ձախտաղիրը և կամ ապագան, —այդ ձախտաղիրը և այդ ապագան Եւրոպայի ձեռքում գտնւի, այլ ոչ թէ Խուսիայի ձեռքում: Այդ էր այն պարզ նպատակը, որի համար մենք մղեցինք Ղրիմի պատերազմը,—միակ նպատակը, որի համար անջնքան բրիտանական արիւն թափւեց և անջնքան բրիտանական գանձ սպառւեց: Բրիտանորութեան մէջ կային մի կամ երկու անդամներ—կար-

ծեօք միայն մի անդամ կար, և ոչ աւելի, և դա էր լորդ Պալմերստոնը, — որ հաւատացած էր, թէ Քիւրքիան կը վերածնուի Ես ինքս անձամբ ոչ մի վայրկեան այդպիսի հաւատ չեմ ունեցել: (Ասեցէք, լսեցէք): Ես միշտ զգացել եմ և ասել, թէ Սամնեան պետութեան մէջ ապականութեան այնպիսի խորարմատ պատճառներ կան, որ դոցա մէջտեղից բառնալու ջանք պնելը մի անոյցս բան կը լինէր: Այդ հանդամանքը կապ չունէր մեր առջև դրած ինզրի հետ: Մենք միաք չունէինք որոշել, թէ ի՞նչ կը լինի Քիւրքիայի ապագայ վիճակը, այլ մեր նպատակն էր այն սկզբունքը հաստատել, որ Քիւրքիայի ճակատագիրը բոլոր եւրոպական ազգերի ձեռքում լինի — (հաւանու թիւն) — և յատկապէս որ Բ. Իրան քրիստոնեայ հպատակների հովանաւորութիւնը միացեալ Եւրոպայի ձեռքում գտնուի, այլ ոչ թէ միայն Ռուսաստանի: (Հաւանու թիւն): Ես կը կարգամ ձեզ երեք համառօտ վաւերագիր, որոնք բացաջատ կերպով կ'ապացուցանեն իմ խօսքերը Արիմի պատերազմի նպատակի մասին: Ահա թէ ինչ էր ասում այն ժամանակեայ կառավարութեան զեկավար լորդ Աբերգինը. «Չնայելով շատերի նպատաւոր կարծիքին, դժար է հաւատալ Քիւրքիայի բարեփոխման: Իրաւ է, այս բոլորի ճնշման ներքոյ նա կ'արձակէ մի քանի բարեմիտ հրովարտակներ, բայց դոքա իսպառ անհոգութեան կը մատնուին, եթէ որ և է եւրոպական մինիստրի հսկողութեան տակ չդրուին: Քիւրքիայի ամբողջ յօրինուածքը գլխովին յոռի և տմարդի է: Չեմ կամենում չիշել Ս. Պետերբուրգում և կամ Վիեննայում հնարուած հեքիաթները, այլ հիմնուած եմ նոյն ինքն լորդ Սորազֆորդի և մեր յատուկ հիւպատոսների զեկուցումների վրայ, որոնք անօրէն հարստահարութեան և անգթութեան զարհուրելի պատկերներ են յառաջ բերում: Արդեօք կարելի է դրանից էլ աւելի պարզ լեզու բանեցնել: (Հաւանու թիւն): Այժմ ես մի ուրիշ բանագէտ հեղինակութիւն կը խօսեցնեմ, և դա է լորդ Ռոսսելը, որ այն միջոցին արտաքին գործոց մինիստր էր և պատերազմին վերաբերեալ բոլոր բանակցութիւնների գործադրող: Նա ասում է. «Լորդ Աբերգինի մինիստրութիւնը Քիւրքիայի անկախութիւնը փութով պաշտպանելիս՝ զգում է, որ Ռուսաստանի ջոկ միջամտութեանը դիմադրելու համար պարտաւոր է Բ. Իրան քրիստոնեայ

հպատակների ապահովութիւնը երաշխաւորող զբաւականներ ձեռք բերել, ուլքեր էլ լինէին այդ քրիստոնեաները—յունադաւան թէ կաթոլիկ, բողոքական թէ ազգով թիւրք նորադարձներ: (Հաւանութիւն): Գալիս եմ այժմ երկրորդ վկային, որ ինքներդ էլ կ'ասէք, թէ մի երեւելի վկայ է:

Մեծ իշխանը ¹⁾),—այդպէս եմ ուզում անւանել նրան,— որ այն ժամանակ ամենից աւելի դահին մերձաւոր և սիրելի անձն էր և ամեն բան արդարև կիրթ և փիլիսոփայական մտքով էր դիտում, մի նամակ գրեց ի նպատակ այն գաղափարի, թէ փոխանակ Ռուսաստանի հովանաւորութեան՝ մի եւրոպական հովանաւորութիւն պէտք է կարգել Տաճկաստանի բոլոր քրիստոնէական ազգերի վրայ. Վերոպական հովանաւորութիւն՝ փոխանակ ռուսականի: (Լսեցէք, լսեցէք): Ուրիշ քաղաածներ չեմ ուզում կարդալ: Սոքա էլ արդէն բաւական են աւագողցանելու մեր միտքը, թէ մենք լոկ մեր օգտի համար չյարուցինք Ղրիմի պատերազմը, այլ գլուխ բերելու համար մեր յանձն առած պարտքը, այն է՝ պարտքը պաշտպանելու թիւրքիայի քրիստոնեայ հպատակներին կեղեքումներից և հալածանքից: (Հաւանութիւն): Արդ պիտի խոստովանեմ, որ թէև այդ էր մեր նպատակը պատերազմը սկսելիս, սակայն երբոր հասանք խաղաղութեան, փոքր ինչ պարտազանց գանւեցանք: Մենք շատացանք այն ժամանակ Քուրքիայի լոկ խօսքերով ու խոստումներով, որ նա բնաւ չկատարեց: Պէտք է մտաբերել, որ Ղրիմի պատերազմին սկիզբ տուողը տաճկական կառավարութեան գործած այս կամ այն շարիքը չէր: Քուրքիան բոլորովին անմեղ էր այդ բանում: Պատերազմը ծագեց Սիրիայի քրիստոնեաներին վերաբերեալ վէճերից: Մենք միջամտելս եղանք և թոյլ չուէինք Ռուսաստանին տէր կանգնել նոցա վրայ, և մերժեցինք այն դաշինքը, որ Ռուսաստանի բազլի տակ պիտի դնէր նոցա: Այն ժամանակ եւրոպական ազգերի շարքն ընդունեցինք Քուրքիան՝ առանց որ և է զբաւական ստանալու թիւրքիայից, թէ նա մի խոհեմ ներքին վարչութիւն կը մտցնէ իւր սահմաններում: Ճշմարիտ է,—մեր պատասխանատու-

¹⁾ Անշուշտ ակնարկ Վիկտորիա թագուհու հանգուցեալ պրինց-ամուսին Ալբերտի վրայ:

Թիւնը չի ծագում որ և է դաշնագրի խօսքերից, այլ ծագում է այն գլխաւոր իրողութիւնից, որ մենք միջամուտ եղանք և փրկեցինք Քիւրքիան Ռուսաստանի ձեռքով պարտելու և կործանելու վտանգից: Քիւրքիայի նաւատորմի ջարդելուց յետոյ Քիւրքիան միանգամայն Ռուսաստանի ձեռքն էր ընկած: (Լսեցէք, լսեցէք): Մենք յանձն առինք մի պատասխանատուութիւն, որից խոյս տալ չենք կարող: (Բարձրաձայն հաւանութիւն): Նոյն իսկ եթէ մէջտեղը դաշնագրի ոչ մի տող էլ չլինէր, եթէ մի ակնարկ, մի խոստումն անգամ մեզ արած անգամ չլինէին, դարձեալ մեր պատասխանատուութիւնը ճիշտ միևնոյնը կը մնար: (Հաւանութիւն): Դա յառաջ է եկել այն դիրքից և ընթացքից, որ մենք բռնել էինք եւրոպական մեծ ճգնաժամին:

գ. 1876 թ.-ի սոսո-դաձկան պատերազմը

Գանք այժմ՝ 1876 թ. մեծ պատերազմին: Դրա պատճառը յայննապէս Տաճկաստանի գործած ոճիրներն էին: Բոլղարական զազանութիւնները զայրացրին Յւրոպան, Ռուսաստանը բնականաբար ոտքի ելաւ և Տաճկաստանի քրիստոնեաների պաշտպանի դերն ստանձնելով, պատերազմ յայնեց: Քիւրքիան արիաբար դիմադրելուց յետոյ պարտութիւն կրեց, Ռուսիան Կ. Պոլսի դռների առջև հարկադրեց Քիւրքերին ստորագրել Ս. Ստեփանոսի դաշինքը: Երաւ է, խորամանկ Քիւրքիան միայն Ռուսաստանի առջև պարտաւորեց հովանաւորել քրիստոնեաներին, և եթէ Ռուսաստանը չաջողէր իւր նպատակին հասնելու, նա մենակ իրաւունք կ'ունենար հովանաւորութիւն հաստատելու Քիւրքիայի վրայ և կը ձգտէր ձեռք բերել արևելքի ճոխ ու փառաւոր ժողովութիւնը: Այդ իսկ բողոքին յառաջ եկաւ—չստեմ յանիրաւի—անգլիական կառավարութիւնը և սասց. շուրջն յետ ունենալ այդ դաշինքը: Ճշմարիտ է, դու չաղթեցիր Քիւրքերին և կորզեցիր նոցա ձեռից դաշնագիրը, սակայն մենք չենք կամենում թոյլ տալ քեզ վայելել այն, այլ ուզում ենք խիլ այն քո ձեռքից և հարկադրել Քիւրքերին՝ մեզ բոլորիս տալ այն խոստումը, որ դու փափագում ես մենակ ինքդ ստանալ նորանից: Այստեղ մենք դարձեալ փրկեցինք Քիւրքիան և տէինք նրան ապրելու ժամանակ, և եթէ ոչ մի գրաւոր պարտականութիւն

էլ չլինէր, արդէն միայն այդ հանդումանքը վերստին մեզ վրայ մի հանդիսաւոր պարտք էր դնում պաշտպանելու տաճկաբնակ քրիստոնեաներին: (Հաւանութիւն): Այնուհետեւ մենք ծալեցինք մեր ձեռքերն ու նստանք: Թիւրքիան աւել էր իւր խոստումը:

Գ. Թիւրքիայի ստաճ խոստումները

Ինչպէս կատարեց նա իւր խոստումը: Թիւրքը ոչ մի ժամանակ իւր տաճ խօսքը չի պահում, և ես ցաւելով պիտի ասեմ, որ մենք էլ քրիստոնեաների վերաբերմամբ մեր պարտքը չկատարեցինք: (Լսեցէք, լսեցէք): Ես պիտի շեշտեմ մի կարևոր կէտ, այսինքն՝ որ մեր պատասխանատուութիւնը այլ ևս այն չէ, ինչ որ էր, այլ մեծապէս սաստկացել է: Երբ որ և է կառավարութիւն հաւատարիմ չէ մնում այդ տեսակ խոստումներին, այն ժամանակ նա հազարապատիկ վատթարացնում է գործերի վիճակը: (Լսեցէք, լսեցէք): Մի կողմից դուք յոյսեր էք տալիս տաճկաբնակ քրիստոնեաներին, թէ նոքա իրաւունք են ստացել ուրիշ ազգերից հովանաւորւած լինելու, որով նոքա փոքր թէ շատ խրոխտանում և զրգուում են թիւրքերի դէմ: Միւս կողմից՝ դուք բորբոքում էք թիւրքերի անհնարին ատելութիւնը իրանց քրիստոնեայ երկրացիների դէմ: Թիւրքերն տրամադրւած են ասել հայերին՝ Նոքա (եւրոպացիք) չեն խստնելի բանի մէջ: Ինչպատ առէք, որ թիւրքերը շատ ձարպիկ ազգ են: Նոքա զիտեն, թէ ինչ ասել է եւրոպացոց միջամտութիւնը: Լաւ գիտեն, որ միջազգային նախանձն էր, որ գրդեց եւրոպացոց միջամտել, և ասում են իրար. «Ինչ ուզում են թող խօսեն այդ արեւմտեան պետութիւնները, բայց նոքա չեն վստահանալ սապայել Օսմանեան անբուժիւնը: Նոքա իրար դուրս կը ջարդեն: Մենք գրինք Թիւրքիայի վրայ որոշ պարտքեր, և հազար անգամ վատացրինք քրիստոնեաների վիճակը: Արդ մեր բացարձակ պարտքն է ձեռնամուխ լինել իրական և գործնական հովանաւորութեան, որ միայն և եթ կարող է բաւարարութիւն տալ: Ես չեմ եկել այս գիշեր որ և է կշտամբական խօսք ասելու այս կամ այն կառավարութեան—ոչ էլ ներկայ կամ նախորդ կառավարութեան,—սակայն այս ինդրի առթիւ գրւած և իմ կարդացած բազմաթիւ յանդիմանիչ տեսարների մէջ,—գորանից

շատերը վերին աստիճանի խելացի և ազդու են, բոլորն էլ վաւերացւած հեղինակաւոր վկաների համոզիչ կարծիքներով, — ես դժուարնում եմ գտնել որ և է իրողութիւն, որ չարդարացւէր պատօնական դոկումէնտներով: Միակ բունը այդ տետրի մէջ, որ ստիպում է ինձ իմ ազգի փոխարէն ամաչել, այն է, որ արտաքին գործոց մինիստրութիւնը մի քանի տարիներից ի վեր սկսել է թագցնել այս խնդրին վերաբերեալ վկայութիւնները, — այսինքն դադարել է հրատարակել հիւպատոսների զեկուցագրերը: Այդ ընթացքը շատ բնական է Արտաքին գործոց մինիստրութեան կողմից, որովհետև արևելեան խնդիրը մի կողմար է թէ մեր և թէ Եւրոպայի ամեն մի արտաքին գործոց մինիստրութեան համար: Նոքա հարկաւ ջանադիր են չցուգել այդ խնդիրը: Միտոր Գլադստոնը իւր նամակում ասում է. «Իմ միակ փափագն է՝ խաղաղութիւն և անդորրութիւն տեսնել բովանդակ աշխարհումս, և ինձ թւում է, թէ Բրիտանիայի կառավարութեան բացարձակ պարտքն է ծանօթացնել անգլիական ազգը հարցին վերաբերեալ Ֆակտերի հետ (Մափահարութիւն): Բնց արէք պատուհանները, բացէք դռները, և թողէք որ լոյս ներս շողայ: (Հաւանութիւն): Ինչ գործ էլ անելու լինիք կամ չլինիք՝ թող ազգը գիտենայ, թէ ինչ է իւր անելիքը, որի համար նա ինքն է պատասխանատուն թէ անհատօրէն և թէ հաւաքօրէն:

Ե. Կարող էր Անգլիան այլ իւրոք գործել

Նօշափում եմ վերջին կէտը, և դա հարկաւորում է ինձ վերադառնալ այն կէտին, որտեղից որ սկսել էի: Միտոր Գլադստոնը և ես վերջին կենդանի մնացորդներն ենք այն Արիմեան մինիստրութեան — դրա անդամների թիւը կարծեօք տասնուհինգ էր այն միջոցին, բայց նոքա արդէն գնացել են վերջնական հաշիւ տալու, — հաշիւը այն գործի, որ անհրաժեշտ համարեցին կատարել Եւրոպայի մեծ ճգնաժամին: Ես սովոր եմ ստէպ աչքի անցնել անցեալը՝ տեսնելու համար, թէ արդեօք բանադրանքով կամ զղջումով պէտք է նայել մեր արարքի վրայ. — և կ'ասեմ, որ այն օրից ի վեր մեր դէմ յարուցւած մեղադրանքին հակառակ՝ ես չեմ կարող իմ արած քայլերիցս և ոչ մէկն ափսոսալ: (Հաւանութիւն): Ոմանք ասա-

ցին, թէ մենք կարող էինք Ղրիմի պատերազմի առաջն առնել, եթէ յետ կանչէինք լորդ Ստրադֆորդ օֆ Ուոլլիֆին, և կամ թէ պատերազմը կը խափանւէր, եթէ մենք այսինչ կամ այն ինչ բանը և կամ թէ մի ուրիշ բան անէինք: Այո, զիցուք թէ կարողանայինք պատերազմից խուսափել, բայց արդեօք ինչ միջոցով ու գնով: Մեզ չէր մնալ ուրիշ բան անել, բայց եթէ մի կողմ քաշւել և թոյլ տալ Ռուսաստանին յառաջ տանել իւր գործը, չաղթանակ ձեռք բերել և իւր բացառական իրաւունքը հաստատել Օսմանեան պետութեան ոստանի վրայ.— ի հարկէ այդ միջոցներով հնար կը լինէր պատերազմի առաջն առնել: Սակայն մենք չէինք կարող այդպէս ընթանալ: Անգլիական ազգը թոյլ չէր տալ մեզ այդպէս վարւելու: (Հաւանու թիւն): Այս երեկոյ ես պատիւ ունիմ խօսելու շատերի առջև, որոնք դեռ չէին էլ ծնւած քառասունհինգ տարի առաջ— շատերի առջև, որոնք դեռ մանուկ էին այն միջոցին, և գուցէ շատ քիչերը գտնւին այս սրահում, որոնք յիշելիս լինին մեծ դէպքի հանգամանքները: Այդ հանգամանքները տակաւին վառ են յիշողութեանս մէջ: (Հաւանու թիւն): Եւ ասելիքս այս է, տիկիներ և պարոններ, որ մենք դէպի պատերազմ չգրդեցինք մեր ազգը, այլ դա մեզ ստիպեց կուրի դուրս գալ: (Հաւանու թիւն): Անգլիան ոչ մի ժառանտի չի սկսել մի պատերազմ, որին ազգը այն աստիճան ջերմ համակրէր, և դա մեզ հողմահալած շարդի նման կը քշէր, եթէ փորձէինք զիմադրել նորան: (Հաւանու թիւն): Մեր պարտքն էր հնար եղածին չափ յետաձգել պատերազմը և ձեռք բերել Ռուսաստանից մի քանի զիջումներ, որպէս զինա արևելեան Եւրոպայի միակ ժառանգն և դէպքերի գերագոյն տնօրէնը չդառնար: Սակայն մենք չկարողացանք յորդորել նրան՝ յետ առնել լեզուի մի քանի դարձւածներ և յետս կոչել թիւրքիայից պահանջած դաշինքը, որով նա անշուշտ Արևելքի տէրը պիտի դառնար: Ոմանք կասեն. «Թողէք որ Ռուսիան տիրանայ Արևելքին»: Այդ սկզբունքին ես չեմ կարող հետևել, ես չեմ կարծում, որ անգլիական ազգը դորան համակրէ: (Հաւանու թիւն):

զ. Անշնական յեշտահայեր

Պատմեմ ձեզ մի մասնաւոր դէպք իմ կեանքից: Իմ պատուական բարեկամ Ջոն Բրայտը, որ Արիմի պատերազմին և դորա հիմքը կազմող քաղաքականութեան սակաւաթիւ հակաուկորդներին մէկն էր, մի օր ասած է լինում—Պարլամէնտում թէ ուրիշ տեղ չեմ յիշում, — թէ այն ժամանակէն կառավարութեան ղեկավար լորդ Աբերդինը շատ ցաւ է յայտնել նորան, որ ինքը կուսակից է եղել Արիմի պատերազմին: Անտաբակոյս Ջոն Բրայտի ասածը ճշմարիտ է. սակայն պատմեմ ձեզ, թէ ինչ պատահեց իմ և լորդ Աբերդինի միջև: Նրա մահւանից փոքր ինչ առաջ ևս ասացի նրան, «Իմ սիրելի լորդ Աբերդին, ես լիովին հասկանում եմ ձեր արտայայտած զգացմունքը, բայց և վստահանում եմ մի հարց առաջարկել ձեզ: Յետ նայելով մեր երկուսիս միասին արած գործերի վրայ, արդեօք կարո՞ղ էք ցոյց տալ զէթ մի քայլ, որ հնար ունենայինք այն միջոցին շանելու կամ ցոյց տալ մի բան, որ պէտք էր անել պատերազմի առաջն առնելու համար, և շարինք»: Լորդ Աբերդինը պատասխանեց. «Ոչ, չեմ կարող»: «Ուրեմն, իմ սիրելի լորդ Աբերդին», ասացի ես, «ձեր զգջումը կարելի է ակադեմիական անւանել, որ բոլորս էլ զգում ենք աւհառարակ պատերազմի սարսափները յիշելիս. բայց դժբա անխուսափելի էին մեր այն ժամանակէն պայմաններում: Եթէ չէք կարող մեր արածի մէջ որ և է սխալական քայլ ցոյց տալ, հետևաբար որքան էլ դուք ավստաք դորան, դարձեալ տեղիք չունիք ինքներդ ձեզ կշտամբելու»:

Ջոն Բրայտն այնպէս չէր զրել իւր հարցը լորդ Աբերդինի առջև, ինչպէս որ ես դրի կամ ուղղեցի. բայց լորդի պատասխանից երևում է, որ նա, ի սրտէ ցաւելով հանդերձ պատերազմը անհրաժեշտ անող հանգամանքների վրայ, ամենեկին առիթ չունէր ապաշաւելու իւր արած քայլը: Մեծ և դառն է իմ վիշտը, որ զգում եմ մտածելիս, թէ այս խնդրում այն ժամանակ ինձ հետ գործող բոլոր անձերը արդէն մեռած են և մեկնած: Յիշում եմ այն ժամանակը և ասում—եւ չեմ տեսնում, որ մենք արած լինէինք այդ միջոցին որևէ քայլ, որ կարող լինէինք չգործել, և հաստատած լինէինք որևէ սկզբունք, որ արդար և իրաւացի չլինէր (շա-

ւանու թիւն): Մտաբերում եմ զպինեպրակ բանաստեղծի սրտաշարժ խօսքերը—«Յիսուս տրտմագին չիշատակը, ծաղիկ հասակիս տարեգիրքը ձեռին բռնած»: Այն, ջէնսլմէններ, այդ տարեգրքում սիրով գրւած են շատ բաներ, որոնցից մենք զրկւել ենք, ակահաւոր անձեր, որոնց հետ միասին գործել եմ և որոնք չկան այլ ևս. բայց նոցա չիշատակը պանծալի է, և ես անարգած կը լինէի այդ սուրբ չիշատակը, եթէ կեանքիս վերջին րօպէին չչիշեցնէի անգլիական ազգին այն անագին պատասխանատու թիւնը, որ նա յանձն առաւ մեզ հետ միասին և ստիպեց մեզ՝ իւր վրայ դնել: (Մափահարու թիւններ):

Արգայի զուքսը, որի բծիչն եկել էր միտինգ զգուշացնելու նրան, իւր ճառն աւարտելուց փոքր ինչ յետոյ թողաւ դահլիճը ընդհանուր ծափահարութիւններ ստանալով, և նստադահի աթոռը բազմեց Ուէստմինստրի զուքսը:

(Վերջը չաջորդ Ռե-ում):

ՄՈՍԿԻԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

Ամեն հասարակութիւն, ամեն ժամանակ և ամեն երկրում նոր սերնդի վերայ դնում է իւր չառաջդիմութեան չոյսը. հինը իւր անելիքը արել է, թող նորը գալ և իւր բարիքը բերի հասարակութեան: Սա մի բացարձակ չոյս է, որ նոյնքան բնական է հասարակութեան համար՝ առանց գալիք սերնդի վերայ, որքան և, տիրուր ու մթին օրերից չետոյ սպասելը պաշտօն արեգակի՝ բնական է ամեն մի մարդու համար:

Բայց այդ չոյսը աւելի հիմնոված է մարդկութեան չատուկ լաւատեսական զգացմունքների վերայ, որ կարող են չուստիւր լինել, քան սառնասիրտ և անաչառ ուսումնասիրութեան վերայ, որ, թէև նոյնպէս սխալական է, այնու ամենայնիւ վերջինս աւելի շանսեր ունի արդարանալու, քան լոկ զգացմունքի վերայ հիմնուած չոյսը:

Ձեռնարկելով գրել այս չօղածը, ես կամենում եմ ներկայացնել հասարակութեան Մոսկուալի արդի հայ ուսանողութեան պատկերը, որքան ես կարողացել եմ հասկանալ ուսանողութեանս երկար տարիների ընթացքում, և ցոյց տալ, թէ ինչ կարելի է սպասել նորանից:

Ուսանողութեան նկարագիրը տալու համար ես հարկաւոր եմ համարում բաժանել նորանս երկու կարգի՝ գաղափարական և ոչ-գաղափարական: Ոչ-գաղափարական ասելով ես հասկանում եմ այնպիսի ուսանողներ, որոնք չունին աւտրուխտական (այլասիրական) ձգտումներ, որոնք չեն կապում իրանց զգացմունքները հասարակական զգացմունքների հետ և որոնք չեն որոնում իրանց շահերը համայնական շահերի մէջ: Ուրեմն հակառակ կարգի ուսանողները կը լինեն գաղափարական:

Ես կը սկսեմ նկարագրութիւնս ոչ-գաղափարական ուսանողներից, բաժանելով նրանց երկու տիպի:

Առաջին տիպի ուսանողի համար բարձրագոյն զպրօցը մի հիմնարկութիւն է, որ տալիս է լայն միջոց. ձեռք բերելու հասարակական որոյ դիրք իւր արտօնութիւններով, իսկ ուսանողական զգեստը—մի հագուստ,

որ պիտի զարդարէ նրա մարմինը: Բարձրաքաչ ուսումը չէ զարգացնում նրա ինկը և չէ ազնւացնում նրա հոգին: Նա կարեւորութիւն չէ զգում լսել դասախօսութիւններ, կարդալ գրքեր, լրագիրներ: Նա հարցասիրութիւնից զուրկ է: Այլ տիպի ուսանողին դուք չաճախ կը պատահէք զիմասկահանդէսներում, նւագահանդէսներում, պարերկոյթներում—ուսանողական տօնազոյստով, թուրը կողքին, սպիտակ ձեռնոցներով, մաքուր, սրած, օժւած, մէջքը ուղիղ, զուխը բարձր, ժպիտը երեսին: Ինչ է անում նա տանը: Տանը առհասարակ նա չէ նստում: Նա և իւր ընկերները հաւաքում են մի տեղ թուղթ խաղալու. կամ գնում են մի ընտանիք պարելու և ուրախ ժամանակ անցկացնելու: Նա հայերէն չգիտէ. խօսում է ռուսերէն, կամ վրացերէն, փոքր ինչ գիտէ և ֆրանսերէն: Ոչ մի հասարակական գործ կամ խնդիր նրան չէ հետաքրքրում՝ լինի դա հալկական, թէ ալլազգի: Դէպի կանանց նա վերաբերում է Գոն-ժուանի տեսակէտից: Այս տիպի ուսանողներ շատ են պատահում և ալլազգի ուսանողների մէջ: Այս տեսակի ուսանողների ամենամեծ կոնտինգենտը կազմում են հարուստ և իրաւաքանական բաժնի ուսանողներ: Նա բնազդամբ ընտրել է անպիսի մասնագիտութիւն, որը պահանջում է ուժերի ամենաքիչ գործադրութիւն: Դեռ զիմնագիտում դրա պարապմունքները թեթեւացնում էր ռեպետիտորը, այնպէս որ նա սովոր չէ մեծ աշխատանքի:

Ինչ կարող է սպասել դորանից հասարակութիւնը: Նա ապրել է իւր համար, ապրում է իւր համար և ապրելու է իւր համար: Նրա ներկան ապահովում է հօր կարողութիւնը, իսկ ապագան զարձեալ հօր կարողութիւնը պիւս պրոտեկցիան: Մարգարէ չպէտքէ լինել դրա գալիք օրերը նախատեսնելու համար՝ բարձր պաշտօն և հարուստ հարանացու:

Նրկրորդ տիպի ուսանողները կազմում են ուսանողութեան ամենամեծ մասը:

Նա բարեխղճաբար չաճախում է իւր դասախօսութիւնները, կատարում է գործնական պարապմունքները: Տանը նույնպէս նա զբաղւած է իւր գործերով: Առհասարակ նա կատարում է միաջն աշխ, ինչ որ պահանջում է նորանից համալսարանում և ինչ որ նա ստիպւած է անել իւր հանգամանքների շնորհիւ—գասեր օտալ, արտագրել և ալլն:

Նրբեմն նա, բացի իւր անմիջական պարապմունքներից, զբաղւում է ուրիշ գործերով, կարդում է գրքեր, հետաքրքրւում է աշխ խնդիրներով, ինչ խնդիրներով հետաքրքրւում են նրա շրջապատող ընկերները: Բայց այդ հետաքրքրութիւնը չարատես չէ. նա շարունակում է, քանի որ նա այդ շրջանումն է, և ընդհատում է, երբ նա դուրս է գալիս այդ շրջանից: Նա անտարբեր է դէպի հասարակական հարցերը և ենթարկւած է մթնոլորդի ազդեցութեան: Նա թեթեւ կերպով կը հետաքրքրէ և հասարակական հարցերով, քանի որ ուսանող է և ընդհանուր ուսանողական մթնո-

լորդը համապատասխան է, բայց, հենց որ հեռացաւ ուսանողական կեանքից՝ կենսական հոգսերը մոռացնել են տալիս ընդհանուր խնդիրները և նա շարունակում է պարապել իւր անմիջական ցործերով: Նա հայերէն գիտէ, եթէ հալախօս գաւառից է, և խօսում է ոչ թէ գրականական լիզումով, այլ իւր ծննդավայրի բառբառով, հայերէն չգիտէ, եթէ ոչ-հալախօս գաւառից է. կամ եթէ Թիֆլիզեցի է՝ խօսում է վրացերէն, կամ ռուսերէն: Նա ուսանող ժամանակ աչքի չէ ընկնում, աչքի չէ ընկնում և կեանքի մէջ:

Հասարակութեան մէջ աչք տիպի ուսանողի նշանակութիւնը սահմանափակուում է միմիայն նրա բարձրագոյն կրթութեամբ: Եթէ չաչտնի բարձրութեան վերաջ պահած քարը թաքուն ուժ է, որ կարող է փոխել շարժական ուժի, երբ լուսատուութիւնը մի բացարձակ ուժ է տգիտութեան հետ համեմատած, —բարձրագոյն կրթութիւն ստացած անհատն էլ մի անշարժ ուժ է (պոտէնցիական էներգիա), որ բարեպատեհ հանգամանքներում կարող է վերլուծւել գործադրւող ուժի (կենդանի կամ կլինետիկական էներգիա): Այդ տիպի անհատի հասարակական դերը կարող է համեմատւել անշարժ սեփականութեան հետ. տունը, եթէ բնակիչ ունի, օգուտ բերում է իւր տիրոջ, հակառակ դէպքում նա անօգուտ է:

Ուսանողութեան գաղափարական մասը կազմում է այն բաժինը, որը գոյն է տալիս չաչտնի ժամանակի ամբողջ ուսանողութեան:

Նա ըմբռնում է իւր մէջ ժամանակի ոգին. նա ցաւում է այն ցաւերով, ինչ ցաւերով ցաւում է ժամանակակից հասարակութիւնը, նրա ուրախութիւններն էլ աչք հասարակութեան ուրախութիւններն են: Նա ամենայն բարեխղճութեամբ պարապում է իւր մասնագիտութեամբ՝ թէ համալսարանում, չաճախելով դասախօսութիւնները և գործնական պարամունքները, թէ տանը կարդալով իւր մասնագիտութեանը վերաբերեալ գրքեր: Բայց մասնագիտութիւնը արգելք չէ լինում նրան հետաքրքրւել և ժամանակակից հայցերով և, ըստ կարելոյն, հետեւել նրանց ընթացքին և վարդացմանը:

Հասարակական ամեն մի խնդիր արձագանք է գտնում նրա մէջ և աչքտեղ ստանում է իւր լուծումը: Նա մտնում է կեանքի մէջ արդէն չաչտնի չափով ծանօթ լինելով ժամանակակից հարցերի հետ, որովհետև նա հետեւել է նրանց դեռ ուսանողութեան ժամանակ:

Ուսանողութեան այս մասի մէջ էլ աչքի է ընկնում երկու տիպ մէկը հալախօս, միւսը ոչ-հալախօս:

Երկրորդը ծանօթանում է հաշիական կեանքի և նորան ալեկոծող հարցերի հետ ուսու պարբերական հրատարակութիւններից և բերանացի պատմութիւններից, հետևաբար նրա պաշարը այս բանում շատ սահմանափակ է. մինչդեռ առաջինը, միջոց ունենալով տեղեկանալ անմիջական աղբիւրներից, հմուտ է հաշիական կեանքին վերաբերեալ հարցերում:

Հաչերէն չիմացողները, թէև զգում են լեզւի կարեւորութիւնը, աչնու-
ամենաչնիւ աչ զգացմունքը աչն. քան ուժեղ չէ որ ստիպէ նրանց սովո-
րել լեզուն: Նրանք մանկութիւնից չեն սովորել հաչերէնը, որովհետև
նրանց ընտանիքում խօսել են ուսերեն, կամ վրացերէն: Հաչոց ուսում-
նարաններում, կամ Լազարեան ձեմարանում չեն եղել: Գիմնազիւնները
և ուսումնական ուսումնարանները, լաչոնի բան է, նաչնպէս չէին կարող
սովորցնել նրանց մաչրենի լեզուն: Ուրեմն մնում է որ սեպհական ինի-
ցիատիւնով լրացնի աչ պակասը: Թէև տարէցտարի աւելանում է հաչա-
խօս ուսանողների թիւը, աչնուամենաչնիւ հաչերէն չիմացողները կազ-
մում են ահապին մեծամասնութիւն: Ցանկալի է որ ուսանողները օգուէին
ուսանողական ազատ ժամանակից, վաղօրօք սովորէին մաչրենի լեզուն և
աչնպէս մտնէին կեանքի մէջ: Հաչերէն չիմանալը մի աչնպիսի թերու-
թիւն է, որ պատել չէ կարող բերել ոչ մի ուսանողի, որը չաւակնութիւն
ունի գործելու իւր հասարակութեան շրջանում: Հաչերէն չիմանալով ճա-
կապում է իւր ձեռները հաչ հասարակութեան համար: Եթէ բանաստեղծը
իւր ժամանակ իրաւունք ունէր բացականչելու:

«Ո՞վ է հաչը, մի՞թէ նա է որ խօսում է հաչ լեզուով», աչժմ, ամե-
նաչն իրաւամբ, աչ տողը կարելի է փոխել աչս ձեռով՝

«Նա է հաչը որ խօսում է հաչ լեզուով»:

Վերջին երկու աւայերը («հաչախօս» և «ոչ-հաչախօս») կազմում են
ուսանողութեան աչն տարրը, որ ազգում է անտարբեր մասի վերաչ և
աչնպիսով, դեռ ուսանող ժամանակ, կատարում է ներգործական գեր. մշտ-
նելով կեանքի մէջ, աչս տարրը իւր հետ մտցնում է նոր հոսանք, և, միա-
նալով գոյութիւն ունեցող ոչժերի հետ, զօրեղացնում է նրանց: Աչս տարրն
է, որ անդամ է դառնում Քարեղործական ընկերութեան, Հրատարակ-
չական ընկերութեան, Մարդասիրական ընկերութեան, և մեր խղճուկ
հասարակական աչ հիմնարկութիւնների: Եւ վերջապէս աչս տարրն է որ
դուրս է գալիս դպրոցական և գրականական ասպարիզում: Ենքն ըստ ին-
քեան հասկանալի է, որ աչս տարրի մէջ հաչերէն իմացողներին պատկա-
նում է ամենապատուաւոր տեղը:

Ընդհանուր հաչեացք գցելով Մոսկւաչի ամբողջ հաչ ուսանողութեան
վերաչ, կարելի է տեսնել, որ մեծամասնութիւնը չգիտէ հաչերէն, անտար-
բեր է դէպի հասարակական կեանքը. բաչց կաչ մի տարր, որ մեծ հետա-
քքրութեամբ հետեւելով հաչական կեանքին, պատրաստում է, բարձրա-
ձաչն կրթութեամբ օժտած, մտնել կեանքի մէջ գործելու եւանդով լի:
Մնում է ցանկանալ որ մեր հասարակութեան կեանքի պայմանները չկա-
պին նորա ձեռները...

Աչստեղ ես աւելորդ չեմ համարում, բացի վերև չիշած պակասու-
թիւններից, մատնացողց անել Մոսկւաչի ամբողջ հաչ ուսանողութեան

չատուկ (չատ սակաւ բացառութեամբ) երկու թերութիւններ զերայ Առաջինը—նոր լեզուներ չիմանալը, որ թող չի տալիս ուսանողին աւելի հիմնաւոր կերպով պարագայի իւր մասնագիտութեամբ, իսկ ապագայում նւիրել իրան ուսումնական հետազոտութիւններին:

Նրկրորդը, եթէ այսպէս կարելի է ասել, բանաստեղծական ոգու բացակայութիւնը, որը առաւել եւս աչքի է ընկնում, երբ համեմատում ենք հալ ուսանողին ռուս ուսանողի հետ. վերջինս կարող է ոգևորւել, հրապուրւել, սիրել եւ աչլն, իսկ հալ ուսանողը զուրկ է այդ զգացմունքներից: Մասամբ դա համադրական չատկութիւն է, մասամբ, ես կարծում եմ, դա կախած է եւ նրանից, որ հալ ուսանողութեան մէջ չկալ իգական տարր՝ հալ կուրսիստուհիներ:

Վերջացնելով չօղւածս ես չեմ կարծում սորանով ամփոփած լինել աչն բոլորը, ինչ կարելի էր ասել Մոսկւայի հալ ուսանողութեան մասին. ինչ վերաբերում է տիպերին—վերեւ նկարագրած չորս տիպերն են աչքի ընկնողները, միւս ուսանողները փոքր ի շատէ մօտեցում են դրանց:

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅԻՑ

Վ. ՓՍՓԱԶԵԱՆԻ

III

Լոնդոն, 7 սեպտ. 1894 թ.

Տնտեսական կեանքի ընթացքը պարզում է մեր առջև մի շարք աջակիսի երևույթներ, որոնք լառաջանում են իրերի ոչփով, ճակատագրականապէս: Գրանցից մէկն էլ այն է, որ բոլոր փոքրիկ շահագործութիւնները, չկարողանալով դիմանալ մրցման, փշրելով մեծ կամ խմբական շահագործութիւններից, ոչնչանում են մի առ մի և տնտեսական ամբողջ ասպարէզը մնում է երկու տեսակ ինդուստրիայի ձեռքում—խոշոր կապիտալական և ասոսիացիաների: Ապագայում—և այլ ակններ է—խոշոր, հատ-հատ կապիտալական ինդուստրիաները իրենց կարգին շատ փոքր լինելով ասոսիացիական հաստատութիւնների առջև, մրցման դիմանալ չեն կարողանալու և իրենց կարգին փշրելու են և այդ մի շատ տարրական բնական երևույթի հիման վրալ—այն, որ մեծ մարմինները միշտ քարշում են դէպի իրենց փոքրերին, մեծ ուժերի առջև փոքրիկ ուժերը կորցնում են իրենց նշանակութիւնը:

Տնտեսական կեանքն ևս ենթարկւած է բնական, մեզ չաչտնի կամ դեռ ևս անչաչտ բնական որոշ օրէնքների: Մի թափանցող միտք, նկատող իմացականութիւն կարողանում է հեշտութեամբ նկատել թէ որպէս ճակատագրական կերպով իրերը չեն կարողանում խուսափել բնական օրէնքներից և որպէս տնտեսական կեանքն էլ հետևում է շատ տնտեսագէտներից գտնւած որոշ օրէնքների:

Փոքրիկ ինդուստրիան ձգտում է ոչնչանալու. համրաբար է լինում այլ, բայց օրէնքը կատարում է և այդ շատ պարզ նկատելի է բոլոր մեծ քաղաքներում: Անկախ փոքրիկ գործերը ընկճւում են մեծ ձեռնարկութիւնների առջև, և այն հարիւրաւոր անձինք, որոնք երէկ առանձին առանձին տէրեր էին իրենց գործերին, այսօր ստիպւած են մի ընդհանուր

պատրոնի, կապիտալիստի գործաւորը լինել, մի կապիտալիստի, որը իր, ով գիտէ ինչ միջոցով ձեռք բերած կապիտալովը, մրցման մէջ է մտնում և մի հարւածով ճզմում է բոլոր փոքրիկ շրջապատող գործերը:

Այս երևութիւնը արնքան շեշտած կերպով կատարւում է եւրոպական մանաւանդ մեծ քաղաքներում և արնքան զօրեղ ընթացք է ստացել արդէն, որ ոչ մի ոչոք ալ ևս ընդունակ չէ նրա ընթացքը կասեցնելու: Վնասակար սպաղալ է պատրաստում ալը ընթացքը կամ օգտակար ընկերական կազմակերպութեան հասցնում—դա մի ալ հարց է: Կալ շկոլա, որ սնտեսական ալը ընթացքը խիստ վնասակար է գտնում և ամեն ջանք ի գործ է դնում փոքրիկ ինդուստրիան զարգացնելու, բայց օրէնքը կատարւում է, կեդրոնացումը լինում է, և մեծ կապիտալները կլանում են բոլոր փոքրիկներին բնական օրէնքով:

Ով մի անգամ կը տեսնի Լոնդոնի Ուայթլէյի (Whiteley) մեծ մագազինը, նա ալ ևս ոչ մի բոլոր չի տատանելի մտածելու, որ կապիտալի այս աստիճան կետրոնացումը մի անձի ձեռք և հազարաւոր հպատակ գործողների ալ քանակութիւնը հանգելու է անշուշտ մի անպիսի վերջաւորութեան, որպիսին վիճակւած է:

Երևակալեցէք մի անգամ, որ ալը հսկաչական մագազինը, որ աւելի քան մի քանի տասնեակ միլիոնի արժողութիւն ունի, պատկանում է մի միալն մի անձի և ալը միակ անձի ձեռքի տակ գործում են 6.000 գործաւորներ, որոնք ընտանիք ունին և ալըպէս չուրջ 30.000 հոգի ¹⁾ կախումն ունին ալը միակ անձից:

Ուայթլէյի ալը մագազինը չորս չարկանի մի ահագին տարածութեամբ կղզիացած շէնք է արտաքին կերպով չքեղ: Երևում են զբոյց միմիալն ներքին չարկի վաճառները, որոնք կոկիկ կերպով ի ցոյց են դրւած ապակիների ետևում: Ալըտեղ կարելի է առաջին հաջեացքով տեսնել ստամբքի վերաբերեալ ամեն տեսակ վաճառք, սկսած բանջարեղենից մինչև ամենանուրբ շաքարեղէններ:

Մագազինը բաժանւած է աւելի քան 30 սրահների, ամեն մէկ սրահը չափապարտ է մի բաժնի: Իւրաքանչիւր բաժնիը մօտ 24 մետր երկարութիւն, մեծ բարձրութիւն և 6—7 մետր լայնութիւն ունի: Ալը բոլոր տարածութիւնը բռնւած է կանոնաւորութեամբ և ալք գրաւելու կերպով դարսւած ապրանքներով: Ամեն ինչ, բացարձակապէս ամեն ինչ որ կարող է մարդկալին երևակալութիւնը ստեղծել և ինչ որ պէտք է մարդուն, կարելի է գտնել ալը շէնքի չորս չարկերի մէջ անպէս, որ պէտք չկալ մտնել ուրիշ տեղ: Հագուստ կամ ուսուսնական պարագալ, միս կամ պիս-

¹⁾ Աւելորդ չէր լինիլ աւելացնելը, որ ալը կախումը շատ մեղմացրած է և կամաչականութեան վրալ չի հիմնւած: Ծան. Խմբ.

նօ, զարդ կամ գիրք, կարասիք կամ խաղալիք, թռչուն և ծաղիկ, ուտե-
լիք և դագաղ—աչդ բոլորը, ամեն տեսակ, ամեն գոյնի և որականու-
թեան կարելի է գտնել աչդ շէնքի մէջ. մինչև իսկ ամուխ, վառելու փաշտ,
ամեն, ամեն ինչ, որովհետև ոչ որանների թիւը կազ և ոչ էլ ապրանքի
քանակութեան վերջ:

Բոլոր սրահները մաքուր, զարդարւած և չտակը թրծած աղիւսով
պատած. ելեքարական ճրագները միշտ վառ. իւրաքանչիւր սրահում մա-
քուր հագնւած ծառայող կանաչք և մարդիկ, որոնք քաղաքավարի են և
պատրաստակամ. իւրաքանչիւր սրահում կաստա՝ վճարելու համար, բայց
ձեզ նեղութիւն չտալու համար՝ կան մանուկներ չատկապէս, որոնք տա-
նում են ձեր փողը կաստային չանձնում և նրա ստացագիրը ձեզ բերում:
Բացի աչդ բոլորից, սրահների միջնավայրերում, շատ չարմար գիրքերով
կան երեք ռեստորաններ. աւելի ճիշտ ասել՝ մէկը թէլարան, միւսը ռես-
տորան և երրորդը նախաճաշելու սրահ:

Վեղները և ալցելուները բաւական կան, թէև մագազինի մեծու-
թեան հետ համեմատելով շատ սակաւ է թւում: Աւելի ճոխ և հարուստ
մասերն են՝ ուտելիքէնի և զարդալին բաժինները: Մարդ, երբ մի անգամ
մտաւ մագազինի մի ծալից, չէ կարողանում դուրս գալ առանց բոլորը
տեսնելու, բայց տեսնելու համար էլ ժամեր են պէտք. մեզնից մագազինի
ալցելութիւնը ամբողջ երեք ժամ խլեց, թէև մեր պտուղը արագ էր և
ալցելութիւնը շատ հարեանցի:

Առանց սոսաջնորդի և առանց հարց ու փորձ անելու բոլորովին
անհնար է ճանապարհ գտնել աչդ լալնատարած շէնքի մէջ. բոլոր սրահ-
ները իրարու հետ միացած են նրբանցքներով ու դռներով ալնպէս, որ
լարիւրինթոսի պէս մարդ եթէ մի անգամ ընկաւ մէջը՝ աչ ևս ուզած
սրահը գառնալ առանց հարցնելու—անկարող է, թէև փողոց դուրս գալու
համար կան շատ անցքեր:

Բիւրօն, ուր կազ մի բանկ, փոստային և տեղեգրափալին բաժիններ,
գտնւում է կենդրոնում. ալցտեղից սկսած սրահները ճիւղաւորւում են
ամեն ուղղութեամբ և ալցտեղ է, ուր կարելի է տեսնել իրեն Ուալթլէլին,
իսկ նրա երկու որդոցը՝ մագազինի աչ կամ աչն բաժնում պտտելիս և
հսկելիս:

Ուալթլէլին, ինչպէս ինքն է ասում, եղել է մի հասարակ գործակա-
տար մի մագազինում սաստիկ գործունեալ, ջանասէր և աչն և աչն և...
(«մաքուր») (!). աչ վերջին բառը աչնքան քիչ է սազ գալիս միլիօճների
տէր դարձած գործակատարին, որ մարդու ծիծաղն է գալիս: Արդեօք բա-
ւական չէ հաւատալ ալցալիս խաբեբալ սովետութիւններին, որ իր թէ
աշխատութիւնը, աչն էլ ալնութեամբ աշխատութիւնը, կարող է մի հա-
սարակ բանուորի հարստացնել, միլիօճների տէր դարձնել:

Ուայթլէլը պարծենում է որ իր քրտինքովն ու ազնիւ ճանապարհով է հասել աչն աստիճանի, որ 30,000 անձի շղթալի է և կապը իր ձեռքումն ունի, որ միլիոններ է հաւաքել իր «ազնիւ ու անխոնջ» աշխատութեամբը...

Ուայթլէլը ունի երկու որդիներ, որոնք իրենց հօր պէս գործունեայ են. ամբողջ օրը նրանք պտուղտ ևն գործում մագաղինի մէջ և հսկում գործերի վրայ:

Մագաղինի տէրը վաճառելու պտուղները, ծաղիկներն ու բանջարեղէնները, սկսած նոբարից մինչև Չերմանոցալիները, մատակարարում է իր 3 մեծ տարածութեամբ ֆերմաներից (աղարակ). աղտեղից է նա հանում խոտ իր ձիերի և կովերի համար. գիւղատնտեսական մի լաւ ֆէրմ ունի նա այդ հողերից մէկի վրայ. դրա համար էլ նրան չաջողում է ամեն ինչ կօժան ծախել և հետզհետէ խնդով բոլոր ահագին հեռաւորութեան վրայ սփռած մանր մագաղինները: Էփանութիւնը նկատում է նոյն իսկ դրսից բերած ապրանքների մէջ. նա մեծ քանակութեամբ բերելով զեղջեր է ունենում ամեն կողմից. օրինակ, երբ ես ուղեցի մի հնդկական բանան ուտել և հարցրի զինք՝ կիսովին էփան զտալ դրսի, ուրիշ նպարավաճառների ծախածից:

Եւ իսկապէս էլ, շատ տեղ չէք գտնիլ Ուայթլէլի մագաղինի ունեցածի պէս պտուղ, թարմ ծաղիկներ և ամեն տեսակ բանջարեղէն և աւելի էփան:

Նոյնը կարելի է ասել շատ ապրանքների համար, որովհետև Ուայթլէլը ունի ֆաբրիկներ և իր գործարաններից է արտադրում մագաղինի մէջ ծախու դրած շատ ապրանքներ: Ունի մեքենաների, պիանօի, գորգի, փայտեայ զարդերի, կարասիքի և այլն ֆաբրիկաներ, որոնք ընտիր գործեր են արտադրում:

Ինչպէս ասացի, սրահները աչնքան շատ են, որ մարդ չէ կարողանում մի առ մի չիչել: Կալ զեղատուն, տպարան-վիտագրատուն, վիրարութեական գործիքների հարուստ բաժին, հանքալին ջրերի, փուռեր հացերի բիսկիտների համար, ֆոտոգրաֆիա, ուր ձեր պատկերն են հանում և ուր մի սիրուն օրիորդ զբաղւած է ուէտուշ անելով. մագաղին և լեքտրականութեան, ուր մի մեծ լոքոմոտիւ շարժում է ելեքտրական լոյս մատակարարող մեքենաները:

Բայց ամենից հետաքրքիրն է ստորերկրեայ մասը իր բաժանմունքներով:

Ամէնից առաջ, աչքի խփող բաժանմունքն է գանձարանը, որի պատերը 2¹/₂ ոտք հաստութիւն ունին և պատած են 6 բթաչափ հաստութեամբ էլ երկաթով:

Գանձարանի կողքին են ախոռները 600 հատ շատ լաւ տեսակի ձի-

երով լիքը: Մի ուրիշ կողմում գործաւորների ճաշարանն է, որովհետև կէսօրին բոլոր գործաւորները, մի որոշ տուրք տալով, ճաշում են ալդտեղ: Կերակուրները պատրաստուած են գազով: Պիտի տեսնել մէկ ալն մեծամեծ կաթսաները, որոնք 6000 հոգու ճաշ են պատրաստում, պիտի կանգ առնել գետնախնձորի կճեպներից կազմած ալն դէզերի մօտ, որոնք զիզւել են ալդտեղ մի անգամ գործածւող գետնախնձորից միալն: Օղը ճաշարանում թէև տաք է, բայց վենտիլացիան (օդափոխութիւնը) շատ լաւ է. մի մեծ վենտիլատօր միշտ թարմ ու զով օդ է մատակարարում: Խոնաւութիւն չկալ և ճաշարանի կողքին գտնւող ամբարներում պահպանւում են մեծ քանակութեամբ ամենանուրբ ապրանքներ:

Ճածի վրայ 8 տոնօ (տակաւ) գարեջուր է բաժանւում գործաւորներին ամեն օր: Այդ բոլոր աշխատաւորները իրենց ընտանիքներով ապրում են մագազինից ոչ շատ հեռու—Ուալթլէյին պատկանող աներում: Ինչպէս տեսնում էք, մարդ գտնւում է մի շատ ճարպիկ անձի ներկաւութեանը, որ աշխատում է չթողնել որ իր մօտ աշխատողները, բացի իրենից, մի կոպէկի օգուտ տան ուրիշին ¹⁾: Կր մագազինից է տալիս նրանց պաշարեղէնը, հագուստը և իր բնակարաններումն է բնակեցնում նրանց: Ճաշից օգուտում է, օգուտում է հագուստից, օգուտում նաև բնակարանի վարձից: Գործաւորը ամբողջ էութեամբ նրան է պատկանում, գործում է նրա համար և առած վարձից մի կոպէկ իսկ Ուալթլէյից բացի՝ ոչ ոքի չի օգտեցնում. կապիտալը բացառապէս պտուտ է գործում Ուալթլէյի մի գրպանից դէպի միւսը:

Ուալթլէյը պարծենալով է ասում, որ 2500 գործաւորական ընտանիքներ ունի բնակեցրած իր սեփական տներում:

Մագազինի մասերը թւելու ժամանակ մոռացել եմ վիչելու անկողինների բաժինը, մանաւանդ փորագրութիւնը, ուր փորւում են ալն չքեղ պատկերները, որոնք տպւում են մագազինի չափաբարութիւնների ստւար հարտորների մէջ: Տպարանը մի անագին տարածութիւն ունի: Ամբողջ տարին նա դուրս է տալիս միալն մագազինի ապրանքները չափաբարող պատի համար 6 միլիօն չափաբարութիւններ:

Տպարանի կողքին է գտնւում նաև նկարչական բաժինը, ուր պատրաստուում են դեկորացիաներ թատրոնների համար:

Ուալթլէյը ունի 14 բաժանմունքներ Լոնդոնի մէջ և մի լալնածաւալ առևտուր Հնդկաստանի հետ: Ամեն առաւօտ քաղաքից և շրջականերից

¹⁾ Գործատէրերը բնակարաններ չիւնում են իրանց գործաւորների համար ոչ թէ ուրիշին «խէր» չտալու, ալ աւելի բարձր նպատակով, ուր թէև տիրոջ անձնական շահը բացակալ չէ՝ բայց և նա ալդքան ստոր աստիճանի վրայ չէ:

մօտ 500 տեսակ պատէրներ են գալիս զէպի մագաղին, իսկ ծննդեան օրերը մագաղինը ստանում է 1500 նամակ պատէրների:

Շէնքը կրակից ապահովեցրած է ամերիկական ալն ինքնաշարժ մեքենաներով, որոնք որոշ տաքութիւնից սկսում են իրենք իրենց գործել: Բացի դրանից մագաղինի կաուրի վրա էլ կալ մի մեծ ռեզերուար, որը լիքն է մօտ 260 տոնօ (տակառ) ջրով: Մի պահապան անդադար ման է գալիս շէնքի շուրջը:

Ահա այդ է հսկաչական ալն մագաղինը որ պակաս չէ մի քաղաքից և մեր դաւառական քաղաքներից շատերից աւելի արժողութիւն ունի:

Բարբը մի մարդու ձեռքում կեդրոնացած: Այդ կենդրոնացումը ճնշող վատ տպաւորութիւն է թողնում: Մարդ զգանքի հետ և մեծ վախ է զգում Ուաշթէլից, որովհետեւ այդ մարդը վերին ատոմսանի աշաւուրջ, ճարպիկ, աշխուժ և խորամանկ անձնաւորութիւն է:

Մենք գուրս եկանք մագաղինից ճիշտ կէսօրին և պիտի սուռն վերադառնալինք, երբ բարեկամներիցս մէկը զիտեց, որ հարկ էր նաև այցելել «Կօօպերատիւ» կոչւող ընկերական մեծ մագաղինին, տեսնելու համար թէ ընկերութեամբ կարողացել են նոյնը անել ինչ որ մի առանձին կապիտալիստ արել է:

Օմնիբուս նստեցինք. հարկ էր բաւական տեղ գնալ: Ալնքան լայնատարած ու անվերջ են երևում Լոնդոնի փողոցները, ալնքան մեծ է ալս վիթխարի քաղաքը, որ ժամեր են պէտք միայն մի փողոցի ծալին հասնելու համար: Աւստամբինաստէրեան եկեղեցու մօտ, մի քանի քալ հեռուից տարածւող Վիկտորիա ստրիտ կոչւած լայն ու շքեղ փողոցի ձախ կողմում է գտնուում ընկերակցական մագաղինը: Կա, առ աչքով, մի որոշ դասակարգի— գինւորականների—հաստատութիւն է և օգտակար իրաւունք ունին միմիայն անդամ-գինւորականները, նրանց որդիները, ընտանիքները, աչրիները:

Ինչ որ էլ լինէր, բաւական էր միայն ունենալ ալն Փակտը աչքի առջև, որ խմբական ուժով կարելի է ալնպէս մեծ ծաւալով գործեր բռնել, որ աղօտացնէր նոյն իսկ ամենամեծ կապիտալիստի շահագործութիւնները:

Մագաղինը Ուաշթէլինի պէս ոչ տարեկան 6,000,000 պատի լայնատարութիւն է գուրս տալիս, ոչ էլ մի ամբողջ տպարան—վիմագրատուն և փորագրատուն ունի՝ ռեկլամներ ու փքոն անոնաներ դուս տալու համար: Նա լուս գործում է և նրան աւելի են ճանաչում ու գնահատում քան ուրիշ մի որևէ մագաղին. նրա տպագրած թղթերն են միմիայն բլանկներ որոնք գործածւում են մագաղինի մէջ և մի երկու հասոտ գրքեր, որոնց մէջ մի առ մի նշանակւած են մագաղինում ծախու հանւած բոլոր ապրանքների գները:

Մագաղինը գտնուում է ընկերութեան ընդհ. ժողովից նշանակած

վարչական մի ժողովի հսկողութեան տակ, ալդ վարչութեան անդամները բոլորն էլ բարձր աստիճանի զինւորականներ են. նախագահը մի լորդ է: Մագազինից, ինչպէս ասացի, օգտուում են միմիայն զինւորական ծառայութեան մէջ եղող աստիճանաւորներ, բաց, ինչպէս Վետոյ մեզ ասաց կառավարիչը, կամաց կամաց ներս են սպրդում նաև դրսից զանազան տիրոջոսներով քաղաքական անձեր, բացի դրանից, թէև մագազինից առևտուր անող անձը պիտի անդամակցական թւահամար կամ գնելու առանձին իրաւունք ունենալ, շատ է պատահում որ անդամների տոմսակնէրով օգտուում են ուրիշ հազարաւոր ոչ-անդամ անձեր և ներս են մտնում զնելու:

Ընկերութիւնը ունի 70,000 անդամ, որոնք բաժին ունին եղած շահից: Ընկերութիւնը թէ սկզբում և թէ այժմ՝ դուրս է տալիս օրլիգացիաներ, որոնք սկզբում արժած լինելով 25 ֆրանկ (մի լիւրր ստերլինգ) այժմ արժում է 41 շիլլինգ—մտ 50 ֆրանկ: Վաճառքներից մնացած օգուտն էլ, ամեն տարի հաւասարապէս բաժանուում է օրլիգացիաների վրայ և իւրաքանչիւր օրլիգացիա ստանում է իր բաժինը, բացի այն որ իւրաքանչիւր օրլիգացիա տարեկան 5% տոկոսաբեր է: Ալդ 70,000 շահակից անդամներից—ակցիօներներից զատ, կան մեծ քանակութեամբ գնելու իրաւունք ունեցող անդամներ, որոնք առաջին տարին վճարում են տարեկան 5 շիլլինգ, իսկ Վետոյ պատրիները 2¹/₂-ական շիլլինգ: Գրանով նրանք իրաւունք են ստանում մագազինից ասլրանք գնելու: Ամեն ոք կը ցանկար ալդ արտօնութիւնն ունենալ, որովհետև Վետոյնում ոչ մի տեղ չէ կարելի գտնել ալնպէս ընտիր, ոչ կեղծած և էժան ասլրանք, որպէս ընկերակցական ալդ մագազինում: Օրինակ, ընկերս, պատահմամբ, գեղատան մէջ հարցրեց ուէզինէ մի տոպրակի գինը. ալդ տոպրակը ծառայում է կոմպլեմենտի համար. գտաւ որ եռասպատիկ աւելի էժան է քան դրա բոլոր գեղատներինը: Մանստանոյ որ մագազինում եղածները ամեն ինչ թարմ է և բնական. մարդ հաստատ զիտէ որ ոչ մի վատ բան չէ ունենում սլդ մագազինից, ինչ որ էլ լինէր նա—ուտելիք, հագնելիք և կամ դործիքներ:

Ալդ նրանից է, որ ընկերութիւնը ինքն է որ օգտուում է սուստուրից և երբէք էլ չի մտածում իր սպառած ասլրանքը վատացնել, ուստի և խնամք է տանում որ ասլրանքները էժան ձեռք բերեն և լաւը, ինչպէս որ մի տանուտէր խնամք է տանում իր տան մէջ մտնող պաշարիղէնի համար: Ասլրանքները չատկապէս պատերուում են մագազինի համար և շատերը ուղղակի բերում են բուն ֆաբրիկաներից, որպէս թէլը, որ չատուկ նաւերով ընկերութեան համար գալիս է Հնդկաստանից, թէլ, որից անագին քանակութեամբ է սպառւում Անգլիայում: Ալդպէս ուրեմն, ընկերակցական ալս մագազինը ներկայանում է իբր միտերանոց մի ամ-

բողջ ընտանիքի, որ բաղկացած է առ այժմ աւելի քան 70,000 բուն անդամներից, և որը պաշար, հագնելիք—կեանքի ամեն տեսակ պիտոյք է մատակարարում ուրիշ տասնեակ հազարների էլ: Օրական եղած վաճառքը հասնում է 6000 լիւրը ստերլինգի, այսինքն մօտ 150,000 ֆրանկի, որ ռուսաց փողով անում է 55,500 ռուբլի և այդ ահագին եկամուտը գալիս է միմիայն մի օրուայ, այդ հաշուով մագաղինը տարեկան մօտ 20,980,000 ռուբլու եկամուտ ունի: Մտնելիս, առաջին բանը որ մեր ուշադրութիւնը գրաւեց՝ այն էր, որ իւրաքանչիւր մասում մանաւանդ ուտելիքների բաժնի բազմաթիւ գործակատարների մի մասը զբաղւած էր գնողներին զոհացում տալով, իսկ միւս մասը մեքենայի արագութեամբ կապոցներ էր կապում զրսից ստացած պատւէրները լրացնելու համար:

Մագաղինի շէնքը զրսից աւելի շքեղ է քան Ուալթլէլինը. ոչինչ ՚ի ցոյց չէ դրւած զրսից. իսկ ներսից նա տասն անգամ աւելի պերճ, աւելի հարուստ է, մաքուր և ճաշակով զարդարւած ու ընտիր ապրանքներով լիքը. մարդ հաճուքով է կանդ առնում դիտելու ամեն ինչ. այնքան լիքն է մագաղինը, որ ոչ մի ազատ տեղ չէ մնացել աչքի հանգստութեան համար:

Երբ ներս մտանք անցնելով լիւրէի հագած մի շարք ծառաների միջով, դռնապանը հարցրեց մեր սոմսակը, առանց որի ներս մտնելու չէն թողնիլ ոչ ոքի: Բարեկամս լալանեց որ ես մի թերթի թղթակից եմ և կամենում էի մագաղինը այցելել: Գունապանը կանչեց կառավարչին: Սա մեզ շատ սիրալիր ընդունելութիւն արաւ և ոչ միայն թուլատրեց այցելելու, այլ և իր պատրաստակաճութիւնը լալանեց իմ ուզած տեղեկութիւնները տալու համար, քանի որ մագաղինը չունէր ոչ տեղեկատու, նկարագրող բրոշլերներ և ոչ էլ ռեկլամներ, որոնցով այնքան վխտում էին Ուալթլէ մագաղինում: Մտանք մագաղինի ներսը. ներքին չարկը ամբողջ 4—5 լալն ու մեծ սրահներ՝ ուտելիքների բաժինն է և մի անկիւնում՝ դեզատունը: Այդտեղ են դրւած այն զրքերը, որոնց մէջ կարելի է տեսնել իւրաքանչիւր ապրանքի զինը և բլանկներ՝ պատուէրներ դրելու. այդ չարկումն են գտնւում սպասելու սրահը, կանանց առանձնատեղեկը, կենդրոնական կաստան ու վարչութեան գրասենեակը, որ կից ունի բանկ, փոստալին և հեռագրական բաժիններ—այդ բոլորը շքեղապէս զարդարւած, բոլոր չարմարութիւններով օժտւած և ելեքտրական արեգակներով պալձառուսպէս լուսաւորւած: Մի բարձրացնող մեքենայ պատի մէջ սպասում է ձեր հրամանին՝ ձեզ մի վարկեանում ուղած չարկը հանելու համար: Մագաղինը բաղկացած է չորս մեծ չարկերից, չհաշւելով գետնաչարկի մթերանոցները, ճաշարանները և այլն և այլն:

Մենք ոտքով սկսեցինք բարձրանալ լալն սանդուխտներից. նրանց երկու կողքին պատերին գամած կամ կրթնեցրած՝ դրւած են ՚ի ցոյց այն-

